

Հասմիկ Սիմոնյան
Արմինե Դանիելյան

Հաշմանդամություն
ունեցող
50 կանայք,
որ փոխեցին աշխարհը

Տեքստ հարթակ
Երևան
2022

ՀՏԴ 929:316.344.6

ԳՄԴ 92+60.542

Ս 504

Սիմոնյան Հասմիկ, Դանիելյան Արմինե
Ս 504 Հաշմանդամություն ունեցող 50 կանայք, որ փոխեցին աշխարհը
/ Հ. Սիմոնյան, Ա. Դանիելյան.- Եր.: Ա և Մ, 2022.- 220 էջ:

Իրապարում էսսենների այս գիրքը «Կանայք, որ փոխեցին աշխարհը» մնարենաշարի հաջորդ հատորն է: Այն հանրամատչելի ձևով է, որ հաշմանդամություն ունեցող խիզախ ու պայքարող կանանց միջոցով կօգնի նաև ծանոթանալ հաշմանդամության փրկանքների հետ և թույլ կտա նոր հայացքով դիտարկել բարձրաձայնվող խնդիրները:

Նախարեսված է դպրոցահասակ և բարձր տարիքի ընթերցողների համար:

ՀՏԴ 929:316.344.6

ԳՄԴ 92+60.542

ISBN 978-9939-9275-1-0

© ԱևՄ ՍՊԸ 2022



Գիրքը սրելովել է «Պարզի սեռով պայմանավորված իսրրական ընտրության և հարակից վնասակար գործելակերպերի կանխարգելումը Հարավային Կովկասում. աջակցություն տարածաշրջանային, ազգային և հարավ-հարավ նախաձեռնություններին» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության (ԵՄ) և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) կողմից:

Բովանդակության համար պարտախանսարու է «ՏԵԲՍ ՀԱՐԹԱԿ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի ՄԱԲՀ-ի և ԵՄ-ի տեսակետները:

ԱՖանչելի Երր աշխարհը

«Աշխարհն այնքան նոր էր, որ շարք իրեր դեռ անուն չունեին, ու մարդիկ սրիպված էին մատուց ցույց տալ», - գրում էր Գարրիել Գարսիա Մարկեսը իր ամենահայտնի գրքում: Մենք ապրում ենք 21-րդ դարում, իսկ աշխարհը դեռ շարունակում է զարմացնելու աստիճան նորանալ, որովհետև մենք սովորում ենք բացել մեր աչքերը ու տեսնել մեր կողքին ապրող մարդկանց՝ մեր տեսքով ու պարկերով, մեզնից տարբեր ու մեզ շար նման: Արդյո՞ք մենք ճանաչում ենք իրար: Ինչպե՞ս ենք մենք մեզ պահում, երբ հանդիպում ենք հաշմանդամություն ունեցող մարդու: Նկատում ենք հաշմանդամությունը (եթե տեսանելի է), թե՛ չտեսնելու տալիս, օգնում ենք հարկ եղած դեպքում, թե՛ վարանում քայլ անել, որովհետև չգիտենք՝ ինչ անել ու ոնց:

Ինչպե՞ս վարվել, երբ հանդիպում ենք կուրություն ունեցողի, չլսող մարդու, անվասայլակով շարժվողի, մեկի, որ չունի վերջույթներ: Կարելի՞ է արդյոք նայել, իսկ տանի հարցեր, պարեն է արդյոք «ավելորդ» հերաքրքրվածությունը, գուցե հարկ է լուել, իսկ տեղին է խղճալը, իսկ կարեկցելը, գուցե պետք է միտիթարել կամ հույս հայտնել: Հարցերը շար ենք: Շար-շար: Ինչ է հաշմանդամությունը, ովքեր են հաշմանդամություն ունեցողները: Արդյո՞ք մենք ճանաչում ենք նրանց: Այս գիրքը «Կանայք, որ փոխեցին աշխարհը» մատենաշարի հերթական հատորն է և եկել է հարցեր բարձրաձայնելու և միասին պատասխաններ գտնելու:

Ինչո՞ւ հենց հիմա սա, երբ հաջորդիվ գրեթե պար-
րասպ էր «Հայ կանայք, որ փոխեցին աշխարհը» գիրքը:

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի մեր գործընկեր-
ների հետ քննարկման արդյունքում մենք հասկացանք,
որ երպարերագմական Հայաստանում հաշմանդամնոթ-
յուն ունեցողների թիվը մի քանի անգամ շարացել է: Բայց
ո՞չ միջին, ո՞չ էլ բարձրագույն կրթական հաստատություն-
ներում մեզ չեն տալիս տարրական գիրելիքներ, թե ինչ-
պես հարաբերվել մեր կողքին ապրող մարդկանց հետ:
Մինչդեռ գիրելիքն ու տեղեկությունները նախ և առաջ
արեղծվել ու արեղծվում են մարդու կյանքը հեշտացնե-
լու համար, դիմացինի սահմանները ճանաչելու և ինքը
քեզ սահմանելու համար: Բայց ունենք, ինչ ունենք: Քո-
ղարկված իրականություն, որ մեզնից թաքցնում է «ան-
հաճելի» բաները և ցուցանում միայն մեր աչքին սովորը:
Օրինակ, երբ խոսում են բյուրեղագետ Դորրթի Հոջքի-
նի մասին, որն առաջին անգլիացի կինն էր՝ Նոբելյան
մրցանակ ստացող, գրեթե ոչ ոք չի անդրադառնում այն
փաստին, որ Դորրթին հաշմանդամություն ուներ: Կեն-
սագրականներում հազար ու մի հուզիչ փաստ կգտնենք,
իսկ այ հաշմանդամության մասին՝ աղուր անդրադարձ,
որ եթե ուշքդ չպահես, չես էլ նկատի:

Արդյո՞ք հաշմանդամությունը դատարվածիո է:

Ոչ հեռավոր անցյալում հաշմանդամություն ունեցող
մարդկանց խորհուրդ էին տալիս մնալ սրվերում՝ փակ-
վելով տանը կամ բնակարանից դուրս չգալով, դրսում աչ-
քի չընկնել, հուշում էին, որ արժանապարհիվ կյանք եթե
չունես, փոխարենը կարող ես ընտրել էվթանագիան,

որոշ երկրներում ասում էին, որ եթե հաշմանդամությամբ ես ծնվել, ուրեմն նախորդ կյանքում մեղքերի քանակը գերազանցել ես, ու այս կյանքում այն պատժի փեսակ է՝ վերևներից հատուկ մեղաավորիդ համար որոշված:

Նրանք մոռանում էին, որ մեզանից ոչ ոք երաշխավորված չի ու բնավ չի կարող պնդել, որ վաղը հենց ինքը չի հայտնվի հաշմանդամություն ունեցողների աշխարհում: Մեքսիկացի նկարչուհի Ֆրիդա Կալոն որոշել էր բժիշկ դառնալ, բայց սարսափելի վթարը փոխում է նրա կյանքն, ու անկողնում պսոկած աղջկան հայրը հուշում է սկսել նկարել: Քսենիա Բեզուգլովան ասրում է Ռուսաստանում, նա զբաղվում էր գիրությամբ ու սպասում իր առաջնեկին, երբ բուսեաչափ փրկած ավերվածարը գլխիվայր է շրջում նրա ողջ կյանքը: Հնդիկ Արունիմա Մինհան ուներ այլ երազանքներ, բայց ծանրագույն վթարից հետո հիվանդասենյակում պսոկած երկու բան էր միայն ուզում՝ մի քիչ էլ նայել պատուհանից երևացող լեռներին ու երկրորդը, որն ավելի շար էր ուզում՝ մեռնել: Մայրն ու եղբայրն ասում են՝ մեռնելու ժամանակը չի, բարձրացիր: Ու Մինհան բառացի որոշում է բարձրանալ ու լեռներ մագլցել և դառնում է հաշմանդամություն ունեցող առաջին կին լեռնագնացն աշխարհում, որ արհեստական ուրքով էր բարձրացել:

Հաշմանդամությունը դարավճիռ չէ: Ահա թե ինչ են պնդում այս կանայք: Այն ոչ ոքի ընտրությունը չէ, բայց հաշմանդամությունը պատճառ չէ, որպեսզի հրաժարվես լիարժեք կյանքով ասրել, կրթություն սրանալ, սիրել և սիրվել, զրկված լինես երեխաներ ունենալու և սեփական երեխաներին դաստիարակելու իրավունքից: Այո, մեր

աշխարհները փարբեր են, ու սահմանագիծը ցափս է, որ հաշմանդամություն ունեցողները պարբերաբար սրիպված են հաղթահարել, և կա մյուս սահմանը, որ դրվում է խորական վերաբերմունքի պատճառով, անուշադրության, անրեղյակության ու անփարբերության:

Մեր գրքի հերոսուհիները ապրելու կամքի մասին են, կյանքը սիրելու, ամենօրյա փոքրիկ հաղթանակների և մարդկության պատմության մեծ նվաճումների: Երբ կասկադոր Քիթի Օ'նիլը իր եռանիվ մեքենայով արագության նոր ռեկորդ սահմանեց ու հոշակվեց «Աշխարհի ամենաարագ կինը», միջոցառման հովանավորները նրան արգելեցին մրցել փղամարդկանց հետ՝ սարսափելով, որ նա կարող է գերազանցել նաև փղամարդկանց գրանցած ռեկորդներն ու դառնալ աշխարհի ամենաարագ մարդը: Սարսափի պատճառն էլ հեղեղային էր՝ հաղթողի լուսանկարը հայտնվելու էր պատրաստների: Կազմակերպիչները կարծում էին, որ հաշմանդամություն ունեցողը չպետք է հայտնվի պատրաստների: Կորություն ու խլություն ունենալը բնավ չի խանգարում աֆրիկացի Հաբեն Գիրմային ավարտել Հարվարդի համալսարանն ու դառնալ չլսող ու չփեսնող առաջին շրջանավարտը: Ավստրալացի Անետ Բելլրոմանը չէր կարողանում քայլել, ու ծնողները որոշում են, թե քա՛ չի քայլում, թող ուրեմն լող փա մեր աղջիկը: Երանց մրքով չէր էլ անցնում, որ մի քանի փարի անց նա դառնալու է Ավստրալիայի չեմպիոն, հեղաշրջելու է աշխարհը լողագգեստներով և անելու է փասնյակ բաներ, որ այդ ժամանակ դեռ չփեսնված-չլաված էին:

Իսկ ինչ եզրույթներ պետք է օգտագործենք: Եթե ոլորտի որոշ մասնագետներ թույլատրելի գործածական են համարում, օրինակ, «կույր», «խուլ», «հաշմանդամ» եզրույթները, սպա նույն ոլորտի այլ մասնագետներ մերժում են՝ պնդելով, որ պետք է գործածել բացառապես «կուրություն ունեցող», «խլություն ունեցող», «հաշմանդամություն ունեցող» եզրերը, երրորդ խումբն առաջարկում է «չլսող», «չտեսնող», «հենաշարժողական խնդիրներ ունեցող» փարբերակը, մի այլ խումբ էլ առաջարկում է «լսողական/տեսողական հաշմանդամություն ունեցող» եզրույթը: Կամ, օրինակ, եթե որոշ ժամանակ առաջ «գաճաճ» եզրի փոխարեն ընդունելի, ոչ վիրավորական էր նաև «թզուկ» փարբերակը, սպա հիմա առաջարկում են «գաճաճություն ունեցող», «ցածրահասակ» փարբերակները, վերջինս իր հերթին փարբերակներից մասն առիթներ է ստեղծում, ու թեև հայերենը ճկուն լեզու է, բայց բոլորս հասկանում ենք՝ դեռ շարք անելիք կա ոլորտում:

Եվ մի վերջին հարց էլ՝ հաշմանդամությունը հիվանդությունն է, թե՞ պարիժ: Պատասխանում ենք կարճ՝ հաշմանդամությունը կենսափորձի բազմազանությունն է:

Մենք անուն ենք փայխա աշխարհին, որ այն շոշափելի դառնա, որ այն լինի տեսանելի: Այս կանայք սրիպված էին հաղթահարել ոչ միայն ցավը, այլև կարծրարիպային հայացքներն ու մրաժելակերպը: Կարինե Գրիգորյանի ծնողներին բժիշկներն առաջարկում էին թողնել նորածին դստերը հիվանդանոցում: Պրոֆեսոր Թեմիլ Գրանդինը մշտապես ուղղում էր. «Ես նախ և առաջ գիրնական եմ, հետո նոր առարիպ»: Խլություն ունեցող երաժիշտ Էվելին Գլենին հիշեցնում է լրագրող-

ներին, որ իր հետ ցանկալի է խոսեն երաժշտությունից, իսկ եթե այդչափ հետաքրքրված են խլությանը, կարող են հրավիրել սուդիոլոգ-բժշկի, իսկ ինքը երաժիշտ է:

Ու չմոռանանք ամենակարևորը՝ հաշմանդամություն ունեցող մարդիկ միշտ ավելի կարևոր են, քան իրենց հաշմանդամությունը: Տարբերենք սոսճնայինը, այսինքն՝ մարդուն, և, գուցե, սարերի երևից երևա իրապես սքանչելի նոր աշխարհը:



Հարիեթ Թաբմեն

1822-1913 թթ.

Հարիեթն աֆրոամերիկացի աղջիկ էր, որ ծնվել էր ստրկության մեջ: Ստրուկ էին նրա ծնողները, ստրուկ էին նրա եղբայրներն ու քույրերը, և սովորական էր, որ նա էլ պիտի լիներ ստրուկ:

Ստրուկներին անվանում էին «խոսող գործիք»: Նրանք աշխատում էին տանն ու դաշտերում, գործարաններում: Հարիեթի մայրն, օրինակ, խոհարար էր, հայրը՝ փայտահատ: Հինգ տարեկանից Հարիեթն էլ էր աշխատում: Ի դեպ, այդ ժամանակ նրա անունը դեռ Հարիեթ չէր, այլ Արամինթա:

Մինթին ստուգում էր առնետների թակարդները սառցե գետի ճահճուտներում: Փոքրիկ աղջիկը հաճախ էր հիվանդանում ու ջերմում: Վերակացուները որոշում են, որ ավելի լավ կլինի՝ Մինթին մնա տիրոջ տանն ու մաքրություն անի: Եթե տնային գործերը լավ չէր անում, տանտիրուհին նրան ծեծում էր: Մինթին նաև նորածին տղայի դայակն էր: Ամեն անգամ, երբ երեխան զարթնում էր ու լաց լինում, Մինթին մտրակի հարվածներ էր ստանում:

Մի անգամ իսկապես «մեղք» է գործում: Սեղանին շաքարաման էր դրված: Շաքարը շատ գրավիչ տեսք ուներ: Նա երբեք ոչ մի քաղցր բան բերանը չէր դրել ու չգիտեր՝ քաղցրը ինչ համ ունի: Տանտիրուհին շրջվել էր ու ամուսնու հետ էր վիճում, և Մինթին չզգաց, թե ինչպես մատները թաքուն ձգվեցին դեպի շաքարամանն ու մի կտոր շաքար հանեցին: Հաջորդ վայրկյանին տանտիրուհին շրջվեց, ու Մինթին զգաց կաշվե մահակի շրխկոցը դեմքին: Արդ-

յունքում նրան տեղափոխեցին դաշտ՝ աշխատելու ավելի ծանր պայմաններում:

Ստրկությունը փոխանցվում էր մորից երեխային: Եթե մայրն ազատ կին էր, երեխան էլ էր ծնվում ազատ: Բայց ստրուկները պատկանում էին իրենց տիրոջն ու համարվում տիրոջ գույքի մի մասը: Նրանք ոչ մի բանի իրավունք չունեին: Տերերը կարող էին նրանց աշխատեցնել սրտի ուզածի չափ, սոված պահել, ծեծել, վարվել նրանց հետ այնպես, ինչպես ուզում են: Ստրուկը տիրոջ սեփականությունն էր: Ցանկության դեպքում տերը կարող էր իր ստրուկին սպանել, դրա համար նա չէր պատժվի. ինքն էր ու իր ունեցվածքը, բայց եթե մեկ այլ մարդ ուրիշի ստրուկին սպաներ, դա համարվում էր ուրիշի ունեցվածքի հանդեպ ոտնձգություն և պատժելի էր օրենքով:

Եթե տերը թույլ տար, ստրուկը կարող էր ամուսնանալ, բայց տերն էր որոշում, թե քանի անգամ ու երբ ամուսնացած ստրուկները տեսակցեին միմյանց: Տերը կարող էր նաև ստրուկի երեխաներին վաճառել այլ տիրոջ: Այդպես, օրինակ, Արամիթայի քույրերին էին վաճառել՝ խլելով մոր գրկից, ու նրանք այլևս երբեք չէին կարողացել իրար տեսնել:

Մինթին հաճախ չէր դիմանում ու փախչում էր տնից, բայց սովը հետ էր բերում տուն, ուր նրան սպասում էին դաժան ծեծն ու մորակի նորանոր հարվածները:

Մի անգամ բարկացած վերակացուն երկաթե ծանր կշռաքարը նետում է ստրուկներից մեկի ուղղությամբ: Ստրուկը ճարպկորեն խույս է տալիս, իսկ կշռաքարը հարվածում է Արամիթային: Նա գլխի վնասվածք է ստանում՝ հիպերսոմնիա: Այս հիվանդությունը ցերեկային քնկոտությունն է, որի պատճառով մարդիկ չեն կարողանում արթնանալ, սուսկալի գլխացավեր են ունենում, ամբողջ օրն իրենց քնատ են զգում, նաև չեն կողմնորոշվում տարածքում և տեսիլքներ են ունենում՝ չհաշված մշտական գլխապտույտները:

Երբ տերը որոշում է Արամինթային վաճառել՝ համարելով նրան անպիտան ստրուկ, աղջիկը որոշում է փախչել Ամերիկայի հյուսիս, ուր սևամորթները կարող էին ազատ լինել: Այդ ժամանակ Մինթին ամուսնացած էր Ջոն Թաքսենի հետ: Ջոնի մայրն ազատ սևամորթ էր, հետևապես Ջոնն էլ էր ազատ, բայց, ի տարբերություն Արամինթայի, նա երբեք չէր մտածում փախուստների ու ազատության մասին, կնոջն էլ տարհամոզում էր՝ փորձելով խելքի բերել: Աղջիկը չի լսում, փախչում է ու հասնում Ֆիլադելֆիա: Նա փոխում է իր անունն ու մոր անունն ընտրում՝ Հարիեթ: Ազատությունն անսովոր էր ու հրաշալի, բայց նա մենակ էր այստեղ ու գիտեր, որ իր ընտանիքն ու ընկերները տառապում են հարավում: Հարիեթն արդեն ճանապարհը գիտեր և որոշում է հետ գնալ ու ընտանիքի անդամներին ևս օգնել փախչել: Նա ազատում է ծնողներին ու եղբայրներին, բայց որոշում է կանգ չառնել: Կատաղած տերերը նոր օրենք են ընդունում՝ փախուստի դիմաց ստրուկներին մահվան սպառնալիքով պատժող, բայց Հարիեթն անսասան էր. «Մահ կամ ազատություն: Մենք այլ ընտրություն չունենք, ու ես պայքարելու եմ մինչև վերջին շունչս»:

«Ստորգետնյա երկաթուղի». այդպես էր կոչվում փրկության ճանապարհը, որը Հարիեթն արդեն անգիր գիտեր: Իրականում այդ ճամփան ոչ ստորգետնյա էր, ոչ էլ գնացք կար՝ ստրուկներին տեղափոխող. դա ծածկագիր էր: Ծածկագիր էին նաև ստրուկների երգերը, որ երգում էին նրանք աշխատելու ընթացքում: Իսկ գլխամաշկին կպած աֆրոամերիկյան բարակ հյուսքերը ոչ թե գեղեցկության համար էին արվում, այլ փախուստի հնարամիտ քարտեզներն էին:

Հարիեթն օգնում է շուրջ երեք հարյուր ստրուկների փախչել ու ազատվել ստրկությունից, նաև օգնում է վերջիններիս աշխատանք գտնել: Երեսուրում նրան անվանում էին Մովսես, քանի որ հենց այդ աստվածաշնչյան մարգարեն էր հրեաներին ազատել ստրկությունից՝ օգնելով փախչել Եգիպտոսից: Հարիեթը հպարտորեն ասում

էր, որ երբեք ոչ մի ստրուկի ճանապարհին չի կորցրել ու կարողացել է անվնաս տեղափոխել բոլորին:

Հարիւրթի հետ ծանոթանալուց հետո ստրուկների դեմ պայքարի առաջնորդ Ջոն Բրատունը նրան մշտապես դիմում էր «Գեներալ Թաբմեն» և ասում էր. «Նա ինձ հանդիպած բոլոր տղամարդկանցից ավելի տղամարդ է»: Նրանք երկուսն էլ վստահ էին, որ միայն զինված դիմադրությունը կկարողանա իսպառ ազատագրել ստրկության ճիրաններում հայտնված ժողովրդին: Երբ Ջոնին կախաղան են բարձրացնում, Հարիւրթն ասում է՝ նա հասարակ մահկանացու չէր, այլ Աստված էր ապրում նրա մեջ, ու նրա մահը հավասար էր հարյուր մարդու ապրած կյանքի:

1861 թվականին Թաբմենը միանում է քաղաքացիական պայքարին, մտերմանում գեներալներից մեկի հետ և օգնում զորքին: Նրա շնորհիվ սևամորթ զինվորներն ակտիվորեն ներգրավվում են պայքարի մեջ: Հարիւրթի ջանքերի արդյունքում շուրջ յոթ հարյուր հիսուն սևամորթներ ազատություն են ձեռք բերում:

Նա դառնում է առաջին բուժքույրն ու սովորեցնում մյուս սևամորթ կանանց բուժքույրություն անել, զբաղվում է հետախուզությամբ, իսկ պատերազմի ավարտից հետո ամուսնանում է երկրորդ անգամ ու որդեգրում Գերթի անունով մի աղջկա:

Քանի որ պաշտոնապես գրանցված չէր որպես պատերազմի մասնակից, նա երբեք աշխատավարձ չի ստանում: Եվ միայն ամուսնու մահից հետո էր ստանում թոշակ՝ որպես պատերազմի մասնակցի այրի, ինչն էլ բաժանում է կարիքավորներին:

Հարիւրթն իր ձայնն էր բարձրացնում ոչ միայն սևամորթների համար, այլև մշտապես խոսում էր կանանց իրավունքներից: Նա միանում է սուֆրաժիստների պայքարին, հրապարակային ելույթներ ունենում ու պատմում սեփական կյանքից ու կրած

գրկանքներից: Նա դառնում է սոցիալական ռեֆորմների հիմնադիրն ԱՄՆ-ում:

1897 թվականին բրիտանական թագուհի Վիկտորյան հրավիրում է Թաբմենին Անգլիա՝ տոնելու միապետի տարեդարձը: Ֆինանսական դժվարությունները խոչընդոտում են Հարիեթի այցին, բայց թագուհին վերջինիս մետաքսե շալ է ուղարկում և արժաթե մեդալ: Թաբմենն այս նվերները պահում էր ակնածանքով ու աչքի լույսի պես:

«Գնամ՝ ձեզ համար տեղ պահեմ», - Հարիեթի վերջին խոսքերն էին:



Սառա Բեռնար

1844-1923 թթ.

1844 թվականի աշնանը Փարիզի լատինական թաղամասում կուրտիզանուհի Հուդիթ Բեռնարը լույս աշխարհ բերեց ծովագույն աչքերով մի չքնաղ մանկիկի: Նա բոլորից թաքուն էր պահում աղջնակի հոր անունը: Հայտնի էր միայն, որ հայրը շատ ազդեցիկ մեկն էր ու հետևողականորեն վճարում էր, որ դուստրը լավագույն կրթությունը ստանա: Սառան նախ՝ երիտասարդ օրիորդների դպրոց է հաճախում, ապա՝ կաթոլիկ դպրոց: Այստեղ նա հայտարարում է, որ ուզում է միանձնուհի դառնալ, բայց ի սարսափ մայրապետների, այնպիսի բաներ էր անում, որ ամաչում էին բարձրաձայնել: Օրինակ՝ երբ նրա սիրելի մոդեստ սասկեց, Սառան քրիստոնեական ծեսերով թաղում կազմակերպեց: Ինչ էր դա, եթե ոչ սրբապղծություն:

Իսկ մի անգամ, երբ Սառան ծանր հիվանդանում է, բժիշկներն ախտորոշում են դարի ամենածանր հիվանդությունը՝ թոքախտ: Սառան խնդրում է մորը կատարել իր վերջին երազանքը՝ գնել իր համար կարմիր փայտից դագաղ, որովհետև անտանելի վախենում էր, որ իրեն կհուղարկավորեն այլանդակ ինչ-որ բանի մեջ. նա դա չէր կարող թույլ տալ: Մայրը հոգոց է քաշում ու կատարում դստեր «երազանքը»: Բարեբախտաբար Սառան առողջանում է, իսկ այդ դագաղը դառնում է նրա սիրելի մահճակալ-ուղեկիցը ողջ կյանքում: Դագաղի մեջ պառկած՝ նա սիրում էր քնել ու իր դերերը սովորել, կարդալ ու լուսանկարվել, գրել ու էլի մի շարք բաներ անել, ինչն

անակնկալի էր բերում բոլորին ու երբեմն սարսափեցնում, բայց դա Սատա Բեռնարն էր:

Երբ հայրը մահանում է, մայրը հրավիրում է ընտանիքի ընկերներին ու բարեկամներին՝ քննարկելու միասին, թե ինչ մասնագիտություն պիտի ընտրի Սատան: «Միանձնուհի», - երկու ոտքը մի կոշիկի մեջ դրած՝ պնդում էր Սատան: «Իսկ գուցե դերասանուհի», - առաջարկում է մայրը, ինչից Սատան սարսափում է. նա երբեք թատրոնում չէր եղել, ուստի և մոր մտերիմ ընկերոջ՝ Ալեքսանդր Դյումայի հետ ուղևորվում է թատրոն: Փոքրիկ Բեռնարն առաջին անգամ էր ներկայացում դիտում ու այնպես է հուզվում, որ սկսում է բարձրաձայն հեկեկալ՝ խանգարելով հանդիսատեսին: «Ա՛խ, իմ փոքրիկ աստղիկ, - հուզված հառաչում է Դյուման, - դու ծնվել ես բեմի համար»:

Սատան ուսանում է Փարիզի կոնսերվատորիայում, մասնակցում «Կոմեդի Ֆրանսեզ» թատրոնի ներկայացումներին և մեկը մյուսի հետևից տապալում ներկայացումները: Երբ անհաջող առաջնախաղից հետո կուլիսներում ներողություն է խնդրում խաղընկերոջից, վերջինս ասում է. «Ես քեզ կներեմ, դու էլ քեզ կներես, բայց այ Ռասինը գերեզմանում դժվար թե քեզ ների»:

Սատան անչափ տաքարյուն էր: Երբ մի անգամ թատրոնի դոնապանը նրան անվանում է «փոքրիկ Բեռնար», կատաղում է ու անձրևանոցը կոտրում դոնապանի գլխին: Ավելի ուշ ներողություն է խնդրում, իսկ շնտ ավելի ուշ՝ քսան տարի անց, երբ դոնապանն անցնում է թոշակի, վերջինիս համար Նորմանդիայում շքեղ առանձնատուն է գնում:

Մի ուրիշ անգամ, երբ դերասանները հրավիրված էին պալատ՝ ասմունքելու, միջոցառմանը ներկա էր նաև Նապոլեոն Երրորդը, ու Սատան որոշում է Հյուգոյի այն բանաստեղծությունները կարդալ, որոնցում սուր քննադատության էր ենթարկվում կայսրը: Այլայլված Նապոլեոն Երրորդ կայսրը լքում է սրահը:

Նրան հաճախ քննադատում էին չափազանց նիհարության համար. «Ասես գեղեցիկ տափակ կմախք լինի,- ասում էին,- հո մարմին չէ, այլ ցախավել»: Բայց քայլ առ քայլ նրա շնորհալիությունը ծաղկում էր, ու նրբության տակ թաքնված հզոր էներգիան ու ամուր կամքը երևան էին գալիս հատկապես դրամատիկ դերերում: Նա խաղում էր և՛ կանանց դերեր, և՛ տղամարդկանց: Տրուբադոր Զանետոյի դերը գրավում է բոլորի սրտերը: Ներկայացումը բեմադրվում է շուրջ 150 անգամ, նրանց հրավիրում են պալատ՝ խաղալու կայսեր ու պալատականների համար: Ներկայացումից հետո կայսրը Բեռնարին ադամանդներով զարդարված թանկարժեք կրծքազարդ է ուղարկում:

Երկրպագուները նրան կոչում էին աստվածային Սառա, Ֆրանսիայում հանդես գալուց հետո նա գրավում է Եվրոպայի ու Ամերիկայի բեմերը և ճանաչվում աշխարհի՝ երբևիցե ապրած ամենահռչակավոր դերասանուհի: Նա շլացնում է ու փայլում: Մարկ Տվենն ասում էր. «Գոյություն ունի դերասանուհիների հինգ տեսակ՝ վատ դերասանուհիներ, անկեղծ դերասանուհիներ, լավ դերասանուհիներ, մեծ դերասանուհիներ և Սառա Բեռնարը»: Օսկար Ուայլդը նրան կոչում է «անհամեմատելի», նրա ճանապարհին շուշաններ է դնում և հատուկ նրա համար գրում է «Սալոմե» պիեսը ֆրանսերենով, որը, սակայն, արգելվում է բրիտանական գրաքննության կողմից նախքան բեմադրվելը: Հյուգոն գլխակորույս սիրահարվում է նրան ու ծնկում Սառայի առաջ, իսկ մինչ այդ հասցրել էր սրդոդած նամակ գրել. «Տիկին, Դուք հիասքանչ եք: Երբ հանդիսատեսը ծափահարում էր, ես հուզմունքից արտասվեցի: Այդ օրվա իմ արցունքը Ձերն է: Ես այն դնում եմ Ձեր ոտքերի տակ»: Երկտողի հետ արցունքաձև ադամանդով ապարանջան կար:

Նրա ամենահայտնի դասական դերը Ռասինի Ֆեդրան էր: Այն խաղում էր ամբողջ աշխարհով մեկ և խաղում հատկապես այն հանդիսատեսի համար, որ ֆրանսերեն վատ գիտեր կամ առհասարակ չգիտեր: Նա ստիպում էր մարդկանց հասկանալ իրեն ձայնի ու ժես-

տերի օգնությամբ: Նրան կոչում էին ժեստերի արքայադուստր: Նա առաջին դերասանուհին էր, որ ձայնագրություններ է կատարում և խաղում կինոյում՝ նկարահանված Լյուսիեր եղբայրների կողմից: Նա առաջին կինն էր, որ Համլետի դերում էր: Ֆիլմի որոշ հատվածներում ձայնը պահպանված է. նա առաջին դերասանուհին էր, որ խոսող, ոչ համր ֆիլմում է խաղում:

Սառա Բեռնարն ապրում էր հսկայական տանը, որդու հետ՝ շրջապատված սպասավորներով ու ընտանի կենդանիներով, որոնց պաշտում էր ու պարբերաբար համալրում էկզոտիկ շարքը: Իսկ դրանք քիչ չէին. երկու կրիա, վեց քամելոն, շներ, հեպարդ, Դարվին անունով մի կապիկ, թութակ, գայլ, մեկ փառահեղ վարագոճ ու առյուծի ձագ: Մշտապես շրջապատված էր սիրեկաններով, իսկ երբ որոշում է ամուսնանալ, ընկերները չեն թաքցնում զարմանքը, ինչին Բեռնարը պատասխանում է՝ դա միակ բանն է, որ դեռ չեմ փորձել:

Նրա խելքը գնում էր աթոռների համար, անընդհատ կահույք էր գնում: Երբ պարտքերը շատանում էին, նա մեկնում էր հյուրախաղերի: Շրջագայություններից մեկի ժամանակ վնասում է ոտքը: Տոսկայի ներկայացումն էր: Մահվան տեսարանում Սառան պետք է ցատկեր ամբողջ պատից, բայց ներքնակը, որի վրա պետք է ընկներ, սխալ տեղ էր դրված: Ցավն այնքան սաստիկ էր, որ դերասանուհին ուշագնաց է լինում: Ծունկն այտուցված էր, իսկ ավելի ուշ փտախտ է սկսվում:

Երբ նրա ոտքը փտախտի պատճառով ստիպված են լինում անդամահատել, նա հրաժարվում է արհեստական պրոթեզներից ու անվասայլակից, փոխարենը նախագծում է իր համար մի պատգարակ, որի մեջ նստում էր, ու երկու տղամարդիկ այն տանում էին: Այն հիշեցնում էր Լուի 15-րդի գահավորակը. ոսկեզօծ էր ու սպիտակեզր:

Բեռնարը շարունակում է խաղալ թատրոնում՝ բեմը հարմարեցնելով իրեն: Հենված բազկաթոռի բարձերին՝ նա հայրենասիրական բանաստեղծություններ է ասմունքում ռազմաճակատ մեկնել պատրաստվող զինվորների համար:

«Հրաշք է տեղի ունեցել,- ասում էին,- Սառան՝ ծեր, հաշմանդամ, նորից կարողանում է լուսավորել ամբոխին իր տաղանդի ցույթով: Այս փխրուն, հիվանդ, վիրավոր ու անշարժ էակը դեռ կարողանում է կախարդական բառերի միջոցով վերահաստատել հերոսությունը զինվորների մեջ»:

Շուրջ տասը տարի նա խաղում էր այնպիսի դերեր, որ շատ շարժումներ չէին պահանջում. Սառան կանգնում էր մեկ ոտքի վրա, փորձում էր հավասարակշռությունը պահել ու ձեռքերով խաղում էր:

Անգամ 70-ն անց տարիքում նա շարունակում էր ներկայացումներ տալ: 1922 թվականին, երբ պատրաստվում էր նոր պիեսին, գիտակցությունը կորցնում է: Կես ժամ անց ոտքի է կանգնում (ասես ինքը չէր քիչ առաջ վատ զգում) ու հարցնում՝ որտե՞ղ էինք կանգ առել, շարունակենք:

1923 թվականին թերթերը գրում են, որ Սառա Բեռնարը մահացել է խաղաղ, առանց տանջվելու, որդու գրկում: Հաջորդ օրը 30 հազար մարդ եկել էր՝ նրա հիշատակին տուրք մատուցելու: Նրա գերեզմանաքարին գրված է պարզապես մեկ բառ՝ Բեռնար:



ԹԻՒԼԻ ԱսԹՈՆ

1873-1947 թթ.

Աշխարհում շատերը երբեք չեն լսել միսս Թիւլի Ասթոնի մասին, ում Ավստրալիայում համարում են հերոսուհի: Մինչդեռ իր նվիրյալ ծառայության համար նա ավելի մեծ երախտագիտության ու հիացմունքի է արժանի: Լինելով փոփոխության համար պայքարող առաջամարտիկ՝ նա կարծես իր ուսերին էր բարձել «իր կույր եղբայրներին» օգնելու խնդիրը:

Մաթիլդա Էնն Ասթոնը, որին բուրն անվանում էին պարզապես Թիւլի, ծնվել էր 1873 թվականին ավստրալական Քարիսբրուք քաղաքում՝ բազմազավակ հանքափորների ընտանիքում: Ութ երեխաներից ամենափոքրն էր: Տանը միշտ աղմուկ էր, թոհուրոհ, հայրը հեքիաթներ ու հանելուկներ էր կարդում, մայրն ազգային երգեր էր սովորեցնում, ու ոչ մեկին չէր վախեցնում այն փաստը, որ իրենց կրտսեր աղջկա մի աչքը թույլ տեսողություն ունի: Վեց տարեկանում Թիւլին արդեն սովորում է կարդալ մեծ տառերով տպագրված գրքեր ու անգիր արտասանել իր սիրելի բանաստեղծությունները: Սակայն մեկ տարի անց կամաց-կամաց պատկերները սկսում են ծածկվել մշուշով, մինչև խավարը վերջնականապես չի պատում Թիւլիի աչքերը: Աղջիկն ամենսին չի կորցնում իր կենսուրախությունն ու չի հուսահատվում: Նրան տեղափոխում են ուրիշ քաղաք՝ տեսողական հաշմանդամություն ունեցող աղջիկների գիշերօթիկ դպրոց: Սա արկածային մի ճամփորդություն էր Թիւլիի համար: Նա ջանասեր աշակերտ էր, որն արագ սովորում է գրել ու կարդալ Բրայլի այբուբենով, մեծ հաջողություններ է գրանցում գրականության ու երաժշտության դասերին, ձեռագործի հմտություններ ձեռք

բերում: Գուցե հիմա դրանով շատերին չես զարմացնի, բայց հարյուր տարի առաջ հաշմանդամություն ունեցող կինը համարվում էր պարզապես անպետք: Նա հաշմանդամություն ունեցող առաջին կինն էր, որ ստացավ դպրոցի ավարտական դիպլոմ:

Այդուհանդերձ, 19-րդ դարի վերջում տեսնող հասարակության մեջ անկախ, ազատ և սովորել կամ աշխատել ցանկացող, կուրություն ունեցող կին լինելը չափազանց բարդ էր: Նախևառաջ չկային դասագրքեր Բրայլի այբուբենով: Թիլին խնդրում էր իր ընկերներին կարդալ ու փորձում էր նշումներ անել, սակայն գործն առաջ չէր գնում: Նա մի քանի անգամ ստիպված էր թողնել ուսումը, որովհետև այլընտրանք չկար: Բայց մի օր օրիորդ Թիլի Ասթոնը գտավ խնդրի լուծումը: Իսկ երբ նրան միացան մի քանի կամավորներ, սայլը տեղից շարժվեց: Շաբաթը մեկ Թիլին սովորեցնում էր մի խումբ կանանց կուրություն ունեցող մարդկանց համար ստեղծված այբուբենը, իսկ մյուս օրերին այդ կանայք վերատպում էին սովորական գրքերը Բրայլի տառերով: Իսկ Թիլին ու իր ընկերները իրար էին ամրացնում մեքենագրված էջերը՝ կազմելով ինքնաշեն գրքեր: Շուտով կամավորների թիվն ավելացավ, ու Բրայլի լեզվով թարգմանվեցին բազմաթիվ նոր գրքեր: Այսպես ստեղծվեց կուրություն ունեցող մարդկանց համար նախատեսված առաջին գրադարաններից մեկը: «Այս բոլոր գործերը, որ մենք հանդգնում ենք անել, հավանաբար մի օր մի տեղ պետք կգան», - ասում էր Ասթոնը:

Իր ընկերների հետ Ասթոնը հիմնադրեց «Կույրերի առաջընթացի ընկերակցությունը», որի պտղաբեր ու փութաջան աշխատանքի արդյունքում կուրություն ունեցող մարդիկ Ավստրալիայում ստացան ընտրելու իրավունք ու հասարակական տրանսպորտից զեղչված տոմսերով երթևեկելու թույլտվություն: Նա դարձավ տեսողության խնդիրներ ունեցող երեխաների համար դպրոցի առաջին չտեսնող տնօրենը: Բայց դա էլ իր հերթին նոր գլխացավանք բերեց: Տեսողության խնդիրներ չունեցող ուսուցիչները միավորվեցին Թիլիի դեմ՝ նրա ամեն նորամուծություն կամ որոշում դիմավորելով

քննադատությամբ ու քննիծադով: Նրանք նույնիսկ դասամիջոցներին չէին զրուցում իրենց տնօրենի հետ: Տասը տարուց ավելի Թիլի Ասթոնը հանդուրժում էր նվաստացուցիչ վերաբերմունքը, քանի որ համոզված էր՝ նա ծառայում էր աշակերտներին, որոնք այնքան շատ ունեին իր կարիքը: Հետագայում դպրոցի շրջանավարտների անսահման երախտագիտությունն ապացուցեց, որ Ասթոնը գուր չէր աշխատում: Թոշակի անցնելով՝ ձեռքերը ծալած չնստեց. տպագրեց տարիների ընթացքում գրված բանաստեղծությունների ժողովածուն, որը լայն տարածում գտավ թե՛ իր հայրենիքում, թե՛ դրա սահմաններից դուրս: Թիլին աշխարհով մեկ հայտնի դարձավ որպես Ավստրալիայի առաջին չտեսնող պոետ:



Ռոզա Մեյ Բիլինգհըրսթ

1875-1953 թթ.

Բանտը, իհարկե, ամենահարմար տարածքը չէր քարոզարշավ իրականացնելու համար, բայց մի՞թե տարածքի անհարմարությունը կկանգնեցնեի նրան, ում անունը Ռոզա Մեյ Բիլինգհըրսթ էր:

1912 թվականի մարտն էր: Ռոզա Մեյը դեռ մեկ ամիս պետք է անցկացներ բանտում, ցուցված էր տաժանակիր աշխատանք: Նա ջարդել էր լոնդոնյան հարուստ թաղամասերից մեկի՝ սեփականություն համարվող շինության ապակիները՝ ի դիմադրություն և ի պահանջ մեկ բանի. կանայք պիտի ունենան ընտրելու իրավունք:

Ռոզա Մեյը սուֆրաժիստ էր ու անգամ բանտում չէր պատրաստվում նահանջել իր սկզբունքներից, ավելին՝ նա ոգևորում էր բանտախցի մյուս կալանավորներին, բացատրում էր, պատմում: Նա առաջին անգամ չէր բանտում և ոչ էլ վերջին: Կյանքի ընթացքում նա պարբերաբար բախվել էր ոստիկանական դիմադրությանը, մասնակցել անհնազանդությունների և օգտագործել դիմադրության բոլորովին այլ մարտավարություն՝ գունային: Որպես շարժման գույներ նա ընտրել էր մանուշակագույնը՝ արքայական ընտանիքի, սպիտակը՝ մաքրության, և կանաչը՝ հույսի նշան:

Նա առավելապես հայտնի էր իր երկրորդ անունով՝ Մեյ: Փոքր տարիքում հիվանդացել էր պոլիոմիելիտով ու կորցրել քայլելու ունակությունը: Նա շարժվում էր եռանիվ անվասայլակի օգնությամբ:

Երիտասարդ տարիներին օգնում էր անապահով կանանց, նաև դասավանդում էր կիրականօրյա դպրոցում:

1907 թվականին նա միացավ Էմելին Պանկիըրսթի հիմնադրած «Կանանց սոցիալ-քաղաքական միությանը», որը կողմ էր անհնազանդ մարտավարություններին՝ ի շահ կանանց իրավունքների պաշտպանության: Երկրի տարբեր մասերում շատ արագ հանձնաժողովներ են ձևավորում, միլիոնավոր ստորագրություններ հավաքում: Միայն հարկ վճարող կանանց էր թույլ տրվում մասնակցել համայնքային ընտրություններին, բայց խորհրդարանական ընտրություններին նրանք էլ չէին կարող մասնակցել: Դարավերջին հանձնաժողովները միավորվեցին: Էմիլին կոչ արեց կանանց խաղաղ ակցիաներին վերջ տալ, փոխարենը հացադուլ հայտարարել և չվախենալ անգամ բռնություն գործադրելուց: Ապա Բիլինգհերսթը բացեց կազմակերպության գրինվիչյան մասնաճյուղը, իսկ հայտնի ակցիաներից մեկի ժամանակ Մեյն իր անվասայլակով բախվեց ոստիկաններին:

Շուտով բռնություններին վերջ դրեցին հենց կանայք: 1910 թվականն էր: Բոլորն անհամբեր սպասում էին օրենքի ընդունմանը, որն առավելապես հայտնի էր «Հաշտության օրինագիծ» անվանումով, որի հաստատումը թույլ կտար շուրջ մեկ միլիոն կանանց ձայնի իրավունք ստանալ և քվեարկել խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Այդ կանայք հիմնականում ապահով սեփականատերեր էին և ներկայացնում էին Անգլիայի միջին խավը:

Թեև խորհրդարանականների մեծամասնությունը կողմ էր քվեարկել օրինագծին առաջին և երկրորդ ընթերցմամբ, վարչապետը որոշեց՝ դրա ժամանակը չէ հիմա, և հայտարարեց, որ պառլամենտը ցրվում է, և արտահերթ ընտրություններ են անցկացվելու: Կանայք այս քայլը դիտարկեցին որպես մերժում և քայլերթ կազմակերպեցին դեպի պառլամենտական շենք: Երթին մասնակցում էր շուրջ երեք հարյուր կին: Բախումը չուշացավ: Ոստիկանները

բոնի ուժ գործադրեցին: Շուրջ հարյուր քսան կին ձերբակալվեց: Բիլինգհրոսթին դուրս նետեցին իր անվասայլակից, ձեռքերը կոպտորեն ոլորեցին, իսկ մի մատն այնպես ծալեցին, որ ցավից տանջվի: Ոստիկանները նրան տարան ու մենակ թողեցին անձանոթ մի փողոցում, ապա անվասայլակի անիվները քանդելով ու փականները գրպանելով՝ հեռացան՝ վստահ, որ խուժան ամբոխը կհոշոտի անօգնական կնոջը: Պարզվեց՝ այդտեղ գտնվողները, բարեբախտաբար, նրա ընկերներն էին:

1911 թվականին շուրջ երկու հարյուր քսան կնոջ են բանտարկում: Նրանք մուրճերով ու քարերով ջարդել էին Պառլամենտական հրապարակի ապակիները՝ որպես ընդդիմության նշան այն օրինագծի, համաձայն որի՝ բոլոր տղամարդիկ ընտրելու իրավունք ունեն, իսկ կանայք՝ ոչ:

1912 թվականին շուրջ հարյուր հիսուն կնոջ են բանտարկում: Այս անգամ նրանք մուրճերով ու քարերով ջարդել էին Լոնդոնի պատուհաններն ու փոստարկղերը: Դատարանի առաջ Ռոզա Մեյն ասաց.

- Պարո՞ն դատավոր, մենք խուլիգաններ չենք՝ ոչնչացնելու հալում ունեցող, բայց մենք ուզում ենք արթնացնել հանրային քնած կարծիքն այս ապատիկ վիճակից:

Մեյը դատապարտվեց ութ ամսվա բանտարկության: Ի պատասխան ազատագրկումի՝ նա հացադուլ հայտարարեց ու մորը գրած նամակում պատմեց, թե ինչպես են իրեն փորձում բոնի կերակրել:


Բիլինգհրոսթն ասում էր. «Չնայած մարմնական թուլությանս՝ իմ ներքին ուժն անսասան է: Կառավարությունը կարող է խեղել իմ հաշմանդամ մարմինը՝ բոնի կերպով կերակրելով, որովհետև այսօր նրանց ուժը պատում է միայն թույլ կանանց վրա՝ գտնվող բանտում: Նրանք անգամ ինձ կարող են սպանել ընթացքում, որովհետև ֆիզիկապես ուժեղ չեմ, բայց նրանք չեն կարող խլել ինձանից

ագատության ոգին և իմ պատրաստակամությունը՝ պայքարելու այս մարտում մինչև վերջ»:

1918 թվականին կառավարությունը տեղի տվեց, և ընդունվեց օրինագիծ, ըստ որի՝ սեփականություն ունեցող երեսուն տարեկանից բարձր կանայք ընտրելու իրավունք ունեն Անգլիայում: Իսկ արդեն տասը տարի անց քսանմեկ տարեկանից բարձր բոլոր կանայք ու աղջիկները տղամարդկանց հավասար ձայնի իրավունք ստացան:

Ռոզա Մեյն ապրում էր ծնողների հետ Միդլսեքս քաղաքի Սյուրեյ կոմսությունում: Նա երբեք չամուսնացավ, բայց 1933-ին որդեգրեց Բեթին, ով ավելի ուշ մոր մասին գիրք կգրի ու կպատմի բոլորին անհայտ Ռոզա Մեյ Բիլինգհերսթի պատմությունը:

Մահվանից առաջ Մեյը կտակեց իր մարմինը գիտությանը: Երկրի վրա անգամ վերջին ունեցածը՝ ի նպաստ երկրի, ի շահ գիտության ու մտքի առաջընթացի:



ՀԵԼԵՆ ՔԵԼԵՐ

1880-1968թթ.

Ես դիմում եմ բոլոր նրանց, ովքեր փորձում են սովորել, և նրանց, ովքեր սովորեցնում են: Զվարթ եղեք: Մի՛ մտածեք այսօրիկ անհաջողությունների մասին, այլ վաղվա հաջողությունները միշտ հիշեք: Դուք դրել եք ձեր առջև ոչ հեշտ առաջադրանք, բայց կհասնեք ձեր ուզածին, եթե լինեք համառ և ուրախություն գրնեք պայրնեշները հաղթահարելիս և հաճույք, երբ դժվարանցանելի տեղերով գնաք, որտեղով հավանաբար կարիք չէր լինի երբևէ անցնելու, եթե ի սկզբանե ճամփան լինեք հարթ ու հեշտ, և չսայթաքեիք:

Միշտ հիշեք՝ ոչ մի ջանք, որ թափվում է հանուն որևէ հրաշալի բանի, չի կորչում: Ինչ-որ մի օր ինչ-որ մի տեղ մենք գրնելու ենք այն, ինչ փնտրում ենք:

Մենք պիտի խոսենք ու, այո՛, նաև պիտի երգենք, որովհետև հենց Աստված է այդպես հնարել մեզ՝ ասող-խոսող ու երգող:

(հատված Հ. Քելերի ելույթից)

1880 թվականին Արթուր և Քելթ Ադամս Քելերների ընտանիքում ծնվեց առողջ ու կայտառ մի աղջնակ: Մեկուկես տարի անց երեխան հիվանդացավ քութեշով՝ այդ ժամանակների համար դեռևս անհասկանալի մի հիվանդությամբ, որը բացատրում էին որպես ստամոքսի ու գլխուղեղի անոթների խցանում: Հիվանդությունը կարճ տևեց, բայց դրա հետևանքով փոքրիկ Հելենը կորցրեց տեսողությունն ու լսողությունը: Միակ մարդը, ում հետ նա կարողանում էր հաղորդակցվել, խոհարարի դուստրն էր՝ վեցամյա Մարթան, որ հրաշքով հասկանում էր Հելենի նշանները:

Ավելի ուշ Հելենը հանդիպեց իր ուսուցչին՝ քսանամյա ջրնաղ Էննին, ով տեսողական հաշմանդամություն ուներ և Հելենի հետ հա-

դորդակցվում էր՝ բառերը նրա ձեռքի ափի մեջ ցույց տալով: Մինչ այդ Հելենը չգիտեր, որ ամեն առարկա իր առանձին անունն ունի:

Առաջին բառը, որ սովորեց Հելենը, ջուրն էր: Նա շփոթում էր «խամել» բառը «կաթի» ու «բաժակի» հետ: Էննը բռնեց Հելենի մի ձեռքն ու պահեց այն ջրի տակ, իսկ մյուս ձեռքին տառ առ տառ գրեց «ջ-ու-ր»: Հանկարծ Հելենն ընկալեց, որ այն, ինչ հոսում է, սառն է ու թարմացնող, ջուրն է, ու շատ կամաց ասաց իր առաջին բառը՝ «ջուր»՝ ընկալելով ասածն ու պատկերացնելով:

Այդ օրը նրանք միասին շուրջ 30 բառ սովորեցին:

Զգալով ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի քայլվածքը՝ Հելենը կարող էր ասել, թե ով է իրեն մոտենում: Նա զգում էր հատակից հասնող տատանվող շարժումներն ու այդպիսով գլխի ընկնում, թե ով եկավ ու ով գնաց:

Հելենի մասին խոսում էին ամենուր: Նրա հետ փորձում էին ծանոթանալ՝ որպես տարօրինակ արարածի, առաջարկում էին ելույթով հանդես գալ կրկեսում ու ֆիլմերում, ինչին, իհարկե, դեմ էր ու մերժում էր: Բայց կար ևս մեկը, որ հիացած էր Հելենով, և որը նրան տարօրինակ չէր համարում, այլ կոչում էր «հրաշքի կտոր»:
Մարկ Տվենն էր: Նրան, ի դեպ, Հելենն ամենահեշտն էր ճանաչում մի պարզ պատճառով. Տվենից ծխախոտի ուժեղ հոտ էր գալիս: Մարկ Տվենն առաջինն էր, որ Էնն Սալիվանին կոչեց հրաշագործ և պաշտոնապես հայտարարեց. «19-րդ դարի երկու ամենահետաքրքիր կերպարներն են Նապոլեոնն ու Հելեն Քելերը»:

Էննը ուղեկցեց Հելենին մինչև կյանքի վերջ: Հելենն ասում էր. «Ես ծնվել եմ յոթ տարեկանում՝ այն օրը, երբ հանդիպեցի Էննին»: Հենց նրա շնորհիվ Քելերը դարձավ առաջին չտեսնող ու չլսող մարդը, որ բարձրագույն կրթություն ստացավ: Հելենն արվեստի ոլորտն էր ընտրել: Նա գրում էր գրքեր տասնմեկ տարեկանից, կարդում էր դասախոսություններ, ելույթներ էր ունենում ու ոգևորում կուրուր-

յուն ունեցող անձանց, նաև նկարահանվում էր ֆիլմերում: Դրանք առանձնապես եկամուտ չէին բերում իրեն, բայց շատ լավ հասկանում էր, թե որքան է այդ ամենը օգնում մյուսներին:

Նա հասարակական գործիչ էր, պայքարում էր պատերազմի դեմ ու խոսում կանանց իրավունքներից: Հելենը հրապարակեց իր՝ «Հելեն Քելեր» օրագիրը, որտեղ խիստ քննադատում էր Հիտլերի վարած քաղաքականությունն ու Մարգարետ Միտչելի աղմկահարույց նոր գիրքը՝ «Քամուց քշվածները»՝ հարավի ստրուկների դեմ իրականացված բռնի գործողությունների մասին լռելու համար:

Երկրորդ համաշխարհայինի ժամանակ նա այցելում էր հուսալիտալներ՝ տեսակցելու չտեսնող ու չսող զինվորականներին:

Հելեն Քելերն ԱՄՆ-ի Կույրերի ֆոնդի միջազգային կապերի ներկայացուցիչն էր: Նա շրջում էր աշխարհով մեկ՝ այցելելով շուրջ 39 երկիր՝ Մեծ Բրիտանիայից մինչև Ճապոնիա ու Սիրիա, և համագործակցում այնպիսի գործիչների հետ, ինչպիսիք էին Չերչիլը, Մեյերը, Ներուն: Հելենին անվանում էին աշխարհի ութերորդ հրաշալիք. նա հիացնում էր, ոգևորում ու կախարդում:

Պաշտում էր շների: Ճապոնիայում նա լսում է Հատիկո անունով շան պատմությունը, որը տիրոջ մահվանից հետո սպասել է տիրոջը, և խնդրում է նույն ցեղատեսակի շուն, ինչին սիրով ընդառաջում է ճապոնական կառավարությունը:

Նրան մշտապես և ամենուր ուղեկցում էին Էնն Սալիվանն ու օգնականը՝ Փոլի Թոմսոնը: Նրանց երբեմն անվանում էին երեք հրացանակիրներ: Երբ Էննը մահացավ, Հելենն ասաց. «Այ հիմա ես իսկապես դարձա կույր ու խուլ»: Էննից հետո ձեռքի այբուբենին նույն վարժանքով տիրապետողներ չեղան, Թոմսոնը, իհարկե, կողքին էր, բայց Էննի չափ մտերիմ չէին: Էննը նրա հոգին էր, հոգու ընկերը, ինչպես ասում էր Հելենը:

Հելենը երբեք չամուսնացավ ոչ այն պատճառով, որ սիրային պատմություններ չեղան իր կյանքում, այլ որովհետև ընտանիքը դեմ էր ու չէր պատկերացնում, թե ինչպես կարող է իրենց չտեսնող ու չսող աղջիկն առանձին կյանքով ապրել:

Երեսունվեց տարեկան էր, երբ ուսուցիչը՝ Էննը, հիվանդացավ, ու նրան փոխարինում էր քսանամյա Փիթըր Ֆեզընը: Աղջիկն ու տղան չնկատեցին էլ, թե ինչպես ինքնամոռաց սիրահարվեցին: Նրանք շատ արագ թաքուն նշանվեցին ու ամուսնանալու թույլտվություն վերցրին: Ցավոք, երբ լուրը հայտնեցին ընտանիքին, արձագանքը կտրուկ էր. Հելենի ծնողները դեմ էին, ու դա չէր քննարկվում: «Ախ, ինչ տարօրինակ կյանքով եմ ես ապրում, կարծես Մոխրոտիկի նման՝ կեսը փայլի մեջ՝ բյուրեղյա կոշիկներով, կեսը՝ մկների հետ ու մոխրի»:

Մահվանից առաջ Հելենը խնդրեց, որ իր աճյունն ամփոփեն իր երկու սիրելի մարդկանց կողքին՝ Էնն Սալիվանի և Փոլի Թոմսոնի:

Հելեն Քելերի անունը գրված է ԱՄՆ Կանանց փառքի դահլիճում: Աշխարհի ամենատարբեր երկրներում նրա անունով փողոցներ կան, դե իսկ հարազատ Ալաբամայի նահանգում գործում է մետաղադրամ, որի մի կողմում բրայլյան գրով Քելերի անունն է, մյուս երեսին՝ Հելենի նկարը՝ մեծահասակ կին, որ Բրայլի այբուբենն է կարդում:



Արքայադուստր Էլիս Բաթենբերգ

1885-1969 թթ.

Շատերիս պատկերացմամբ թագավորական ընտանիքի անդամներն ապրում են երջանիկ ու անհոգ կյանքով: Նրանք չունեն հոգսեր, հիվանդություններ, իսկ վիշտը շրջանցում է ազնվատոհմիկ կանանց ու այրերին: Դեռ մանկուց մենք պատմում ենք երեխաներին հեքիաթներ, որտեղ աղջիկն անմիջապես երջանիկ է դառնում, երբ ամուսնանում է արքայազնի հետ: Իհարկե, իրականությունը երբեմն այլ է: Եվ ասվածի ամենավառ օրինակներից է արքայադուստր Էլիս Բաթենբերգը:

Վիկտորյա Էլիս Էլիզաբեթ Ջուլյա Մարին ծնվել էր Վինձորների դոլյակում: Նրա նախատատը Վիկտորյա թագուհին էր: Աղջիկն ի ծնե ուներ լսողական հաշմանդամություն, բայց ծնողները չէին նկատել, կարծում էին՝ աղջիկն ունի մտավոր հաշմանդամություն: Նրա խստաբարո մայրը թույլ չէր տալիս դստեր հանդեպ ոչ մի ներողամիտ վերաբերմունք՝ համոզված լինելով, որ այդպես ավելի արագ կվարժեցնի աղջկան ինքնուրույն դիմակայելու դժվարություններին: Փոքրիկ Էլիսը սովորեց կարդալ գրուցակցի շուրթերով ու որոշ ժամանակ անց կարող էր հաղորդակցվել 5 լեզուներով: 18 տարեկանում նա ամուսնացավ Հունաստանի և Դանիայի արքայազն Էդդրյուի հետ, ունեցավ 5 երեխա, ու թվում էր՝ շուտով կսկսվի հեքիաթային կյանքը:


Բայց Եվրոպան սկսեց ավելոծվել Առաջին համաշխարհային պատերազմից. սկսվեցին ապստամբություններ թագավորական ընտանիքների դեմ Ռուսաստանում, Բուլղարիայում, Հունաստանում: Էլիսի ամուսինը կորցրեց իր տիտղոսները, ու ընտանիքը ստիպված էր փախուստի դիմել՝ այդպես էլ չկարողանալով ինչ-որ հանգրվան գտնել Եվրոպայում: Սակայն Էլիսի մարդասիրական հայացքներն ամեննին չխամրեցին: Բալկանյան պատերազմի ընթացքում նա աշխատում էր որպես բուժքույր, օգնում էր վիրահատությունների ժամանակ, դաշտային հոսպիտալներ էր կառուցում: Իսկ բարեկամների ուղարկած սնունդը բաժանում էր փախստականներին:

Այս բոլոր ցնցումների արդյունքում Էլիսի հոգեվիճակն ու ինքնագզացողությունը վատթարացան: Ընտանիքի անդամները նրան հարկադրաբար ուղարկեցին շվեյցարական մի առողջարան, որտեղ նրա բժիշկներից էր հանրահայտ Զիգմունդ Ֆրոյդը: Համոզված լինելով, որ Էլիսն ունի հոգեկան առողջության խնդիրներ՝ մասնավորապես շիզոֆրենիա, բժիշկները սկսեցին սարսափելի փորձեր անցկացնել: Նրան ենթարկում էին տարբեր տիպի ճառագայթումների՝ կարծելով, որ Էլիսի բոլոր խնդիրները «կանացի հուզականության և զգայականության հետևանք են»: Էլիսից երես թեքեցին ամուսինը, երեխաները և հարազատները: Թեև նա պնդում էր, որ ոչ մի առողջական խնդիր չունի, այնուամենայնիվ բուժական հիմնարկներում լքված ու միայնակ անցկացրեց մոտ երկու տարի:

Երկար պայքարից հետո, վերջապես ազատվելով բժիշկների բռնի հսկողությունից, Էլիսը դարձավ միանձնուհի, տեղափոխվեց Հունաստան, որտեղ հիմնեց ուղղափառ միանձնուհիների միաբանություն: Սակայն նրան սպասում էին նոր փորձություններ: Այժմ ֆաշիստական բանակը գրավեց Եվրոպայի կեսը, ու սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Էլիսը իր միաբանության դռները բացեց բազմաթիվ հրեաների համար, որոնց կյանքին մահացու վտանգ էր սպառնում: Նա նաև միացավ Կարմիր խաչի մար-

դասիրական առաքելությանը՝ կազմակերպելով սննդի կետեր ու ապաստարաններ որբերի համար: Էլիսը ստեղծեց բուժքույրական ծառայություններ չքավոր հույների համար:

Հետագայում Էլիս Բաթենբերգը երբեք չէր խոսում իր արարքների մասին: Տարիներ անց նրա որդին, ով ամուսնացել էր Մեծ Բրիտանիայի թագուհու հետ, հրավիրեց մորը՝ ապրելու արքայական ընտանիքի հետ: Ոչ ոք՝ զավակներն ու թոռներն անգամ տեղյակ չէին՝ քանի հոգու էր օգնել ու փրկել Էլիսը: Արքայադուստր Էլիս Բաթենբերգի մահից 37 տարի անց, բազմաթիվ մեդալներից ու կոչումներից զատ, նա արժանացավ «Աշխարհի արդարակյացներ» պատվավոր կոչմանը, որ շնորհվում է Եվրոպայում նացիստական օկուպացիայի ժամանակ հրեաներ փրկած և դրանով իրենց կյանքը վտանգած ոչ հրեաներին:



ԱՆԵՆԱԿ ԲԵՂԵՐԻՄԱՆ

1886-1975 թթ.

Անետը թույլ ու ծուռ-մուռ ոտքերով աղջնակ էր. նրա ոսկորները կայցիումի պակասից ձևախեղված էին, ու շատ երկար ժամանակ բժիշկները չէին հասկանում հիվանդության պատճառը: Առողջական նպատակով ծնողները որոշում են լողի տանել: Որոշ ժամանակ անց Անետը, որ չէր կարողանում քայլել, ձկան պես լող է տալիս, ապա քիչ-քիչ նաև կազդուրվում է ու սկսում քայլել: Այդ ժամանակ դեռ ոչ ոք չէր պատկերացնում, որ տարիներ անց նա դառնալու է Ավստրալիայի լավագույն լողորդուհին:

Ավստրալիայից տեղափոխվելով Անգլիա՝ նա մասնակցում է լողի մի շարք մրցումների ու հաղթանակներ գրանցում: Նա մրցում էր ոչ միայն աղջիկների հետ, այլև տղաների: Աղջիկների գիմնասզիայում սովորելուն զուգահեռ նա խորացնում է լողի գիտելիքները, դառնում փորձառու սուզակ ու ժամանցի կենտրոններից մեկում ձկների ընկերակցությամբ որպես ջրահարս աշխատում:

Տասնութ տարեկանում Անետը դառնում է առաջին կինը, որ խիզախում է հաղթահարել Լա Մանշը:

Նա առանց ջրի չէր պատկերացնում իր կյանքը, անչափ սիրում էր լողը և ուզում էր, որ բոլորը լողալ սովորեն, բայց կար մի բայց: Անետն ապրում էր Վիկտորյական դարաշրջանում:

Այդպես է կոչվում այն ժամանակաշրջանը, երբ կառավարում էր թագուհի Վիկտորյան: Նրա գահակալության տարիներին ոչ մի մեծ պատերազմ չի եղել, ծաղկում էին գիտությունն ու արվեստը: Բոլորն ուշի-ուշով հետևում էին թագավորին ու թագուհուն ու կրկնում նրանց արարքները: Օրինակ՝ թագուհի Վիկտորյան, որպեսզի աչ-

քի ընկնի իր հարսանիքի ժամանակ, արքայական գունավոր հանդերձների փոխարեն ըստրում է ճեփ-ճերմակ մի զգեստ: Դրանից հետո բոլոր հարսնացուները սկսեցին սպիտակ զգեստ կրել: Կամ, օրինակ, թագուհին ու թագավորը տոներին միմյանց ընծաներ էին տալիս ու պատրաստում անակնկալներ: Մարդիկ էլ սկսեցին առիթների ժամանակ իրար նվերներ տալ:

Այս շրջանում կանայք հագնում էին փքված զգեստներ, կրում սեղմիրաններ: Առանց հովհարի, մեծ գլխարկի ու ձեռնոցների կանայք տանից դուրս չէին գալիս: Փոքր աղջիկները հագնվում էին Լուիս Քերոլի հերոսուհու՝ Ալիսի նման, դե իսկ մեծերի համար օրինակ էր ծառայում, արդեն գիտեք, թե ով՝ թագուհին:

Վիկտորյական շրջանում կանացի լողազգեստը բաղկացած էր լայն տաբատից, մինչև ծնկները հասնող փեշից, գլխարկից ու կոշիկներից: Լողորդուհիների դաստակները չպետք է երևային, մեջքի խորը բացվածքն անթույլատրելի էր, ընդգծված նստատեղը խիստ անոթ բան էր: Մի խոսքով լողալն ամենահաճելի բանը չէր: Մեր հերոսուհին որոշում է այս արգելքները շրջանցել, ու ինքն է իր համար լողազգեստ կարում: Հետո հագնում է այն ու լողափ գնում:

Նրա լողազգեստը կիպ էր, թևերը մերկ էին, ոտքերը՝ բաց: Անետր գրավում է բոլորի ուշադրությունը: «Ինչպիսի անամոթություն», - փսփսում էին աջ ու ձախ: Ոստիկաններն անմիջապես ձերբակալում են աղջկան հանրային տարածքում անթույլատրելի վարք ցուցաբերելու համար:

- Պարո՛ն դատավոր, լողն առողջ ապրելակերպի լավագույն տեսակն է, բայց ընդունված լողազգեստով անհնար է լողով զբաղվել, փորձում է դատարանում պաշտպանվել Անետը:

Դատավորը տուգանք է նշանակում, բայց որքան էլ զարմանալի լինի, համաձայնում է նրա հետ ու ազատ արձակում աղջկան՝ պայմանով, որ այդուհետ մինչև ջուրը մտնելը կրունկները հասնող թիկնոց կրի:

Լողափում ու լողավազաններում կանանց թույլատրվում է լողազգեստ կրել:

Անչափ ոգևորված՝ նա ստեղծում է կիպ լողազգեստների սեփական հավաքածուն: Այն կոչվում էր «Անետ Քելերման»: Հավաքածուն ցնցում է բոլորին և ստիպում շատերին վերանայել հնացած հայացքները:

Անետը գրում էր հոդվածներ ու գրքեր, զբաղվում էր բարեգործությամբ ու կանանց իրավունքներից խոսում: Նա խրախուսում էր առողջ ապրելակերպն ու բնական մարմին ունենալը: «Կնոջ մարմինը գեղեցիկ է ամեն ձևի մեջ. ոչ թե պետք է վախենալ այն ցուցադրելուց, այլ պետք է հիանալ նրանով»: Նա աղջիկներին սովորեցնում էր մարզվել ու ծանոթացնում շնչառական տեխնիկայի գաղտնիքներին: Նա երբեք չէր օգտագործում պկոհոլ ու բուսակեր էր:

Քելերմանը նաև նկարահանվում էր ֆիլմերում: Դրանք հիմնականում «ջրային» էին ու շատ համարձակ: Նա 28 մետր բարձրությունից ցատկում է ծովն ու լողավազանում լողում կոկորդիլոսների հետ, դե իսկ հերթական անգամ ցնցում է հանրությանը, երբ մորեմերկ նկարահանվում է «Աստվածների դուստրը» ֆիլմում, որն այն ժամանակվա համար չլաված մեկմիլիոնանոց բյուջե ուներ: Ցավոք, ֆիլմը չի պահպանվել, բայց դա չի խանգարել, որ Հովիվուդի Փառքի արահետում Անետն իր անունով աստղ ունենա:

52 տարեկանում նա շարունակում էր զբաղվել ջրային բալետով, իսկ երբ դադարում է նկարահանվել ֆիլմերում, ամուսնու հետ միասին առողջարանների ցանց և առողջ սննդի վաճառակետ է բացում: Ի դեպ, թագուհի Վիկտորյայի նման ինքն էր առաջարկություն արել իր կողակցին և վերջինիս մասին ասում էր՝ նա լավագույն ամուսինն է, որ երբևէ որևէ կին կարող է ունենալ: Նրանք հրաշալի ընկերներ էին և ապրեցին միասին մինչև խոր ծերություն:

Անգամ 80-ամյա հասակում Անետը չէր դադարում մարզվել ու լողալ իր սիրելի ծովում, իսկ երբ նա մահանում է, կտակի համաձայն՝ ամենաջրային արարածի աճյունափոշին հանձնում են Խաղաղ օվկիանոսի ջրերին:



ՆԵՒԼԻ ԶԱԲԵԼ ՎԻԼԻԱՅԹ


1892-1991 թթ.

96 տարեկանում իր չարանճի ժպիտը դեռ չկորցրած Նեւլի Զաբել Վիլիայթը հաճույքով պատմում էր իր առաջին թռիչքի մասին: Նա պարզ հիշում էր այդ պատմական օրվա ամեն մանրուք՝ օդի սառնությունը, թաց խոտը, ներքևում ձեռքերն անհանգիստ թափահարող ամբոխը, որ համոզված էր՝ Նեւլիի նյարդերը տեղի կտան, ու մի փորձանք կբերի գլխին:

Նեւլին կորցրել էր լսողությունը մանուկ հասակում, բայց նա սովորել էր հասկանալ մարդկանց՝ վերծանելով շուրթերի շարժումները: Իսկ մնացած առումներով նա ոչնչով աչքի չընկնող կյանք էր վարում. զբաղվում էր իր գործով, ոչ մեկին չէր խանգարում, ոչ ոք էլ իրեն չէր նկատում: Մինչև 34 տարեկանը: Օդաչու ընկերներից մեկը մի օր ասաց. «Ինչո՞ւ չես սովորում օդանավ վարել, դու կարող ես լինել Հարավային Դաքոթա նահանգի առաջին կին օդաչուն»: Այդ միտքը չափազանց ոգևորեց Նեւլիին: Դասընթացները շատ թանկ արժեին՝ 200 դոլար, որը հսկայական գին էր այն տարիների համար: Բայց Վիլիայթը հանձնվել չէր սիրում. նա պարտք արեց հորից ու գնաց սովորելու: Նա գաղտնի էր պահում բոլորից, թե ինչ դասերի է մասնակցում, որովհետև վախենում էր՝ բա որ ձախողվեր, ու բան էլ չստացվեր:

1928 թվականի հունվարի 13-ին՝ երկու ամսվա դասընթացներից հետո, Նելլի Զարել Վիլհայթն ինքնուրույն օդ բարձրացավ իր բիպլանով: Օդաչուի անձածկ նստատեղում վստահ բռնելով դեկը՝ նա մի քանի պտույտ կատարեց երկնքում ու ապահով վայրէջք կատարեց: Նա ոչ միայն նահանգի առաջին կին, այլև լսողական հաշմանդամություն ունեցող առաջին լիցենզավորված օդաչուն էր: Նրա հաջողության մասին լուրերն արագ տարածվեցին երկրով մեկ: Շատերն ապշահար էին. ինչպես էր կինը, այն էլ չլսող, հանդգնել օդաչու դառնալ: Բայց Նելլին միայն քմծիծաղով էր հիշում այդ մարդկանց. «Նրանք պարզապես ինձ նախանձում էին»:

Նելլին Ամելիա Էրհարթի՝ մեկ այլ բացառիկ կնոջ հետ միասին հիմնադրեց «99 ակումբը»՝ կին օդաչուներին սատարող կազմակերպությունը: Նա հաճախ էր շրջագայում տարբեր նահանգներում, օդային մրցավազքերի էր մասնակցում, բարեգործական ցուցարություններ էր կազմակերպում, որտեղ զարմացնում էր հանդիսատեսին իր օդային ակրոբատիկայով ու հնարքներով: Գրեթե անթերի օդաչու էր: Նա չէր կարող լսել շարժիչի ձայնը, բայց միշտ գիտեր՝ երբ մի բան այն չէր, քանի որ զգում էր օդանավի ամեն մասնիկի աշխատանքն ու ցնցումները: Վիլհայթի ունակությունների շնորհիվ մեծ ավիարևակերությունները սկսեցին վստահել հաշմանդամություն ունեցող այս կնոջն ու թույլ տվեցին ուղևորներ տեղափոխել: Իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նրան հանձնարարվեց դասընթացներ վարել նորաթուխ օդաչուների համար: Նա աննկատ ամերիկուհուց վերածվեց հեղինակություն վայելող մասնագետի, ում կարծիքի հետ հաշվի էին նստում: Եվ ընդհանրապես, Նելլին իր օրերի համար շատ արկածախնդիր կյանք էր վարում. նրան չէին կանգնեցնում ո՛չ հաշմանդամությամբ պայմանավորված արգելքները, ո՛չ կնոջ ազատությունը սահմանափակող ժամանակները:



Դորոժեա Լենգ

1895-1965 թթ.

Կա մի նկար, որ գիտեն գրեթե բոլորը, անգամ եթե նկարչությունից կիլոմետրերով հեռու են: Երևի գլխի ընկաք, որ նկատի ունեն Մոնա Լիզային: Դա Վինչիի պատկերած կինը խորհրդավոր է ու ասես ինչ-որ ծածուկ գաղտնիքներ գիտի, որ պատրաստ է քեզ պատմել, բայց ինչ-ինչ պատճառներով լռում է՝ կրկնապատկելով խորհրդավորության շերտը: Եվ կա մի կնոջ լուսանկար, որ նույնչափ տպավորիչ է ու մի ամբողջ դարաշրջանի խորհրդանիշ է համարվում և հայտնի է «Մեծ ճգնաժամի Մոնա Լիզա» անունով: Այն տպվել է միլիոնավոր բացիկների ու նամականիշների վրա, հայտնվել հոդվածներում ու ամսագրերում: Պատկերված կնոջ անունը երկար ժամանակ անհայտ էր, լուսանկարչի անունը ևս չէր թնդում, հեղինակային իրավունքն այդ թվերին քչերին էր հուզում:

Լուսանկարում կինը գրկել է երեխաներին, որոնք թաքցրել են իրենց դեմքը՝ փոքրիկ գլուխներն անուժ հակելով մոր ուսին: Ֆոտոյում ձեռքերը հուսահատ են ու վճռականորեն տխուր. մոր ձեռքը սեղմում է շուրթի ծայրը, փոքրիկինը բռունցքված է՝ այտով ուսին հենված: Եթե Դա Վինչիի կինն աչքերով միշտ որսում է դիտողին, որ լո՛ր հետը, ապա այս կնոջ թեք հայացքը չի նկատում իր դիտորդին: Նա ասես հոգսի դեմքն է՝ բոլորիս փոխարեն, բոլորիս մասին:

Այսօր մենք ճանաչում ենք նրան: Երեսուներկուամյա Ֆլորենսն էր կինը՝ յոթ երեխաների մայր, ով սոված էր ու հուսահատ: Վատ եղանակը փչացրել էր ոլոռի բերքը, ու տեղացիները, որ ոլոռ հավաքողներ էին, բառացիորեն սովամահ էին լինում: Լուսանկարչուհին կնոջ անունն ու տարիքը չհարցրեց, բայց կինը պատմեց նրան,

որ երեսուներկու տարեկան է, սնվում են սառեցրած բանջարեղենով ու թռչուններով, որոնց իր երեխաներն են սպանում, ու որ ինքն առավոտյան վաճառել է մեքենայի դռները, որ ուտելու մի բան գնի: 1936 թվականին՝ լուսանկարի հրապարակումից անմիջապես հետո, ԱՄՆ-ի կառավարությունը հայտարարեց, որ 20 հազար ֆունտ սնունդ է ուղարկում ոլոռ հավաքողների ճամբար: Այդ ժամանակ արդեն անանուն կինն ու իր ընտանիքը հեռացել էին փախստականների ճամբարից, իսկ լուսանկարը շարունակում էր հայտնվել ամսագրերի շապիկներին, գովազդներում, ամենուր:

1978 թվականին Ֆլորենս Թոմփսոնը նամակ է գրում ամսագրերից մեկի խմբագրին՝ նշելով, որ ինքն է հանրահայտ լուսանկարի կինը: Նա իսկական ամերիկացի էր՝ չիրոկի հնդկացի ցեղախմբից, ամուսնու հետ տեղափոխվել էր Կալիֆորնիա ու աշխատանք գտել ջրադացում: Ամուսնու մահից հետո ստիպված էր վեց երեխայի մասին հոգ տանել ու առավոտից իրիկուն աշխատել բամբակի դաշտերում: Լուսանկարի շնորհիվ Թոմփսոնը դարձավ ամենահայտնի փախստականն աշխարհում, անգամ երբ նա մահացավ, ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանը ցավակցություն ուղարկեց՝ նշելով, որ տիկին Թոմփսոնը ուժի ու վճռականության խորհրդանիշն էր Մեծ ճգնաժամի օրերին: Իսկ ղվ էր լուսանկարիչը: Դորոթեան ամերիկացի փաստավավերագրող ֆոտոլրագրող էր, որ հայտնի դարձավ Ամերիկյան մեծ ճգնաժամն ու հետևանքները լուսաբանող անչափ մարդկային ֆոտոպատումներով: Յոթ տարեկանում հիվանդացել էր պոլիոմիելիտով, ինչի հետևանքով նրա աջ վերջույթն անշարժ էր ու ոլորված, և ոտնաթաթը գետնին դնել չէր կարողանում: Ավելի ուշ նա կասի հարցազրույցներից մեկում. «Ինձ պատահած ամենակարևոր բանն այս կյանքում պոլիոմիելիտն էր: Իմ կաղությանն ինձ ձևավորեց, ուղղություն տվեց, սովորեցրեց, օգնեց ինձ ու ստորացրեց»: Տասներկու տարեկանում հայրը լքում է ընտանիքը: Դորոթեան չի ներում հորն ու հրաժարվում է վերջինիս ազգանունից՝ փոխարինաբար ստորագրելով մոր ազգանունով՝ Լենգ: Ընտանիքը տեղափոխվում է Նյու Յորքի հրեական թաղամաս: Լենգը թափառում է փողոցներով, զննում մարդկանց ու սովորում նրանց

նայել վավերագրողի աչքով: Դպրոցն ավարտելուց հետո որոշում է ֆոտոկրթություն ստանալ, աշխատակցում է ֆոտոստուդիաներին՝ ծանոթանալով ֆոտոյի գաղտնիքներին ու տեխնիկային:

Մի քանի տարի անց Սան Ֆրանցիսկոյում սեփական լուսանկարչատուն է բացում: Հիմնականում լուսանկարում էր կառավարության համար. ցավոք, նրա արած դիմանկարները շրջում էին անստորագիր ու առանց հեղինակային իրավունքի:

Մեծ ճգնաժամը իր հարվածներն է հասցնում: Մարդիկ դադարում են լուսանկարչատուն գալ, և Դորոթեան դուրս է գալիս փողոց՝ լուսանկարելու ու գտնելու նոր օբյեկտներ:

1935 թվականին Լենգին հրավիրում են որպես լուսանկարիչ տնտեսական հետաքննություն անցկացնելու: Տպավորված Լենգի աշխատանքներից՝ նրան հրավիրում են աշխատելու ԱՄՆ-ի կառավարությունում՝ ֆերմաների անվտանգության ադմինիստրացիայում: Լենգը սկսում է նկարել աշխատավոր մարդկանց՝ վեր հանելով չքավոր բանվոր դասակարգի խնդիրները: Այդ տարիների նրա լուսանկարները դառնում են ամերիկյան պատմության և ֆոտոյի պատմության խորհրդանիշը: Նա օգտագործում էր լուսանկարչատան տեխնիկան, լուսանկարելուց առաջ խնդրում էր մարդկանց կիսվել իրենց պատմությամբ, փորձում էր ճանաչել նրանց: Արտասովոր ունակություն ուներ. կարողանում էր շփվել ցանկացած մարդու հետ: Սաստիկ գաղտնապահ էր: Երբեք չէր խոսում իր անձնական կյանքից: Եվ երբեք չէր լուսանկարվում: Իր տեսախցիկն անվանում էր «շատ դեմոկրատ արարած»: Մարդիկ նրան վստահում էին, հաճախ շատ անձնական պատմություններով կիսվում:

Իր ուսանողներին մշտապես ասում էր. «Տեսախցիկը գործիք է, որ սովորեցնում է մեզ ինչպես տեսնել: Տեսախցիկը գործիք է, որ սովորեցնում է մեզ ինչպես տեսնել առանց տեսախցիկի»:

Լենգն առաջին կին լուսանկարիչն էր, որ Գուգենհեյմի կրթաթոշակի արժանացավ: Մահվանից երեք ամիս առաջ Նյու Յորքի ամենահեղինակավոր՝ Ժամանակակից արվեստի թանգարանը

կազմակերպեց Դորոթեա Լենգի աշխատանքների հետահայաց ցուցադրությունը: Դա առաջին կին լուսանկարչի անհատական ցուցադրությունն էր ՄՕՄԱ-ի թանգարանում, որին, ցավոք, Լենգը չհասցրեց ներկա գտնվել. վերջին տարիներին նա պայքարում էր նաև քաղցկեղի դեմ: Ի դեպ, 2020 թվականին ՄՕՄԱ-ն ևս մեկ ցուցադրություն կազմակերպեց. «Դորոթեա Լենգ. բառեր ու պատկերներ»:

2003 թվականին Լենգի անունը գրվեց ԱՄՆ Կանանց փառքի դահլիճում, իսկ 2008-ին՝ Կալիֆորնիա նահանգի Փառքի դահլիճում: Այսօր Դորոթեա Լենգի անունը պատվով կրում է այն դպրոցը, որի կողքին Լենգը լուսանկարել էր իր հանրահայտ ֆոտոն՝ փախստական մորը երեխաների հետ:



Ֆրիդա Կալո

1907-1954 թթ.

1907 թվականի ամռան երկրորդ ամիսն էր՝ հորդառատ անձրևների շրջանը: Եղանակը սառն էր ու խոնավ: Մեխիկոյի ամենաաղմկոտ թաղամասում՝ Կոյոականում, ծնվեց Կալոների երրորդ աղջիկը՝ Ֆրիդան: Ավելի ուշ օրիորդը հայտարարեց, որ ինքը հեղափոխության դուստրն է և ծնվել է 1910 թվականին՝ Մեքսիկայի հեղափոխության տարին:

Վեց տարեկանում Ֆրիդան հիվանդացավ պոլիոմիելիտով, ինչի հետևանքով մի ոտքը դարձավ մյուսից բարակ ու կարճ: Թաղի երեխաները ծաղրում էին ու գոռում նրա հետևից՝ Ֆրիդա՝ «փետից ոտ»: Պատիկ Ֆրիդան կատաղում էր ու լացը զսպելով՝ օդում թափահարում բռունցքը:

Հայրը որոշում է, որ աղջիկը չպետք է վիատվի, այլ զբաղվի սպորտի բոլոր տեսակներով՝ բոքս, ֆուտբոլ, ձեռնամարտ, լող: Մայրը դեմ էր. ո՞վ էր տեսել Մեքսիկայում նման բան, ու հետո ի՞նչ կասեին մարդիկ իրենց դստեր մասին: Նա պարկեշտ կին էր ու հավատացյալ, գրել-կարդալ չգիտեր, բայց դուստրերին սովորեցնում էր կարուճն անել, եփել-թափել, պլպլացնել տունն ու այգին: Իսկ Ֆրիդան երազում էր բժիշկ դառնալ: Նա հագնում էր տղամարդու կոստյումներ, հոր հետ միասին գնում էին ծովափ, ուր հայրը սիրողական նկարում էր, Ֆրիդան էլ սիրուն քարեր ու մանր կենդանիներ էր հավաքում, հետո տանում էր տուն ու մանրադիտակով ուսումնասիրում:

Դպրոցում շատ լավ էր սովորում, սիրում էր կարդալ և ընկերություն էր անում խելացի ու ըմբոստ մի խմբի հետ, որի անդամները կոչում էին իրենց «Կաչուչաս»: Նրանք ներկայացումներ էին

տալիս, կազմակերպում ընթերցումներ ու բանավեճեր և կրում էին նույնանման գլխարկներ՝ կաշուչասներ: Խմբի առաջնորդն Ալեխանդրո Գոմեսն էր՝ փայլուն հոետոր, բարետես ու մարզված մի տղա, որ առանձնանում էր բոլորից վարվելակերպի ընտիր իմացությամբ:

Ֆրիդան էլ երեք լեզու գիտեր, սրամիտ էր ու արվեստասեր: Ալեխանդրոն ու Ֆրիդան երկար-բարակ նամակներ էին իրար գրում ու քննարկում իրենց կարդացած գրքերը: Նրանք անբաժան ընկերներ էին: Ամռան վերջին սիրահարվեցին իրար, ու նամակներին դադար չկար:

Ֆրիդան տասնհինգ տարեկան էր ու երջանիկ:

Այդ թվերին ավտորուսները նորություն էին Մեխիկոյում ու մշտապես լեփ-լեցուն էին ուղևորներով, մինչդեռ տրոլեյբուսները կիսադատարկ էին գնում-գալիս: Ավտորուսի վարորդները վարում էին շատ արագ, ասես տորեադորներ լինեին ցլամարտի դաշտում, ու ավտոլթարներն այնքան շատ էին, որ դիմապակուն սուրբ Մարիայի նկարն էին փակցնում՝ չարից ու փորձանքից պաշտպանելու համար: Երբեմն օգնում էր:

1925 թվականի սեպտեմբերյան մի օր Ֆրիդան նախ կորցրեց անձրևանոցը, հետո Ալեխանդրոյի հետ ավտորուսից ուշացան՝ հագիվ տեղ գտնելով մյուս ավտորուսի վերջին շարքում: Արագ սլացող ավտորուսն անկյունային հատվածում թեքվելիս բախվեց տրոլեյբուսին:

Ջոհերը շատ-շատ էին: Երբ շտապօգնությունը տեղ հասավ, նրանք Ֆրիդային անգամ ուշադրություն չդարձրին: Չողը, որից բռնվում են ուղևորները, խրվել էր աղջկա կոնքային հատվածում, ու նա արնահոսում էր: Ալեխանդրոն համոզում է բժիշկներին փրկել սիրած աղջկան, ու նրան տանում են Կարմիր խաչի հիվանդանոց:

Ֆրիդան ջարդել էր կողոսկրերը, անրակները, կոնքը, ողնաշարը, աջ ոտքը, փսասված էին որովայնը, արգանդը, կոնքի օրգանները, ձեռքերը: Վիրահատող բժիշկները վստահ չէին, որ նա կդի-

մանա: Այն աղջնակը, որի վագքը հիշեցնում էր պատլիկ ծիտիկի արագասահ թոխք, որ սլանում էր ու ցատկում ավտոբուսների ու տրոլեյբուսների մեջ, այժմ չէր կարող քայլել, կրում էր գիպսե սեղմիրան: «Մայրս խոսելու ունակությունը կորցրել էր ամիսներով, հայրս հիվանդացավ, ես նման էի սարկոֆագի,- կպատմի հետո Ֆրիդան,- իսկ գիշերները հիվանդանոցում մահը պարում էր իմ անկողնու շուրջ»:

Ցավերն անտանելի էին: Հայրն առաջարկում է աղջկան նկարել: «Բայց ինչ նկարեն», - հարցնում է Ֆրիդան: «Ինչ տեսնում ես, այն էլ նկարիր,- ասում է հայրն ու մահճակալի գլխավերևում ամրացնում մի հայելի,- նկարիր ինքդ քեզ»:

Ֆրիդան նկարում է քույրերին, ծնողներին, ուսանողական ընկերներին, իսկ ամենաշատը՝ ինքն իրեն, որովհետև ամենալավը հենց իրեն գիտեր: Կազդուրվելու ընթացքը երկարատև էր ու տանջալի: Նա նորից սովորում է քայլել: Անընդհատ կարդում է, մինչ ընկերներն ավարտում են համալսարանը, ակտիվորեն զբաղվում քաղաքականությամբ:

Այդ թվերին Մելիկոյում մարդիկ ատրճանակներով շրջում էին փողոցներում և ցանկության դեպքում կարող էին կրակել, օրինակ, փողոցը լուսավորող լապտերներին:

Ֆրիդան ընկերներից մեկի՝ Թինա Մոդոտայի երեկույթի հյուրերից էր: Հարբած մասնակիցներից մեկը կրակում է գրամոֆոնին: Ֆրիդան վախենում է, բայց հյուրը հետաքրքրում է նրան: Աչքի պոչով սկսում է ուսումնասիրել: Նա Գիեզո Ռիվերան էր՝ Մեքսիկայի ամենահայտնի նկարիչն ու ամենահայտնի կնամուր: Ռիվերային էլ տպավորում են Ֆրիդայի նկարները, ու նա երկար ճանապարհ է կտրում ու հասնում Կոյոական՝ հանդիպելու նկարչուհուն:

- Տեսնում եմ՝ Ձեզ հետաքրքիր է իմ աղջիկը,- ասում է հայր Կալոն:

- Այո՛, շատ:

- Նա սատանա է:

- Գիտեմ,- ասում է Ռիվերան:

- Դե՛, ես զգուշացրի:

Շուտով Ֆրիդան ու Դիեգոն ամուսնանում են: Ֆրիդան 22 տարեկան էր, Դիեգոն՝ 42: Մայրը դեմ էր ամուսնությանը. Դիեգոն հասցրել էր երկու անգամ ամուսնանալ ու բաժանվել, երեխաներ ուներ: Նորապսակների մասին ասում էին՝ կարծես փիղն ու աղավնին ամուսնանան:

Նրանք սովորական զույգ չէին, ապրում էին իրար դիմաց գտնվող տարբեր տներում. Ֆրիդան՝ կապույտ տանը, Դիեգոն՝ վարդագույն ու սպիտակ: Նրանց արվեստանոցներն էլ էին առանձին:

Ֆրիդան ծանոթանում է սյուրռեալիստական շարժման հիմնադիրներից Անդրե Բրետտոնի հետ, որը ի լուր աշխարհի հայտարարում է. «Ֆրիդան ռու՛մբ է՝ ժապավենով կապված»: Ֆրիդային հրավիրում են Փարիզ, ուր նա մտերմանում է Շագալի ու Պիկասոյի հետ: Ֆրիդայի մասին խոսվում է ամենուր: Նրա նկարները պատմում էին ցավի մասին, ամենօրյա ռեժիմով հաղթահարվող հիվանդության, վթարի հետևանքով երեխաներ ունենալու անկարողության, մեծ տխրության ու մենակության մասին:

Ֆրիդան առանձնանում էր նաև իր արտաքին հագուկապով. հագնում էր մեքսիկական ավանդական երկարփեշ զգեստներ՝ նախշազարդ ու գունավոր, մշտապես մազերը զարդարում էր ծաղիկներով, կրում էր աչքի ընկնող զարդեր: Փարիզյան նորաձևության աշխարհը ուշի-ուշով հետևում էր Ֆրիդային: Էլզա Սկիապարելին, ոգեշնչված Կալոյով, ստեղծում է հագուստ, որը «Վոգ Փարիզը» ցուցադրում է իր էջերում:

Լուվրը գնում է «Շրջանակ» կտավը՝ Կալոյին դարձնելով առաջին մեքսիկացի նկարիչը, որ ցուցադրվել է իրենց հավաքածուում: Ֆրիդայի մասին ասում էին, որ նա կարող էր վաճառել այն ամենը, ինչ նկարում էր հենց այդ պահին: Եղել են դեպքեր, երբ նրա նկարները գնվել են, երբ դեռ անավարտ էին ու նկարակալի վրա:

Առողջական խնդիրները, սակայն, գնալով խորանում էին, ողնաշարի ցավերը՝ սրվում: Կալոն այլևս չէր կարողանում նստել կամ

կանգնել: Նա կրում էր քսանութ տարբեր սեղմիրան՝ գիպսից, կաշվից ու պողպատից: Ողնաշարի վիրահատության համար մեկնում է Նյու Յորք: Վիրահատությունը ձախողվում է, ու կարիք է առաջանում մի շարք նոր վիրահատությունների: Չնայած թույլ առողջությանը՝ կյանքի վերջին տարիներին նա զբաղվում էր քաղաքականությամբ և կրկնում, որ հեղափոխությունն ապրելու միակ պատճառն է:

Լուսանկարիչ ընկերներից Լույս Ալվարես Բրավոն 1953 թվականին կազմակերպում է Ֆրիդայի առաջին անհատական ցուցահանդեսը Մեքսիկայում: Ֆրիդային անկողնային ռեժիմ էր նշանակված. բոլորը գիտեին, որ նա չի կարող գալ: Բայց Ֆրիդան հայտնվում է շտապօգնության մեքենայով և պատգարակից տեղափոխվում մահճակալ՝ ամբողջ երեկոն անցկացնելով հյուրերի հետ: Նա անվերջ կատակում էր ու իր սիրած տեկիլան խմում:

1954 թվականի հուլիսին Ֆրիդա Կալոն հիվանդանում է թոքաբորբով: Չնայած անկարողությանը՝ իր մեջ ցույցերին մասնակցելու ուժ է գտնում: Մի քանի օր անց՝ 1954 թվականի հուլիսի 12-ին, ջերմությունը սաստիկ բարձրանում է: Դիեզոն մինչև ուշ գիշեր մնում է Ֆրիդայի հետ: Գիշերը ժամը 4-ին Կալոն զարթնում է ու բողբոսում անտանելի ցավերից: Բուժքույրը ցավազրկող է ներարկում: Վաղ առավոտյան, սակայն, հիվանդի ձեռքերը սառն էին: Բուժքույրն ուղարկում է վարորդին Ռիվերայի հետևից: Մանուելը Ֆրիդայի հոր վարորդն էր եղել ժամանակին ու ճանաչում էր Ֆրիդային մանկուց: Նա թակում է Դիեզոյի տան դուռը: «Մենյոր,- ասում է վարորդը,- փոքրիկ Ֆրիդան մահացավ»:

Անկողնու կողքի սեղանիկին Ֆրիդայի օրագիրն էր դրված: Վերջին էջում փոքրիկ սև հրեշտակ էր նկարել ու տակը գրել. «Ուրախ եմ, որ գնում եմ ու հույս ունեմ՝ էլ հետ չեմ գա»: Նկարակալի վրա կիսատ կտավ էր՝ կյանքով լեցուն մրգեր ու ձմերուկ՝ վրան փորագրված՝ «Կեցցե՛ն կյանքը»:



Դորըթի Հոլֆին

1910-1994 թթ.

Թեև Դորըթի Հոլֆինը ծնվել էր 20-րդ դարում, բայց ստացել էր 19-րդ դարի վերջին հատուկ կրթություն: Ծնողները հնագետներ էին, աշխատում էին անգլիական գաղութային երկրներում: Չորս աղջիկներից ամենամեծը Դորըթին էր: Նա ծնվել էր Կահիրեում: Այն ժամանակ Եգիպտոսը դեռ գտնվում էր Բրիտանական կայսրության ենթակայության ներքո և համարվում էր անգլիական գաղութներից մեկը: Դորըթին չորս տարեկան էր, երբ ծնողները որոշեցին Անգլիա գնալ: Սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Ծնողները վերադարձան Եգիպտոս՝ շուրջ չորս տարի Անգլիայում թողնելով երեխաներին միայն դայակների խնամակալության ներքո:

Դորըթին հետաքրքրվում էր քիմիայով, հատկապես գայթակղիչ էին բյուրեղներն ու նրանց կառուցվածքը, ինչը, ի դեպ, շատ տարածված հոբբի էր ու զրույցի թեմա 1800-ականներին հանգստյան մեկնող կանանց շրջանում: Մի անգամ, երբ քույրերի հետ մեկնում է Հյուսիսային Աֆրիկա՝ տեսակցելու ծնողներին, բակում փայլուն սև բյուրեղ է գտնում ու հիացած սկսում զննել: Նա հարցնում է ծնողների ընկերոջից՝ երկրաբան պարոն Ջոզեֆից, թե կարո՞ղ է արդյոք մի քիչ այն ուսումնասիրել: Պարոն Ջոզեֆը ոչ միայն թույլատրում է, այլև նվիրում է աղջկան գեոդեզիայի սարքավորումներով լի մի տուփ ու խրախուսում շարունակել նույն կերպ:

Իր տասնվեցամյակին Դորըթին անակնկալ նվեր ստացավ. ֆիզիկայի բնագավառի Նորելյան մրցանակակիր Ուիլյամ Հենրի Բրեգի գիրքն էր, որտեղ նկարագրվում էր, թե ինչպես ռենտգենյան ճառագայթների միջոցով ուսումնասիրել բյուրեղները: Դորըթին ցնծում էր: Ավելի լավ նվեր անհնար էր պատկերացնել:

Դպրոցում հատուկ թույլտվություն է խնդրում, որպեսզի իրեն թույլ տան միանալ տղաների խմբին, ուր քիմիա էին սովորում: Դորըթին ու իր ընկերուհի Նորան խմբի միակ աղջիկներն էին: Դպրոցական ծրագրում ներառված չէր լատիներենի ուսուցումը, որը հարկավոր էր իմանալ Օքսֆորդ ընդունվելու համար: Դպրոցի տնօրենն անձամբ սովորեցնում է աղջկան:

Երբ 1932 թվականին Դորըթին ավարտեց Օքսֆորդը, աշխատանք գտնելը գրեթե անհնար էր: Ռենտգենյան բյուրեղագրության լաբորատորիայում ուսումնասիրում էին կենսաբանական բյուրեղներն ու պարզում մոլեկուլների կառուցվածքը: Դորըթին միանում է նրանց:

Ու թեև քսանչորս տարեկանում Դորըթիի մոտ ախտորոշում են ռևմատիկ արթրիտ, նա դառնում է իր ժամանակի լավագույն բյուրեղագետներից մեկը: Մի քանի տարի անց ծնվում է նրա առաջնեկը, գիտական հետազոտություններն էլ մեկը մյուսի հետևից փայլուն հաջողությամբ էին պսակվում, բայց վարակի պատճառով արթրիտը գլուխ է բարձրացնում: «Ես նկատեցի, որ դժվարությամբ եմ վեր կենում ու հագնվում: Սովորական բաները վերածվել էին ցավոտ պրոցեսի, բոլոր հյուսվածքներս ցավում էին»: Մի քանի շաբաթվա բուժումից հետո, երբ Դորըթին վերադարձավ լաբորատորիա, նկատեց, որ մատներն այնպես են վնասվել, որ չի կարողանում ռենտգենի սարքի գլխավոր անջատիչն օգտագործել, իսկ այն շատ անհրաժեշտ էր փորձերի ժամանակ: Դորըթին համբերատար կերպով ավելի երկար բռնակ սարքեց անջատիչի համար ու սկսեց գլուխը կախ աշխատել:

Տասնամյակ շարունակ, չհաշված արթրիտի սուր ցավերը, նա մշտապես անխոնջ աշխատում էր: Քենբրիջում, ապա Օքսֆորդում նա ընտրում էր հենց այն ծրագրերը, որոնցից մյուսները խուսափում էին:

Մի անգամ պատահաբար հանդիպում է Էռնստ Չեյնին, որը կենդանիների վրա պենիցիլին էր փորձարկում: Շուրջ չորս տարի Դորըթին գլուխ ջարդեց՝ հասկանալու պենիցիլինի խճճված կա-

նուցվածքը: Այդ գիտելիքը հետագայում կօգտագործեն դեղագետները՝ ստեղծելու կիսասինթետիկ պենիցիլին:

Տասը տարի անց Դորըթին հայտնագործեց վիտամին B12-ի կառուցվածքը, իսկ 1964 թվականին արժանացավ Նոբելյան մրցանակի քիմիայի բնագավառում: Նա առաջին անգլիացի կինն էր, որ Նոբել էր ստանում, իսկ քիմիայի բնագավառում մինչ Դորըթին երկու կին էին արժանացել այս մրցանակին՝ Մարի Կյուրին և Կյուրիի դուստրը՝ Իռեն ժոլիո-Կյուրին:

1969 թվականին նա վերջապես գտավ ինսուլինի գաղտնիքը: Դորըթին հիմնեց Բյուրեղագետների միջազգային ասոցացիան:

Երիտասարդ տարիներից Դորըթին ներգրավված էր խաղաղության համար պայքարող կազմակերպությունների աշխատանքներում, օրինակ՝ Ազգերի լիգայի: Առաջին աշխարհամարտի ժամանակ Դորըթին կորցրել էր իր չորս քեռիներին և շատ լավ գիտեր կորստի գինն ու ցավը:

1953 թվականին ԱՄՆ-ն մերժում է նրան մուտքի վիզա տրամադրել, որովհետև Դորըթին անդամակցում էր գիտական մի խմբի՝ «Գիտությունը հանուն աշխարհի», որի անդամներից ոմանք կոմունիստ էին: Ավելի ուշ նրան թույլատրեցին երկիր մտնել գլխավոր դատախազի երաշխավորությամբ:

1977 թվականին նա անցավ հանգստի՝ շարունակելով ակտիվ մասնակցել խաղաղասիրական տարբեր ակցիաներին ու միջոցառումներին:

1990 թվականին նրան տրվեց անժամկետ անձնագիր: Նա ոչ միայն փայլուն գիտնական էր, այլև բարի ու առատաձեռն ընկեր, հարազատ ուսուցիչ, ի դեպ, նրա ուսանողներից էր նաև Մարգարետ Թետչերը:

Նրա մասին ասում էին. «Դորըթին սեր է ճառագայթում առ քիմիա, առ իր ընտանիք ու ընկերներ, առ իր ուսանողներ, իր սիրելի բյուրեղներ ու առ իր քուլեջ... Նա երկաթե կամք ուներ, փխրուն ու հաշմված մարմին և սքանչելի ուղեղ: Նա մարդ-կախարդանք էր»:



Նուր Ինայաթ Խան

1914-1944 թթ.

Հաշմանդամությունը ոչ միշտ է տեսանելի: Կան նաև առողջական խնդիրներ, որոնք միջավայրային արգելքների հետ էական դժվարություններ են ստեղծում: Անտեսանելի առողջական խնդիրներից է, օրինակ, էպիլեպսիան: Անտեսանելի առողջական խնդիրներ ունեցող մարդիկ (աշխարհում ընդունված կարգ է) կրում են թննոցներ, որոնց վրա գրված է իրենց առողջական խնդրի բնույթը, և երբ, օրինակ, էպիլեպսիա ունեցող մարդը ցնցումների մեջ է ընկնում, թննոցի շնորհիվ նրան ոչ թե շփոթում են հարբեցողի հետ, այլ անմիջապես օգնություն են ցուցաբերում: Կան դեպքեր, երբ ծոցագրպանում թուղթ են պահում, որի վրա գրված է, թե նման դեպքերում անձանոթներն ինչպես կարող են օգնել և ինչ չանել՝ օգուտ տալու փոխարեն ավելի վնասելով:

Նուր Ինայաթ Խանն անտեսանելի հաշմանդամություն ուներ. արյան շրջանառության խանգարման հետևանքով մշտապես ցավում էին նրա ձեռքերն ու հատկապես մատները, և հենց այդ պատճառով էլ նա ոչ բոլորի պես էր Մորզեի այբուբենն օգտագործում: Նա աշխարհում առաջին կին ռադիոլարն էր:

Նուրը բրիտանացի հնդիկ արքայադուստր էր՝ մայսուրական սուլթանի ժառանգորդը: Նրա մայրն ամերիկուհի էր, հայրը՝ հնդիկ սուֆիստ, որ շրջում էր երկրներկիր, հանդիպում իմաստուն մարդկանց ու փիլիսոփաների: Եթե իսլամն արգելում էր երաժշտությունը, ապա սուֆիները ոչ միայն չէին արգելում, այլև հատուկ տեղ էին տալիս երաժշտությանը իրենց փիլիսոփայական գրույցների ժամանակ. նրանք կարծում էին, որ երաժշտության շնորհիվ մոտենում են Աստծուն:

Ոչ բոլոր սուֆիներն իրավունք ունեին սուֆիստական ուսմունքը տարածելու և սովորեցնելու: Նուրի հայրն այն քչերից էր, ում ասվել էր՝ գնա ու քո երաժշտությամբ արևելքն ու արևմուտքը կամրջիր: Եվ հայրը ճամփա էր ընկել: Միացյալ Նահանգներում ճամփորդելիս հանդիպել էր ապագա կնոջն ու առաջին իսկ հայացքից սիրահարվել:

Նուրը ծնվում է Մոսկվայում: Նա չորս երեխաներից ավագն էր, ու տանը կատակով Նուրին ասում էին «բաբուլյա» (ռուս. տատիկ), որովհետև մեծի պես խնամում էր իրենից փոքրերին: Վեց տարեկանում ընտանիքով տեղափոխվում են Փարիզ: Շատ մեծ տուն ունեին: Տարին բոլոր դուռը բաց էր բոլորի առաջ: Իմաստուն սուֆիները հավաքվում էին այստեղ՝ երկար-բարակ զրույցների ու բանավեճերի, նվագում էին, մեղիտացիաներ անում: Երեխաները համերգային փոքրիկ ներկայացումներ էին տալիս հյուրերի առաջ ու խաղում պարտեզում:

1927 թվականին հայրը որոշում է մեկնել հայրենիք: Կարոտել էր սիրելի Հնդկաստանը, նաև մի քիչ վատատողջ էր. կարծում էր՝ հայրենի եզերքը կօգնի շուտ ապաքինվելուն: Հիվանդությունը, ցավոք, խորանում է, ու հայրը հեռանում է կյանքից: Մայրը ցավից տանջվում էր. նա փակվում է սենյակում ու հրաժարվում որևէ մեկին տեսնելուց: Տասներեքամյա Նուրը ստանձնում է քույրերի ու եղբայրների խնամակալի դերը ու նրանց համար մայր դառնում: Սակայն երբ հոգսը ծանրանում էր, ու զգում էր, որ ինքն այլևս չի դիմանա, սկսում էր գրել: Շուտով նա մանկական հեքիաթների գիրք է հրատարակում, այն թարգմանվում է անգլերեն և գերմաներեն ու Եվրոպայում դառնում շատ հայտնի:

Սորբոնում Նուրը մանկական հոգեբանություն է ուսանում, իսկ Փարիզի կոնսերվատորիայում՝ երաժշտական արվեստ: Նուրը նաև տիրապետում էր մի քանի լեզվի և բոլորն էլ՝ գերազանց: Որպես գրող ու խաղաղարար նրա երազանքները բոլորովին այլ էին ու կապված էին միայն արվեստի հետ: Բայց 1939 թվականին նացիստական Գերմանիան ներխուժում է Լեհաստան, ինչին ի պատասխան՝ Անգլիան ու Ֆրանսիան պատերազմ են հայտարարում

Գերմանիային: Սկսվում է Համաշխարհային երկրորդ պատերազմը: Նուրը միանում է Կարմիր խաչին:

1940 թվականին, երբ գերմանական բանակը ներխուժում է Փարիզ, Նուրն ու իր փոքր եղբայրը՝ Վիլյայթը, որոշում են կայացնում: Այո, նրանք սուֆիներ էին ու դեմ էին բռնությանը, բայց ինքնական մեկնում են Անգլիա ու կամավորագրվում: Լոնդոնում Վիլյայթը միանում է Մեծ Բրիտանիայի թագավորական ռազմաօդային ուժերին, Նուրը՝ ռազմաօդային ուժերի կանանց օժանդակ ծառայությանը: Այստեղ նա սովորում է ռադիովարություն (մինչ այդ ռադիովար էին միայն տղաները):

Եվ մինչ Մորգեի այբուբենով Նուրը հաղորդագրություններ էր ուղարկում, բրիտանական հատուկ ծառայությունները նկատում են աղջկան և առաջարկում համագործակցել օպերատիվ-հետախուզական շտաբում: Հարկավոր էր մեկը, որ գերազանց կտիրապետեր լեզուների: Նացիստների կողմից օկուպացված Ֆրանսիայում պետք էր լրտեսել և գորքերի տեղաշարժի մասին հայտնել՝ օգնելով ֆրանսիական դիմադրությանը:

Պատրաստվելուց հետո հետախույզը մեկնելու էր օկուպացված Փարիզ, նա չէր լինելու պաշտպանված, և բռնվելու դեպքում ամենայն հավանականությամբ նրան գնդակահարելու էին: Նուրն առանց երկմտելու համաձայնում է:

Լրտեսական դպրոցում նա սովորում է զենք գործածել, աշխատել պայթյունիկների հետ, քողարկված լինել, ծածկագրված նամակներ ուղարկել և այլն: Սովորում էր շատ արագ: Նուրն ասես բնատուր ռադիովար լիներ: Տավիդ նվագելու կարողությունն այստեղ նրան շատ էր օգնում: Նրա մատները սովոր էին արագագործության, բայց դրանք մշտապես ախտահարված էին, ծածկված բշտիկներով ու սառույցի պես սառն էին: Հաճախ ծաղրաբար նրան կանչում էին այդ թվերին տարածված երգի բառերով՝ «Հաջող, Լույու»: Տնօրինությունից ոմանք ևս մտահոգ էին: Աղջիկն առանձնապես զենք չէր սիրում, դեմ էր երկակի խաղերին, բնավորությամբ խաղաղասեր էր: Հարցաքննությանը, կարծում էին, չէր դիմանա, անլուրջ էր, ֆիզիկապես անպատրաստ: Նուրն ականջի հետև է գցում

այս բոլոր կասկածներն ու գնում առաջ. նա լրջորեն մտադրված էր օգնել իր դաշնակիցներին:

Մադլեն. այդպես էր նրա լրտեսական անունը (թաքուն ձեզ ասեմ, որ այն իր պատմվածքի հերոսուհիներից մեկի անունն էր): Մադլենը «զինված» էր կեղծ անձնագրով, գրպանում մի քանի ֆրանկ ուներ, մի երկու դեղահաբ, որից մեկը ցիանիդ էր՝ թույն, որը կօգներ արագ մեռնել բռնվելու դեպքում: Վեց շաբաթ. ենթադրաբար այդքան էր տևում ռադիովար-հետախույզի կյանքը:

Նուրը միանում է օկուպացված Ֆրանսիայի հատուկ ծառայությունների ամենամեծ ցանցին, սակայն մի քանի օր հետո Գեստապոն՝ ֆաշիստական Գերմանիայի պետական գաղտնի ուստիկանությունը, ձերբակալում է լրտես ընկերներին: Ֆաշիզմի թշնամիներին մատնելու համար նացիստները կլորիկ գումար էին վճարում: Գայթակղվողները քիչ չէին: Նուրը պետք է շատ զգույշ լիներ: Լոնդոնից առաջարկում են հետ վերադառնալ: Նուրը մերժում է՝ գիտակցելով, որ Փարիզին Լոնդոնի հետ կապող միակ օդակն ինքն է:

Միայնակ նա վեց ռադիովարի գործ էր անում: Մշտապես փոխում էր բնակության վայրը, մազերը ներկում էր ու փոխում սանրվածքը, որպեսզի հանկարծ չբռնվեր: Փարիզի հնարնակ ընկերներն ու ծանոթները շատ էին օգնում նրան:

Նուրի շնորհիվ հայտնաբերում են ֆաշիստական զինամթերքի կայանները, կարողանում են ֆինանսավորել ու զինել ֆրանսիական դիմադրությանը, նաև իրականացնում են վիրավոր օդաչուների անվտանգ տեղափոխությունը: Նացիստները գիտեին Նուրին, անգամ նրա հաղորդագրություններն էին լսում, բայց չէին կարողանում բռնել նրան: Լոնդոնից հիացած հետևում էին աղջկան ու ապշում. միջին վիճակագրական լրտեսի աշխատանքը սովորաբար տևում էր վեց շաբաթ, Նուրն աշխատում էր գաղտնի արդեն երեք ամիս: Նրա հաղորդագրություններն անթերի էին, ավելի արդյունավետ անհնար էր գործել:


Հարյուր հազար ֆրանկ. այդքան վճարեցին մատնիչին, որ հայտնեց Նուրի հասցեն: Կար ևս մի գաղտնիք, ինչը հայտնի էր Գեստապոյին. Նուրը պաշտում էր կապույտ գույնը, ու նրա զգեստապահարանը միայն այդ գույնի հագուստից էր բաղկացած:

Նուրը հեշտ հանձնվողը չէր: Անգամ ձերբակալված՝ նա մի քանի անգամ փորձում է փախչել, բայց փոխարենն ամեն անգամ կտտանքներն են շատանում: Նրան հայտարարում են «խիստ վտանգավոր» ու պահում հատուկ փակի տակ: Տասն ամիս շարունակ նրան հարցաքննում են: Նա պահվում էր դատարկ ու ցուրտ խցում՝ ոտքերն ու ձեռքերը շղթայված: Նրան շարունակ տանջում են, ծեծում, բայց ֆաշիստները նրա շուրթերից այդպես էլ ոչ մի անուն չեն լսում:

1944 թվականի սեպտեմբերին Նուրին տեղափոխում են Դախաու՝ համակենտրոնացման ճամբար: Նուրին ու ևս երեք լրտես կնոջ սպասում էր գնդակահարություն: Նուրի գնդակահարությունը հետաձգվում է մեկ օրով: Ֆաշիստները կատաղած էին. ամբողջ գիշեր նրան դաժանորեն ծեծում են: Առավոտյան Նուրը փլվում է հատակին: Նրան հրամայում են ծնկել: Պահնորդներից մեկը գնդակահարում է նրան: Մահվանից առաջ Նուրը մեկ բառ է գոռում՝ *Liberte* (ազատություն):

1946 թվականին ֆրանսիական կառավարությունը հետմահու պարգևատրեց Նուր Ինայաթ Խանին Մարտական խաչի արժաթե աստղ շքանշանով, իսկ 1949 թվականին Անգլիան արժանացրեց նրան Գեորգիևյան խաչի: Այն տրվում էր ծայրաստիճան դժվար պայմաններում ցուցաբերած բացառիկ քաջության համար:

Նուրը հարավասիական ծագմամբ առաջին կինն է, որ 2019 թվականին Լոնդոնում արժանացավ կապույտ հուշատախտակի: Առ այսօր նա միակ մուսուլման, ազգությամբ հնդիկ կինն է, որի կիսանդրին Անգլիայի հանրային վայրում է, նրա դիմապատկերով նաև բրիտանական նամականիշ է թողարկվել:



Մերի Փաթիսերիւ Վերգիզ

1925-1986 թթ.

1954 թվականի հունվարի 30-ն էր՝ Մահաթմա Գանդիի հիշատակի օրը: Բժիշկ Քերոլ Ջեյմսոնը՝ գինեկոլոգիայի բաժանմունքի վարիչը, որոշել էր ուրախ երեկո կազմակերպել բաժնի աշխատակից բժիշկների համար: Ծանր շաբաթվանից հետո բոլորը կազմ-պատրաստ էին՝ վայելելու իրենց բաժին հանգիստը: Դժբախտաբար, վազանցում կատարելիս մեքենան հարվածում է նշանացույցին ու շրջվում անօգնական կրիայի պես՝ պատյանով հայտնված գետնին: Բժիշկներից մի քանիսն ուշագնաց են լինում, մի մասն էլ՝ ծանր վիրավորվում: Շուտով բոլորն ապաքինվում են, բացի բժիշկ Մերիից: Նրա ողնաշարը վնասվել էր, ու գոտկատեղից ներքև նա ոչինչ չէր զգում: Իր ուժեղ ոտքերը, որոնցով նա այնքան հպարտանում էր, այլևս անշարժ էին ու անօգնական: Մերին սկսում է անվասայլակ օգտագործել:

Ինչ անել և ինչպե՞ս ապրել:

Մերին ծնվել էր Հնդկաստանի Քերալա նահանգի Չիրեյ գյուղում, նա ութ երեխաներից յոթերորդն էր: Ընտանիքն ապրում էր բարեկեցիկ կյանքով, հայրը եկեղեցու և համայնքի հարգված առաջնորդ էր: Մերին սիրում էր կարդալ ու աղոթել, հետաքրքրվում էր անատոմիայով: Նա բարձր առաջադիմությամբ ավարտում է բժշկական քոլեջը, որոշում է մասնագիտանալ գինեկոլոգիայի գծով: Ամեն ինչ ըստ պլանավորածի էր ընթանում, բայց չարաբաս-

տիկ պատահարն ամեն բան շրջում է գլխիվայր: Ու սկսվում է նոր փուլ՝ վիրահատությունների ու աղոթքների:

Սկզբնական շրջանում բժիշկն ասում է, որ Մերին կկարողանա նստել: Դա փոքրիկ, բայց կայուն հաղթանակ էր: Հաղթանակ էր նաև այն, որ Մերին ինքնուրույն սկսեց իր սարին կապել. նա մշտապես աչքի էր ընկնում կոկիկոթյամբ, ու դա իսկապես կարևոր էր իր համար:

Մերին հասկանում է, որ պետք է հրաժեշտ տալ մանկաբարձությանն ու գինեկոլոգիային: Նրան հրավիրում են աշխատելու մանրէաբանության ինստիտուտում, բայց Մերին ուզում էր մարդկանց հետ աշխատել: Այդ ժամանակ բժիշկն առաջարկում է նրան ձեռքի վիրահատությամբ զբաղվել, դրանք մեծ մասամբ անցկացվում էին նստած: Հաջորդ օրը Մերին հայտնվեց հիվանդանոցում:

Երբ պոլիոմիելիտից տուժած բժիշկ Գվենդա Լուիսը վերադարձավ Ավստրալիայից և անմիջապես ընդարձակեց իր գործունեությունը, Մերին ապշած մնաց. փաստորեն կարելի է նաև այդպես: Ընտանիքի օգնությամբ նա որոշեց մեկնել Ավստրալիա և ամիսներ շարունակ նոր գիտելիքներով զինվեց: Հենց գիտելիքի շնորհիվ էլ նա դարձավ առավել անկախ ու շատ ավելի ուժեղ:

Նա ասում է. «Ես Աստծուց ուրբեր էի խնդրում, բայց նա ինձ թներ տվեց»:

Ավստրալիայում առաջին անգամ նրա մտքով անցնում է ֆիզիկական վերականգնողական կենտրոն բացել Հնդկաստանում: Ու նա մեկնում է Նյու Յորք՝ գիտելիքները խորացնելու:

Նյու Յորքում նա կրթաթոշակ է ստանում ու ֆիզիկական վերականգնողական ոլորտի առաջատար ու պիոներ բժիշկ Հովարդի դեկավարությամբ կուրս անցնում: Նյու Յորքում նա փորձարկում է ամենատարբեր բաներ՝ մեքենա վարել սովորելուց մինչև միայնակ ապրել:

Կուրսն ավարտելուց հետո Մերին վերադառնում է Հնդկաստան՝ զինված նորագույն գիտելիքներով: Նա առաջին հնդիկ կինն էր, որ գլխավորում է ֆիզիկական վերականգնողական կենտրոնը: 1966 թվականին կատարվում է Մերիի երազանքը. նա հիմնում է Հնդկաստանի առաջին ֆիզիկական վերականգնողական ինստիտուտը (այն գործում է մինչ այսօր): Առաջնահերթ այստեղ օգնում էին տրավմաների ենթարկված մարդկանց:

Ի երախտագիտություն Մերի Վերգիզի անսահման նվիրումի ու ներդրումի՝ 1972 թվականին նրան շնորհվեց նախագահի «Պադմա Շրի» մրցանակը, 1985-ին նա արժանացավ հեղինակավոր «Վորլդ Վիժըն» մրցանակի: 1986 թվականին Վերգիզին հիմնեց «Մերի Վերգիզի» բարեգործական հիմնադրամը, որ դրամահավաք էր կազմակերպում և օգնում բոլոր այն մարդկանց, որոնք չէին կարող գնել արհեստական վերջույթներ, անվասայլակներ և այլն: Հիմնադրամի մյուս կարևոր գործունեությունը կրթական ոլորտի բարելավմանն էր ուղղված: Առ այսօր այն անցկացնում է կրթական նորարարական ծրագրեր և պրոֆեսիոնալ ուսուցում է տալիս հաշմանդամություն ունեցող մարդկանց:



Մարիա դա Պենյա

ծնվ. 1945 թ.

Բրազիլիան շատերիս պատկերացումներում արևադարձային տաք երկիր է, որտեղ բոլորը հրաշալի ֆուտբոլ են խաղում ու սրտաճնիկ սերիալներ նկարահանում: Բայց քչերը գիտեն, որ Բրազիլիան կանանց համար աշխարհի ամենավտանգավոր երկրներից մեկն է: Այստեղ ամեն երկու բուստն մեկ որևէ կնոջ ինչ-որ վտանգ է սպառնում:

Այսօր 75-ամյա Մարիա դա Պենյան արդեն քառասուն տարի շարունակ կատաղի պայքար է մղում հանուն կանանց իրավունքների: Նրա մասին ասում են. «Այս կինը փոխեց հասարակությունը»: 2006 թվականին Բրազիլիայի Հանրապետությունն ընդունեց Մարիա դա Պենյայի օրենքը: Ու՛մ էր այն պետք:

Մարիան հիշում է, որ տարիներ առաջ, երբ դեռ երիտասարդ էր ու շատ բան չէր հասկանում, ոչ ոք չէր խոսում ընտանեկան բռնության մասին. կանայք ունեին լավ կամ վատ ամուսին, ու եթե կնոջ բախտը չէր բերել, և նրան վատ ամուսին էր բաժին հասել, նա պարզապես լռում էր՝ համակերպվելով ճակատագրին:

Մարիան ուսանող էր, երբ հանդիպեց Մարկոսին՝ համեստ ուսուցչին Կոլումբիայից: Սիրահարվեցին, ամուսնացան, երեք հրաշալի աղջիկ ունեցան, ու հետո մի օր ամեն ինչ սկսեց փոխվել: Ամուսինը կամաց-կամաց դարձավ անկառավարելի, մոլեգին բռնարար: Վիրավորանքն ու ծեծը դարձավ նրանց կյանքի մի մասը:

Յոթ տարի անց՝ մի չարաքաստիկ գիշեր էլ, վայրագ ամուսինը կրակում է քնած Մարիային: Փամփուշտը դիպչում է կնոջ ողնաշարին՝ ընդամիշտ զրկելով նրան ինքնություն քայլելու ունակությունից: Սակայն ոստիկանները հավատում են Մարկոսի ստերին, թե իբր նա խոնփացնում էր իր անկողնում, երբ ինչ-որ գողեր հարձակվել են իր կնոջ վրա:

Հիվանդանոցից վերադառնալիս Մարիան հայտնվում է փակի տակ. բռնաբար ամուսինը թույլ չի տալիս անգամ զրուցել հարազատների կամ ընկերների հետ: Մի անգամ էլ նույնիսկ փորձում է էլեկտրահարել լոգանք ընդունող կնոջը, ու Մարիան հասկանում է՝ ամեն գնով պետք է փախչել տնից: Չնայած անվասայլակով տեղաշարժվող մարդուն հաճախ հանդիպող արգելքներին, միևնույնն է, պիտի սկսի գործել, պիտի բարձրաձայնի իր փորձությունների մասին, պիտի պատժի հանցագործին.

«Ես տասնինը տարի և վեց ամիս պայքարել եմ, որպեսզի նախկին ամուսինս բանտում հայտնվի, բայց ամեն անգամ նրան ազատ էին արձակում»:

Բրազիլիայում պարզապես չկար որևէ օրենք, որի համաձայն՝ կանայք պաշտպանված կլինեին ընտանեկան բռնությունից: Ոստիկանության և դատարանների դռներն ապարդյուն ծեծելուց հետո Մարիան դիմում է Մարդու իրավունքների միջամերիկյան կոմիտեին: «Դա Պենյան ընդդեմ Բրազիլիայի» գործը քննելուց հետո կոմիտեն հարկադրում է երկրի կառավարությանը փոփոխություն անել օրենսդրության մեջ: Առաջին անգամ ընդունվում է մի օրենք, որը կարևորում էր կնոջ իրավունքներն ու անվտանգությունը: Դա նաև նշանակում էր, որ Մարիան դեռ շատ բան ուներ անելու իր հայրենիքում: Հարկավոր էր կանանց իրազեկել օրենքի մասին, օգնության ձեռք մեկնել բռնության զոհերին, պատմել, որ նրանք այլևս միայնակ չեն:

Հիմա ամբողջ Բրազիլիան գիտի Մարիա դա Պենյայի օրենքի մասին: Բազմաթիվ կանայք խոստովանում են, որ օրենքը փրկել է իրենց կյանքը: Մարիան համոզված է՝ չի կարելի կանգ առնել, որովհետև ոչ մի կին արժանի չէ նման տառապանքների:



Վիլմա Մանկիլեր

1945-2010 թթ.

«Օկլահոմա» բառացի նշանակում է կարմիր մարդիկ, այսինքն՝ հնդկացիներ: Ամերիկայի հենց այս նահանգում դեռևս ապրում էին բնիկ ամերիկացիները՝ չիրոկի ցեղախմբի հնդկացիները: Նրանք հիմնականում զբաղվում էին հողագործությամբ, աճեցնում էին բույսեր, կենդանիներ էին պահում ու տիրապետում արհեստների:

Դեռևս 19-րդ դարում հնդկացիական ավանդական ցեղախումբը բաժանված էր երկու մասի՝ սպիտակների ու կարմիրների: Սպիտակները յոթ ընտանիքի առաջնորդներից կազմված խումբ էին: Այն փոխանցվում էր ժառանգաբար, նրանց ձեռքում էին կրոնն ու հավատալիքները, ծիսաբեր ուժի շնորհիվ կատարվող ապաքինումները, աղոթքներն ու մաքրումը: Կարմիր խումբը կազմված էր առողջ և ուժեղ երիտասարդներից: Նրանք պատերազմողներն էին: Չիրոկիները հավատացած էին, որ պատերազմը կեղտոտում է մարդու հոգին, և պատերազմից հետո ռազմիկները պարտավոր էին մաքրվել, միայն դրանից հետո էր թույլատրվում գյուղ վերադառնալ ու ապրել համայնքային կյանքով:

Պատերազմների ընթացքում գերեվարվածները դառնում էին ստրուկներ: Չիրոկիները նման դեպքում ասում էին, որ մարդն անբախտ է, և ստրկությունը դիտարկում էին իբրև ժամանակավոր անհաջողություն, մինչև նոր պատերազմում վերջինս կազատագրվեր կամ կշարունակեր էլի անբախտ մնալ:

Չիրոկիների լեզուն բազմահամադրական է, այսինքն՝ լեզվի բառերը կազմված են շատ մասերից, օրինակ՝ երբ չիրոկին ասում է՝ «նա վիճում է անընդհատ և միտումնավոր նպատակադրված»,

նկատի ունի փաստաբանին, իսկ «նա վերջիվերջո բռնում է մարդկանց և վճռական տոնով»՝ ոստիկանին:

Ավանդաբար չիրոկի կանայք տնօրինում էին տնային տնտեսությունը, նրանց պատվում էին՝ որպես կյանք պարգևողների: Երբ զույգն ամուսնանում էր, տղամարդն էր կնոջ ընտանիք գնում, քանի որ համարում էին՝ երեխա ունենալիս կինը կարիք կունենա մոր ու բարեկամուհիների:

Չիրոկի ցեղի կառավարումը հիմնականում պատկանում էր միայն տղամարդկանց: Բայց ահա 1945 թվականին ծնվեց մի աղջիկ՝ Վիլմա Մանկիլերը, որ չիրոկի հնդկացի էր ու ընտանիքում տասնմեկ երեխաներից վեցերորդը: Նա մկանային դիստրոֆիայի հազվադեպ պատահող տեսակից ուներ, սակայն դա բնավ նրան չխանգարեց, որ նա դառնա չիրոկիների առաջին կին ցեղապետը, բայց ամեն ինչ հերթով:

Վիլման տասնմեկ տարեկան էր, երբ ամերիկյան կառավարությունը ստիպողաբար տեղահանում է հնդկացիներին ու ստիպում Օկլահոմայից հեռանալ Սան Ֆրանցիսկոյի ամենաչքավոր հատվածը: ԱՄՆ-ի կառավարությունը փորձում էր հնդկացիական ցեղերին բաժան-բաժան անել ու աստիճանաբար վերացնել:

Կալիֆոռնիայում կյանքը ետում էր: Այստեղ կանայք պայքարում էին իրենց իրավունքների համար, հակապատերազմական ցույցեր էին ամեն օր: Վիլման երբեք չէր տեսել հեծանիվ ու ինքնագլոր, չիրոկիները չունեին հեռախոս ու տնային սանհանգույց: Աղջիկն ասես հայտնվել էր այլմոլորակայինների քաղաքում. ամեն ինչ նոր էր ու տարօրինակ, և համառություն էր պետք ու անկոտրում կամք՝ չկորցնելու հնդկացիական ինքնությունն ու ինտեգրվելու նոր աշխարհում:

Համալսարանն ավարտելուց հետո Վիլման վերադառնում է հայրենի Օկլահոմա: Նա հասցրել էր ամուսնանալ ու բաժանվել,

ապրում էր երկու աղջիկների հետ պապիկի ազարակում: Քսանամյա բացակայությունից հետո նա փորձում է աշխատանք գտնել ու վերադառնալ չիրոկի համայնք:

Առաջին բանը, որ տեսավ Վիլման, հնդկացիների ընտանիք էր՝ ապրող մեքենայի մեջ, որ կայանել էին հենց գետի ափին, կինն էլ լվացք էր փռում, ապա մի ուրիշ ընտանիք տեսավ՝ ավտոբուսում ապրող: Այս երկու տեսարանները ցնցող ազդակ են դառնում Վիլմայի համար, ու նա որոշում է իր գիտելիքն ու փորձը ի սպաս դնել ու օգնել համերկրացիներին:

Նա դառնում է տնտեսական աճի խթանման պատասխանատու, իսկ ավելի ուշ հիմնում է համայնքային զարգացման վարչություն: Նրա առաջին գործարկած ծրագիրը Բելում էր. Չիրոկի համայնքի մի փոքրիկ մաս՝ 200 ընտանիքից բաղկացած, չուներ ջրային համակարգ: Այդ տարածքում անաշխատունակությունը մեծ տոկոս էր կազմում, ու մարդկանց չէր լքում անօգնականության զգացումը: Տեղացիները չէին հավատում, որ կինը կկարողանա օգնել իրենց, բայց 14 ամսվա ընթացքում Մանկիլերի ջանքերի շնորհիվ կառուցվում է 16-մղոնանոց ջրատար: Այնքան անհավատալի էր այդ ամենը, որ անգամ ֆիլմ է նկարվում դրա մասին:

1979 թվականին Վիլման ընկերոջ հետ ավտովթարի է ենթարկվում և մի շարք վիրահատություններ է տանում՝ հազիվ փրկվելով մահից: Շաբաթներ անց հիվանդանոցում իմանում է, որ ընկերը մահացել է, իսկ իր նյարդամկանային հիվանդությունն անբուժելի է, ու միասթենիա գրավիսը (մկանաթուլություն) ուղեկցելու է իրեն հետագա ամբողջ կյանքում. «Վթարը փոխեց իմ կյանքը, ես մի քայլ բարձրացա ինձնից, դարձա ավելի ուշադիր և պակաս բարկացած»:

1983 թվականին չիրոկի ցեղապետը հրավիրում է Մանկիլերին՝ աշխատելու իր հետ որպես տեղակալ: Չիրոկիների համար դա չլսված բան էր: Մեծ աղմուկ է բարձրանում, Վիլմային մահվան սպառնալիքներով նամակներ են ուղարկում, բայց նրան դա չի

կանգնեցնում, ու Վիլման դառնում է առաջին կինը, որ ցեղի առաջնորդի տեղակալ էր, իսկ երկու տարի անց Վիլմա Մանկիլերը դառնում է առաջին կին ցեղապետը: Ու թեև ընտրվում է ձայների 83 տոկոսով, դեռ շարունակվում էր քննադատությունը՝ կապված նրա սեռի հետ:

Նա ընտրվում է ևս երեք անգամ: Նրա շնորհիվ չիրոկի ցեղախումբը 55 հազար բնակչից աճում է՝ դառնալով 196 հազար:

Մանկիլերն աննախադեպ քայլ է կատարում. 1990 թվականին համաձայնագիր է կնքում հնդկացիների գործերով զբաղվող բյուրոյի հետ, համաձայն որի՝ այդուհետ թույլատրվում էր ԱՄՆ-ի պետբյուջեի՝ շուրջ միլիոն դոլարի ֆինանսավորման ուղիղ վերահսկում հնդկացիների կողմից, այդպիսով հաստատվում է ցեղային ինքնիշխանությունը ինչպես չիրոկի, այնպես էլ այլ ցեղախմբերի համար:

Վիլման հատուկ ուշադրություն է դարձնում առողջապահական համակարգի ստեղծմանը, լրջորեն զբաղվում աշխատանքի ու զբաղվածության հարցերով. նրա օրոք ստեղծվում են բժշկական կենտրոններ, բացվում են նախակրթարաններ ու դպրոցներ: Մանկիլերի ջանքերի շնորհիվ Մեկվոյա դպրոցը բարելավվում է մի քանի անգամ՝ հիմք դնելով կրթական համակարգի զարգացման: Նա ընդգծում է չիրոկի ցեղախմբի ավանդույթների ու առանձնահատկությունների պահպանման կարևորությունը՝ ստեղծելով Չիրոկիի գրագիտության ինստիտուտը:

Նա կրկնապատկում է իր երկրամասի տնտեսական աճը: Մանկիլերը ուժ ու վստահություն էր ներշնչում ոչ միայն իր համերկրացիներին, այլև մյուս ցեղախմբի ներկայացուցիչներին, որ շտապում էին հետևել նրա վարակիչ օրինակին:

1993 թվականին ԱՄՆ Կանանց փառքի դահլիճում գրվեց Վիլմա Մանկիլերի անունը, իսկ 1998 թվականին նախագահ Բիլ Բլին-

թոնի կողմից պարզևատրվեց երկրի բարձրագույն քաղաքացիական պարզևու՝ Նախագահի Ազատության մեղալու:

Իր ինքնակենսագրական գրքում՝ «Մանկիւերը. առաջնորդն ու իր ժողովուրդը» (2000 թ.), նա գրում է. «Ես ուզում էի ամեն ինչ անել, որ հնդկացիները նորից հավատան իրենք իրենց, փորձում էի արթնացնել սեփական մտածողությունը նրանց ներսում և հուշել, որ լուծումները գտնվում են իրենց ներսում»:

2000 թվականին Մանկիւերն ընտրվեց տարվա կին: 2021 թվականին նշվում էր քաղաքականության, արվեստի և գիտությունների ոլորտում ակտիվ քաղաքացիական իրավունքի առաջամարտիկ կանանց հիշատակը: Որոշվեց Վիլմա Մանկիւերի դիմանկարը պատկերել քառորդ դուլարի մետաղադրամին:

Երբ Մանկիւերը մահանում էր, նրա կողքին էր մտերիմ ընկերուհին՝ հայտնի ֆեմինիստ Գլորիա Ստեյնհեմը: Մահախոսականում Գլորիան ասում է. «Ըստ հնդկացիական ավանդույթի՝ երբ մեծ մեկն է հեռանում, ազդանշանային խարույկներ են վառում, որ վերջինիս ճանապարհը՝ դեպի այն աշխարհ, լուսավորվի: Վիլմայի մահվանից հետո 23 երկրում խարույկներ վառվեցին: Միլիոնավոր մարդիկ շարունակելու են նրա գործը, բայց ես ամեն օր մինչև կյանքիս վերջին օրը կարոտելու եմ նրան»:



ՔԻԹԻ ՕՆԻԼ

1946-2018 թթ.

50 տարի առաջ ցուցադրեցին «Հրաշք կինը» արկածային սերիալը: Միրված կոմիքսների սուպերհերոսուհին պայքարում էր չարագործների դեմ, պաշտպանում էր թույլերին, կարգուկանոն էր հաստատում քաղաքում: Իսկ կադրից դուրս դերասանուհու փոխարեն բոլոր հնարքները իրագործում էր տաղանդավոր կասկադյոր Քիթի ՕՆիլը: Մի սերիայում նա պետք է վտանգավոր թռիչք կատարեր հյուրանոցի պատշգամբից: Եթե չդիպչեր գետնին տեղադրված օդային բարձի ուղիղ կենտրոնին, ապա ողջ չէր մնա: Քիթին ցատկեց 39 մ բարձրությունից և սահմանեց աշխարհի նոր ռեկորդ: Այնուհետև շատ ժամանակ չանցած՝ ինքն էլ գերազանցեց սեփական ռեկորդը՝ առանց պարաշյուտի ցատկելով 55 մետրի վրա թռչող ուղղաթիռից: Այդ բարձրությունից օդային բարձիկը ներքևում ընդամենը սև կետ էր թվում: Եվ սրանք ընդամենը երկուսն են բազմաթիվ ռեկորդներից, որ սահմանել է անվախ կասկադյոր Քիթին:

Քիթին 4 ամսական էր, երբ հիվանդացավ միաժամանակ ջրծաղիկով, կարմրուկով ու խոզուկով: Մարմնի ջերմաստիճանն այնքան բարձր էր, որ մայրը ստիպված էր երեխային ընկղմել սառույցով լի տաշտի մեջ: Աղջիկը փրկվեց, բայց կորցրեց լսողությունը, չնայած ծնողները միայն 2 տարեկանում նկատեցին, որ իրենց դուստրը խլություն ունի: Մայրը Քիթին քաջալերում էր սովորել կարդալ խոսակցի շուրթերի շարժումները և ինքնուրույն ճանաչել բառերը: Խոսելիս նա դնում էր դստեր ձեռքն իր կոկորդին, որպեսզի աղջիկը զգա ձայնալարերի ցնցումներն ու ելևէջները:

Տարիների ընթացքում Քիթին, զգալով երաժշտությունը ձեռքերով ու ոտքերով, սովորեց դաշնամուր ու թավջութակ նվագել, լողալ ու ջրացատկել, նույնիսկ հավակնում էր ԱՄՆ-ի հավաքականի անդամ դառնալ: Սակայն հանկարծ ողնաշարի մեմինգիտով վարակվեց. բժիշկները կարծում էին՝ այլևս չի քայլի: Քիթին ոչ միայն երկու ամսից ոտքի կանգնեց, այլև իր մեջ հայտնաբերեց արագության հանդեպ սերը:

«Ես հիվանդացա. ուրեմն պետք է ամեն ինչ նորից սկսեի, ու ես շատ էի ձանձրանում: Ուզում էի արագընթաց մի բան անել՝ մոտոցիկլ, ջրային դահուկներ, նավ, ցանկացած բան»:

Եվ կասկադորի իր կարիերայում նա փորձեց արագընթաց գրեթե ամեն ինչ: Քիթիի ունակություններն ու համարձակությունը գրավեցին կինոաշխարհի ազդեցիկ պրոդյուսերների ուշադրությունը, և նրան հրավիրեցին նկարահանվել Հոլիվուդում: Նրան վստահում էին իրագործել ֆիլմերի և սերիալների ամենավտանգավոր հնարքները, նա դուրս էր ցատկում պատուհաններից, շրջված մեքենաներից ու հրդեհներից:

1976 թվականին Օրեգոն նահանգի Ալվորդ անապատում Քիթի Օ՛Նիլը երեքականի մեքենայով սահմանեց արագության նոր ռեկորդ՝ 832 կմ/ժ, և դարձավ «աշխարհի ամենաարագ կինը»: Սակայն միջոցառման հովանավորները թույլ չտվեցին Քիթիին ևս մեկ անգամ նստել դեկին և փորձել գերազանցել նախկինում տղամարդկանց սահմանած ցուցանիշները: Նրանք սարսափում էին, որ չլսող կինը կարող էր դառնալ «աշխարհի ամենաարագ մարդը»: «Գովազդային պաստառների վրա գեղեցիկ չէր լինի», - պնդում էին նրանք:

Սակայն Օ՛Նիլին չվախեցրին այս մարդիկ: Նա շարունակեց իր ճանապարհը և մեկը մյուսի հետևից նոր ռեկորդներ սահմանեց ցամաքում, ջրում, նույնիսկ օդում: Հենց Քիթիի շնորհիվ բազում դռներ

բացվեցին լսողության խնդիրներ ունեցող վարորդների, օդաչուների, մրցավազորդների համար:

«Խուլ մարդիկ կարող են ամեն ինչ: Երբեք չհանձնվեք: 18 տարեկան էի, երբ ինձ ասացին, որ գործի չեն ընդունի, քանի որ չեմ լսում: Իսկ ես պատասխանեցի, որ մի օր հայտնի կդառնամ ու ցույց կտամ բոլորին՝ ես կարող եմ անել ամեն ինչ»:



ԹԵՄՎԼ ԳՐԱՆՊԻՆ

Ճնվ. 1947թ.

Հանրագիտարանն աուտիզմը սահմանում է որպես զարգացման խանգարում, որը բնորոշվում է շփման ու հաղորդակցման խախտումներով, կրկնվող ու սահմանափակ վարքագծով: Մինչդեռ այն ունի այնքան շատ տարատեսակներ ու դրսևորումներ, որոնց մի մասը կան ընդհանրապես հետազոտված չէ, կան դեռ հայտնի չէ մասնագետներին: Ուսումնասիրությունները օրեցօր հայտնաբերում են նոր հատկանիշներ, որոնք երբեք չէին նկատվել աուտիզմ ունեցող անձանց շրջանում:

Հաշվել են, որ աշխարհում այսօր ապրում է ավելի քան 25 միլիոն աուտիզմ ունեցող անձ: Ցավալի է պատկերացնել, որ այս անձանց մեծ մասը ենթարկվում է բուլինգի՝ ծաղրի, նվաստացուցիչ վերաբերմունքի, խոշտանգումների, որովհետև հասարակության մեծ մասն աուտիզմի մասին ունի կանխակալ պատկերացումներ. կեղծ տեղեկություններն ու միջերն ավելի տարածված են, քան թե գիտականորեն ապացուցված փաստերը:

Պրոֆեսոր Թեմվլ Գրանդինն աշխարհում բեղուն գործունեություն ծավալած աուտիզմ ունեցող ամենահայտնի մարդկանցից մեկն է: Ինչպես ինքն է ներկայանում. «Ես առաջին հերթին գիտնական եմ, հետո նոր՝ աուտիզմ ունեցող»:

Գրանդինը պատկերային մտածելակերպ ունի և խոստովանում է, որ հանրահաշիվն էլ բացարձակ առեղծված է իր համար: Նա տեսնում է, զգում է աշխարհը յուրովի, ու, գլխավորը, մեզ էլ է պատ-

մում դրա մասին, որպեսզի մենք էլ հասկանանք աուտիզմը և այն մարդկանց, որոնք մեր կողքին են:

Իր ամբողջ կյանքը նա նվիրել է աուտիզմի ու կենդանիների ուսումնասիրությանը: Եվ առաջին հայացքից տարբեր ոլորտների ընտրությունը պատահական չէ: Կենդանիների հանդեպ սերն ու հիացմունքը սկսվեցին ամառային մի օր, երբ պատանի Թեմփլը հանգստանում էր հարազատներից մեկի ռանչոյում: Նա գլխի ընկավ, որ բոլորից լավ է հասկանում կենդանիներին, նրանց արձագանքը շրջապատող աշխարհի ազդակներին, քանի որ ինքն էլ էր նույն կերպ ընկալում բարձր ձայներն ու կտրուկ շարժումները: Նա էլ էր չափազանց զգայուն միջավայրի ամենաչնչին մանրուքների նկատմամբ:

Այդ պահից ի վեր՝ տասնամյակներ շարունակ, նա քարոզում է մարդասիրական ու գթասիրտ վերաբերմունք կենդանական աշխարհի հանդեպ: Նա ընդունում է, որ ոմանք մսակեր են, բայց պնդում է, որ մարդիկ պարտավոր են ապահովել կենդանիների արժանապատիվ կյանքն ու անցավ սպանողը:

«Բնությունը դաժան է, մենք պարտավոր չենք լինել նույնպիսին», - կրկնում է Գրանդինը:

30 տարուց ի վեր կենդանաբանական գիտությունների դոկտոր Գրանդինը դասավանդում է, զբաղվում աշակերտների մենթորությամբ, ամեն տարի հրապարակում է տասնյակ գրքեր, հոդվածներ, գիտական աշխատություններ աուտիզմի և կենդանաբանական գիտությունների շրջանակներում: Նա առաջիններից էր, ով ամաչելու կամ կոծկելու փոխարեն սկսեց պատմել իր աուտիզմի մասին, սկսեց լուսաբանել ու բացատրել:

Իր համառության և կամքի շնորհիվ Գրանդինը ներխուժեց տղամարդկանց տիրույթ համարվող անասնաբուծության ոլորտ և ստիպեց զգալի փոփոխություններ անել: Նա նաև ոգեշնչման աղբ-

յոր է գիտնական կանանց ու երիտասարդների համար, ով իր սեփական օրինակով ցույց է տալիս, որ արհեստածին սահմանները միայն խանգարում են անձնական և մասնագիտական առաջընթացին:

Նրա անունը ներառված է ԱՄՆ-ի Կանանց ազգային փառքի դահլիճում, նա հեղինակավոր «Թայմ» ամսագրի պնդմամբ աշխարհի 100 ամենաազդեցիկ մարդկանցից մեկն է: Նրա մասին նույնիսկ ֆիլմ են նկարահանել:

Թեմփլին անվանում են հույսի շող աուտիզմ ունեցող բազմաթիվ երեխաների և նրանց ծնողների համար, նրանք վստահ առաջ են քայլում այն ճանապարհով, որ իրենց համար հարթել է այս մեծ գիտնականը: Աուտիզմի խնդիրների բարձրաձայնման համար ավելի լավ դեպքան գրեթե անհնար է պատկերացնել:



Զոուի Կոպլովից

Ճնվ. 1948 թ.

Այս արագընթաց աշխարհում Զոուի Կոպլովիցը չափազանց դանդաղաշարժ է: Երբ ամենից կարևորը հաղթելն է, Զոուին նոր նշանակություն է հաղորդում պարտությանը: Շատ քչերը գիտեն այս կնոջ անունը, բայց նրանք, ովքեր ճանաչում են Զոուիին, հիանում և ոգեշնչվում են նրա քաջությամբ:

Զոուի Կոպլովիցը մարաթոնավազորդ է, որ ունի ցրված սկլերոզ և շաքարախտ: Ցրված սկլերոզը ծանր ու անբուժելի հիվանդություն է, որի ընթացքում գլխուղեղի և ողնուղեղի նյարդերը սկսում են մահանալ, արդյունքում օրգանիզմը հետզհետե դադարում է կատարել իր ֆունկցիաները, հիվանդը կամաց-կամաց դժվարանում է գրել, քայլել, խոսել, մտածել:

Եվ Զոուիի ցավերը կմնային աննկատ, եթե մի օր նա չորոշեր փոխել իր կյանքը: Երբ Զոուին արդեն լուրջ հիվանդ էր, դեղերն ընդունելիս հանկարծ հաբը կոկորդին է մնում: Հազիվ փրկվելով խեղդվելուց՝ նա հասկանում է, թե ինչ անիմաստ մահ էր սպասում իրեն, ինչպես կարող էր հեռանալ իր սիրելիներից՝ առանց վայելելու կյանքի բերկրանքը: Հրաժարվելով հանձնվել հիվանդություններին՝ Կոպլովիցը որոշում է սման դեպքերում չսված բան անել՝ մարաթոն վազել:

Սկսում է մարզվել: Իհարկե, դա անհնար էր թվում բոլորին, քանի որ հիվանդության պատճառով նա անչափ գիրացել էր, անկարող էր հարյուր քայլ անել առանց շունչ քաշելու, նույնիսկ փողոց դուրս չէր գալիս առանց անթացուպերի: Շատերը նրան խելագար էին համա-

րում, բայց ինչպես Ջոուին է հիշում, ինքն ուզում էր ոչ թե գոհացնել ուրիշներին, այլ ընդամենը հասնել մարաթոնի եզրագծին:

Վերջապես գտնելով աջակիցների շատ փոքր խումբ՝ 40 տարեկանում Ջոուի Կոպլովիցը «վազեց» իր առաջին մարաթոնը: Դանդաղ քայլքով, բայց անկոտրում ոգով հասավ ֆինիշ: Հետո մասնակցեց հաջորդին, հետո երրորդին, և այսպես շարունակ: Այսօր նա արդեն քսանհինգից ավելի մարաթոնի մասնակից է և ամեն անգամ հասնում է վերջինը: Յուրաքանչյուր մարաթոն Ջոուիից խլում է անասելի ջանքեր: Նա սկսում է իր երթը մյուս վազորդների հետ առավոտյան, բայց ավարտում է հաջորդ օրվա լուսաբացին: 20 ժամ հետո անթացուպերին հենած նրա ձեռքերն ընդարմանում են, վազքի վերջնահատվածում օգնականները կամ բուժաշխատողները երբեմն ստիպված են լինում առաջ հրել նրա ոտքերը: Դիմակայելով եղանակային փոփոխություններին, ցավերին, աննկարագրելի հոգնածությանը, գիշերը ուշ հայտնվելով քաղաքի վտանգավոր հատվածներում՝ Ջոուի Կոպլովիցը դեռ երբեք կիսատ չի թողել որևէ մարաթոն: Նրա անունը հայտնվեց Գինեսի ռեկորդների գրքում՝ 33 ժամ 9 րոպե ցուցանիշով գրանցելով մարաթոնի ամենաերկար ժամանակը:

Վազքի ընթացքում Ջոուին գտել է նոր ընկերներ ու աջակիցներ: Նա դարձել է դիմացկունության և անկոտրում կամքի խորհրդանիշ: Ամեն մարաթոնի եզրագծի մոտ հավաքվում են նրա երկրպագուներն ու սատարողները և ծափողջյուններով դիմավորում են, թերևս, մարզիկներից ամենաքաջին: Կոպլովիցը նոր շունչ է հաղորդում բոլոր նրանց, ովքեր կորցրել էին լիարժեք կյանքով ապրելու հույսը: Ջոուին վազում է, որպեսզի մյուսները կարողանան քայլել:



ՇԵՐԻԼ ՄԵՐԻ ՎԵՅԴ

1948-2013 թթ.

*Ամենամեծ մարդասպանը ամոթն է, ամոթն ու մեկուսացումը
և ոչ թե մեզ հայրուկ հաշմանդամությունը:*

Շերիլ Մերի Վեյդի ելույթից

Շերիլը Կալիֆորնիայից էր: Մայրը գրադարանավարուհի էր, հայրը՝ վաճառական: Դժվարությունները շատ էին: Գումարը չէր բավականացնում, բայց երեկոները հայրը սիրում էր հեքիաթներ պատմել երեխաներին, ու կյանքը թեթև ու գունավոր էր դառնում:

«Ես չարաճճի ու շատախոս երեխա էի: Շատ շատախոս,- ծիծաղով պատմում է Վեյդը հարցազրույցներից մեկում:- Մայրս ամեն անգամ պատմում է, թե ինչպես եղբայրս իր առաջին բառն ասաց: Ասում է՝ նայում էր պատուհանից, մեկ էլ ասաց՝ թռչուն: Հենց էդպես, եղբորս առաջին բառը «թռչունն» էր: Երբ ես հարցնում էի մորս, թե իմ առաջին բառը որն էր, մայրս ասում էր՝ քոնն առաջին բառ չէր, այլ առաջին մենախոսություն»:

Աղջնակը տասը տարեկան էր, երբ արթնացավ ռևմատիկ արթրիտը. «Նախ՝ ոտքիս բթամատն էր ցավում, հետո՝ ձեռքիս բութ մատը, ապա՝ դաստակներս, իսկ հետո ամեն տեղս սկսեց ցավել, բայց հատկապես դաստակներս ու ծնկներս էին շատ ցավում»: Տասնվեցից Շերիլը սկսեց անվասայլակ գործածել: Անտանելի ցավերի պատճառով կիսատ թողեց դասերն ու քոլեջը և շուրջ տասը տարով հայտնվեց մի տարածքում, որը հետո անվանում էր «անտանելի մեկուսացման մոայլ դարաշրջան»:

Ամեն ինչ փոխվեց, երբ մի օր ծնկները վիրահատող բժիշկն առաջարկեց օգտվել էլեկտրական անվասայակից: 1974 թվականին նորից դիմեց Կալիֆորնիայի Մերիսի քոլեջ ու զարմանքով բացահայտեց, որ այժմ այնտեղ հատուկ պայմաններ են ստեղծված հաշմանդամություն ունեցող ուսանողների համար. «Մինչ այդ ես հաշմանդամություն ունեցող մարդկանց հանդիպում էի միայն հիվանդանոցում»:

Նա անդամակցում է Հաշմանդամություն ունեցող ուսանողների միությանը, իսկ հետո նաև գլխավորում այն՝ ընտրվելով նախագահ: Պատահաբար իմանում է, որ Կալիֆորնիայի Բերկլիի համալսարանն ունի ռեզիդենտական ծրագիր հաշմանդամություն ունեցող ուսանողների համար, որը թույլ է տալիս սովորել ապրել մենակ, որը նա երբեք իրեն չէր կարող թույլ տալ: Բերկլիում նա հոգեբանության մագիստրոսի կոչում է ստանում, զուգահեռաբար էստեներ է գրում, պատմվածքներ, երբեմն նաև բանաստեղծություններ: Նաև գրում է հոդվածներ հաշմանդամություն ունեցող մարդկանց խնդիրների մասին: Շերիլը նաև հայտնվում է բեմում ու բացահայտում կատարողական արվեստը: «Լինել այնքան հանդուգն և այնքան ազատ, որ դու այլևս չկարողանաս ինձ մերժել: Սա անհեթեթ է հնչում, բայց հնարավոր է միայն լուսարձակներով պաշտպանված, բեմում կանգնած»:

«Հավակնոտ աղջնակը. հայտնի մոլորյալ երեխայի հուշերը». այսպես էր կոչվում նրա բեմադրած պիեսներից մեկը, որ մոտոներկայացում էր, ու որը նա խաղաց տարիներ շարունակ՝ շրջագայելով երկրով մեկ:

1980-ականների վերջին նա հիմնադրեց հաշմանդամություն ունեցող անձանցից բաղկացած մի պարախումբ: Շերիլը նկարահանում էր կարճամետրաժ ֆիլմեր, իսկ պոետական ներկայացումներից կազմված «Ահա» կոլաժի մեջ խոսում էր բուժհաստատություններում իրենց պատճառած ստորացումների մասին:

«Ռեալի հաշմանդամային մշակույթը» առավելապես քաղաքական բնույթ էր կրում: Այստեղ նա ներկայացնում էր հաշմանդամության պատմությունը, քննարկում տարբեր հարցեր, օրինակ՝ ինքնասպանությունը՝ որպես օգնություն, ինչը Վեյդը համարում էր սպառնալիք հաշմանդամություն ունեցող մարդկանց համար, որովհետև այն քողարկվում էր հետևյալ հանգստացնող բառերով՝ «արժանապատիվ մահ»:

Նա մի էսսե է գրում, որտեղ խոսելով «արժանապատիվ մահ» հասկացության մասին՝ բացատրում է, որ այդպիսով ապրելու իրավունք է տրվում միայն այն մարմիններին, որ կատարյալ են ու անթերի, և հարց է առաջանում՝ իսկ ինչ անեն այն մարմինները, որ իր նման են:

«Իմ նախորդ կյանքում հաշմանդամություն ունեցող մարդիկ ինձ խորհուրդ էին տալիս ծպտվել, քողարկվել, չերևալ, համեստ մի անկյունում ծվարել թաքուն, դրա փոխարեն մենք հիմա հպարտորեն քայլում ենք գլխավոր փողոցներով՝ ի տես բոլորի, մենք նստում ենք բոլորի սիրած ռեստորաններում: Մենք պնդում ենք, որ ունենք մեր տեղն, ու պնդում ենք, որ ունենք համակեցության իրավունք ամենուր՝ ձեր դասարանում ու ձեր դպրոցում, ձեր աշխատավայրում, ձեր թատրոնում, ձեր ամեն ինչում»:



ՄԵՐԻԼԻՆ ՀԵՄԻԼԹՈՆ

Ճնվ. 1949 թ.

Մերիլին Հեմիլթոնը վառ օրինակ է, թե ինչպես կինը, փոխելով սեփական կյանքը, հետո մյուսներինը, դարձնում է աշխարհն ավելի լավը: Նրա շնորհիվ հազարավոր մարդիկ կարող են այսօր հաղթահարել այն պատնեշները, որ շատերս անտեսում ենք կամ պարզապես տեղյակ չենք:

Նրանք ստիպված կլինենին ապրել կիսով չափ, եթե Մերիլինը հանձնվեր: Իր առաջ ծառայած փորձությունները Մերիլինը վերածեց մարտահրավերի ու առ այսօր փայլուն նվաճում է նոր բարձունքներ:

Մերիլինը ծնվել էր ամերիկահայ Կուրթայանների բազմազավակ ընտանիքում, որտեղ երեխաներին սովորեցնում էին լինել աննկուն և ապրումակցել ուրիշի ցավին: Տանը չէին խոսում հայերին բաժին ընկած դժվարությունների մասին: Միայն տատի մահից հետո Մերիլինը իմացավ, որ Խաթուն Բազայանը թուրքական հալածանքներից մազապուրծ փախել էր Սիրիա: Հետո էլ սեփական կյանքը վտանգելով՝ դարձել էր զինվորական ու մասնակցել էր առաջին համաշխարհային պատերազմին: Ու մինչև կյանքի վերջ երբեք չէր տրտնջացել:

Նրա թոռնուհու՝ Մերիլինի կյանքը սկզբում գեղեցիկ ֆիլմի պուժե էր հիշեցնում. լավ կրթություն, հաջողված ամուսնություն, երեխաներ, սիրելի գործ, անմոռանալի ճամփորդություններ ու բազում հիշողություններ, կարծես աշխարհում չկային դժվարություններ,

իսկ բերկրանքն էլ անսպառ էր: Սակայն ճակատագիրն այլ բան էր ծրագրել այս աննկուն կնոջ համար:

Մի օր սահասավառնակով ճախրելիս Մերիլինը սխալ է թույլ տալիս և վթարի է ենթարկվում՝ ընկնելով շատ մեծ բարձրությունից: Ողնաշարի ծանր վնասվածքի պատճառով նա մեկընդմիջտ կորցնում է քայլելու ունակությունը: Այս դեպքում ապաքինվել նշանակում էր ոչ միայն բուժել վերքերը, այլև վերստին սովորել ապրել նոր պայմաններում: Եվ այն պահին, երբ շատերը կհանձնվեին, Մերիլինը նոր շունչ ստացավ:

Այդ տարիներին հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված շարժասայլակները չափազանց ծանր էին, կոպիտ, էլ ավելի էին կաշկանդում շարժումները, մինչդեռ դրանք կոչված էին գոնե որոշ չափով հեշտացնելու մարդու ապրելը: Մերիլինն ամենևին չէր պատրաստվում համակերպվել իրավիճակի հետ: Նա դիմեց իր սպորտսմեն ընկերներին, և կիրառելով սահասավառնակներին թեթևություն և սահունություն հաղորդող մեխանիզմները՝ նրանք լիովին փոխեցին սայլակի կառուցվածքը: Ծնվեց «Քուիքին»՝ իր տեսակի մեջ առաջին սայլակը, որն ամբողջովին համապատասխանում էր հաշմանդամություն ունեցող մարդու պահանջներին:

Մերիլինը հնարավորություն ստացավ վերագտնելու ինքն իրեն, շարունակելու իր ակտիվ կենսակերպը: Վթարից հետո արագ վերադառնալով մարզումներին՝ նա դարձավ ԱՄՆ-ի Թենիսի բաց առաջնության հաղթող, այն էլ երկու տարի անընդմեջ թե՛ միայնակ, թե՛ զուգախաղում: Բայց դա էլ էր քիչ Մերիլինին: Մի քանի տարվա ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց համար անցկացվող դահուկավազքի տարբեր մրցաշարերում նա նվաճում է շուրջ 20 մեդալ, ինչպես նաև ընդգրկվում է ազգային հավաքականի կազմում և մեկնում Ավստրիա, որտեղ դառնում է ձմեռային պարաօլիմպիկ խաղերի մեդալակիր:

Հիմա էլ Մերիլին Հեմիլթոնը չի մտածում կանգ առնելու մասին: Սպորտային կարիերան ավարտելուց հետո՝ մոտ տասը տարի առաջ, նա սկսեց քաջալերիչ ելույթներ ունենալ, գրքեր գրել ու բացեց իր «արագիկ» սայլակի մասսայական արտադրությունը՝ հնարավորություն ընձեռելով հազարավոր մարդկանց ազատվել իրենց լիարժեք կյանքը կաշկանդող կապանքներից: Այո՛, նա չի կարող քայլել, բայց Մերիլինը սահում է, խաղում է, մրցում է և ամենաթանկը՝ ոգեշնչում է ուրիշներին անել նույնը:



ԷՎԵԼԻՆ ԳԼԵՆԻ

Ճնվ. 1965 թ.

Էվելինը շտուանդացի երաժիշտ է, հարվածային գործիքների վարպետ: Նրա առաջին ուսուցիչը հայրն էր՝ ակորդեոնահար պարոն Հերբերտը, որ նվագում էր շտուանդական պարի անսամբլում: Էվելինի առաջին գործիքները շրթհարմոնն ու կլառնետն էին:

Այսօր նա շուրջ հարյուր համերգ է տալիս տարեկան, 2012 թվականին Լոնդոնում օլիմպիական խաղերի բացմանը հենց Գլենին էր ելույթ ունենում, իսկ 2021 թվականին նշանակվեց Գորդոնի համալսարանի ռեկտոր: Բայց... կա մի բայց: Էվելինը խլություն ունի:

Նա ութ տարեկան էր, երբ նրա լսողությունը սկսեց ծանրանալ, իսկ տասներկուսում իսպառ կորավ: Գլենին պնդում է, որ մարդիկ սխալ են ընկալում, թե ինչ է խլությունը: Նա ասում է. «Ես կորցրի ականջներով լսելու ունակությունս, բայց սկսեցի լսել մարմնիս մյուս հատվածներով և հիմա այս կյանքում ես ունեմ մեկ իսկական նպատակ՝ սովորեցնել մարդկանց լսել»:

1988 թվականին նա թողարկեց իր առաջին ձայնագրությունը Բելա Բարտոկի «Սոնատ երկու դաշնամուրի և հարվածային գործիքների համար», որն արժանացավ «Գրեմմի» մրցանակի: Էվելինը կատարում է ինչպես դասականների, այնպես էլ ժամանակակից հեղինակների ստեղծագործություններ: Դրանց մի մասը գրվել է հատուկ Գլենիի համար: Գլենին ձայնագրել է այբում Բյորքի հետ, նվագել Սթինգի, Բելա Ֆլեթի, Մյուրեյ Պերայանի ու այլ հանրահայտ երաժիշտների հետ:

Նա հաճախ ոտաբորիկ է նվագում, որպեսզի երաժշտությունը զգա մարմնով, պարբերաբար ելույթներ է ունենում, նրա «Լսող էս-սեն» թարգմանվել է հարյուրավոր լեզուներով: Գլենիի մասին ֆիլմեր են նկարվել, գրքեր գրվել:

Գլենին ասում է. «Ես ուզում եմ խոսել մարդկանց հետ երաժշտության լեզվով: Եթե իմ համերգից հետո հանդիսատեսը հեռանա՝ մտորելով, թե ինչպես էր այս խուլ աղջիկը նվագում, դա իմ պարտությունը կլինի որպես երաժիշտ: Մամուլի ասուլիսների ժամանակ և կամ հյուրախաղերին մասնակցելիս իմ կենսագրականում չեմ նշում, որ ես խուլ եմ: Դեռ փոքրուց հասկացել եմ՝ դա լրատվականների սիրելի խայծն է, որ առիթը բաց չեն թողնի նորից ու նորից շեշտելու իմ լսողության խնդիրը, մինչդեռ ես ոչ թե բնության հրաշք եմ կամ թերություն, այլ անընդհատ աճող երաժիշտ:

Կա տարածված թյուրըմբռնում, թե խուլ մարդիկ ապրում են լռության աշխարհում: Բայց որպեսզի հնարավոր լինի հասկանալ խլությունը, նախ պետք է հասկանալ ձայների աշխարհը:

Լսելը մասնագիտացված կադապարն է հպումի: Ձայնը օդի տատանումն է, որ որսում է ականջն ու վերածում էլեկտրական ազդակների, ինչն էլ հետո մեկնաբանվում է մեր ուղեղի կողմից: Դա կարող է անել ինչպես լսողությունը, այնպես էլ հպումը: Պատկերացրեք, որ դուք կանգնած եք ճանապարհին, ու շատ մեծ բեռնատար է անցնում: Դուք կզգանք, թե՛ կլսեք: Երկուսն էլ:

Խլությունը չի նշանակում, որ դուք չեք կարող լսել: Անգամ նրանք, որ լրիվ խուլ են, կարող են լսել կամ զգալ ձայները:

Ո՞վ կարող է պնդել, որ երբ երկու լսող մարդիկ լսում են մի ձայն, ապա նրանք լսում են նույն ձայնը: Ես կարծում եմ, որ բոլոր մարդիկ տարբեր լսողություն ունեն: Միայն թե հնչյունային այն պատկերը, որ կառուցում է նրանց ուղեղը, նույնն է»:

1993 թվականին Էվելին Գլենին արժանացել է Բրիտանական կայսրության սպայի և 2007 թվականին Բրիտանական կայսրության ասպետական տիկին շքանշանի: Բրիտանական մի քանի համալսարանների պատվավոր դոկտոր է:

«Իմ լտղությունն ավելի շատ անհանգստացնում է այլ մարդկանց, քան թե ինձ,- գրում է Գլենին,- այո՛, այն որոշ անհարմարություններ առաջացնում է, բայց ընդհանուր առմամբ կյանքիս վրա չի ազդում: Ինձ համար խլությունը նույնքան անկարևոր է, որքան այն փաստը, որ ես շագանակագույն աչքերով կին եմ: Իհարկե, ես երբեմն ստիպված եմ լուծումներ գտնել՝ կապված իմ լսելու և երաժշտական խնդիրների հետ, բայց ցանկացած երաժիշտ կփաստի, որ անում է նույնը: Մեզնից շատերը շատ քիչ բան գիտեն ձայնի մասին, թեև շարունակ լսում են: Ճիշտ այդպես ես քիչ բան գիտեմ խլության մասին, մանավանդ որ այն ինձ քիչ է հետաքրքրում: Հիշում եմ՝ մի անգամ ես խիստ բարկացա հաղորդավարի վրա (ինչն ինձ հատուկ չէ) այն բանի համար, որ անընդհատ ինձ հարցեր էր տալիս միայն իմ խլության մասին: Ես չդիմացա ու ասացի. «Եթե Դուք ուզում եք խլության մասին խոսել, ապա հրավիրեք հարցազրույցի աուդիոլոգի: Ես մասնագիտությամբ երաժիշտ եմ»:



Էիկո Կիմուրա

Ճնվ. 1965 թ.

Աշխարհում ամեն հինգերորդ կին ունի հաշմանդամություն: Պատմականորեն այս կանայք մեկուսացված են եղել. նրանք չեն մասնակցել հասարակական կյանքին, չեն օգտվել կրթության, առողջապահության, տեղեկատվության, արդարադատության իրենց իրավունքից: Դեռևս հեռավոր 1995 թվականին 189 երկիր Միավորված ազգերի կազմակերպության 50-ամյակի կապակցությամբ Չինաստանի մայրաքաղաք Պեկինում միաձայն համաձայնեցին, որ անհրաժեշտ է ստեղծել հավասար պայմաններ բոլոր կանանց ու աղջիկների հզորացման համար: Սակայն այսօր գոյություն չունի որևէ երկիր, որտեղ հաստատվել է գենդերային հավասարություն: Մեր կյանքը հաճախ տղամարդակենտրոն է: Տղամարդիկ են հիմնական որոշում կայացնողներն ու ղեկավարները: Աշխարհի բոլոր պատգամավորների ընդամենը 24%-ն է կին: Կանայք կազմում են պետության առաջնորդների միայն 6%-ը: Իսկ հաշմանդամություն ունեցող կանայք այնքան քիչ մասնակցություն ունեն քաղաքական կամ տնտեսական կյանքին, որ նույնիսկ չկա համապատասխան վիճակագրություն: Այլ կերպ ասած՝ կնոջ ձայնը կրկին անտեսվում է: Անկասկած պետք է փոխել իրավիճակը: Հաշմանդամություն ունեցող բազմաթիվ կանայք ստանձնել են այդ դժվարին գործը: Նրանցից մեկն էլ Էիկո Կիմուրան է՝ աջակցության առավել բարձր մակարդակի կարիք ունեցող հաշմանդամություն ունեցող առաջին կին պատգամավորը Ճապոնիայի խորհրդարանում:

Էիկոն երեխա էր, երբ տեղի ունեցած դժբախտ պատահարը փոխեց նրա կյանքը: Նա ընկավ մանկասայլակից և վնասեց ողնաշարը: Այդ օրվանից աղջիկը վզից ներքև չէր կարող շարժել իր մարմինը՝ բացառությամբ ձախ ձեռքի: Ծնողները ստիպված տեղափոխեցին նրան հատուկ փակ հաստատություն, որտեղ Էիկոն երկար տարիներ ստանում էր անհրաժեշտ մասնագիտական խնամք: Նա հաճախում էր հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված դպրոց: Սակայն 19 տարեկանում, չիմանալով արտաքին աշխարհի մասին ոչ մի բան, նա որոշեց դուրս պրծնել իրեն վանդակած շենքի պատերից ու ինքնուրույն ապրել: Նա հիշում է, թե ինչպես էր այն ժամանակ ստիպված գլուխը կախ պահում փողոցում, որպեսզի խուսափեր անծանոթների պլշած հայացքներից:

«Ես ապշած էի ու գայրացած, որ աշխարհում չկա ոչ մի պայման ծանր հաշմանդամություն ունեցող անձանց բնականոն կյանքի համար», - ասում է Էիկոն:

24 տարեկանում Էիկոն սիրահարվեց իրեն խնամող կամավորներից մեկին: Նրանք ամուսնացան ու հրաշալի որդի ունեցան: Սակայն տարիների ընթացքում Ճապոնիայում կյանքի պայմանները չէին փոխվում: Եվ Կիմուրան սկսեց ակտիվորեն զբաղվել իրավապաշտպան գործունեությամբ: Ամուսնու հետ հիմնադրեց կազմակերպություն, որ օգնում էր հաշմանդամություն ունեցող անձանց ապրել անկախ: Ինքնակենսագրական երկու գիրք գրեց: Իսկ 3 տարի առաջ սկսեց իր քաղաքական քարոզարշավն ու դարձավ պատգամավոր: Ճապոնիայի խորհրդարանում ստիպված վերանորոգման աշխատանքներ անցկացրին. կառուցեցին թեքահարթակներ ու նիստերի դահլիճում երեք աթոռ հեռացրին, որպեսզի տեղավորեին Էիկոյի անվասայլակը:

Շիմա Կիմուրան իր գործընկերների ու աջակիցների հետ ջանք չի խնայում անհրաժեշտ բարեփոխումներն իրականություն դարձնելու համար: *Nihil de nobis, sine nobis* (լատ. թարգմ. «Ոչինչ մեր

մասին առանց մեզ») կարգախոսը լավագույնն է նկարագրում Կիմուրայի աշխատանքը. անհնար է օրենքներ և որոշումներ ընդունել հաշմանդամություն ունեցող մարդկանց մասին առանց այդ մարդկանց մասնակցության: Իր փորձի հիման վրա Կիմուրան ձգտում է ստեղծել միջավայր, որտեղ հաշվի կառնվեն հաշմանդամություն ունեցող անձանց պահանջները, պետությունը կհոգա նրանց կարիքները, նրանք պատշաճ կվարձատրվեն իրենց աշխատանքի և հմտությունների համար, կդառնան իրենց երկրի լիիրավ բնակիչներ, կկարողանան իրագործել իրենց ողջ ներուժը, վերջապես դուրս կգան սովերից:



Մարլի Մաթլին

Ճնվ. 1965 թ.

Մարլի Մաթլինը լսողական հաշմանդամություն ունեցող դերասանուհին է, որը մեծ աղմուկ է բարձրացնում: Նա ամենաերիտասարդ (ընդամենը 21 տարեկան) և առ այսօր միակ հաշմանդամություն ունեցող դերասանուհին է, որը հասել է կինոինդուստրիայի փառքի գագաթնակետին. արժանացել է Օսկար մրցանակին:

Իր անկոտրում համառությունը և կամքի ուժը նա կոփել էր հայրենի Չիկագոյի արվարձաններում, որտեղ անցել էին նրա մանկությունն ու պատանեկությունը: Շատ փոքր էր, երբ կորցրեց լսողությունը՝ 18 ամսական, սակայն միայն քառասուն տարեկանում բժիշկները բացատրեցին, որ լսողության խնդրի հավանական պատճառը գենետիկ խնդիրներն էին: Միննույն է, նա երջանիկ երեխա էր մեծանում, միայն զայրանում էր, երբ ավագ եղբայրները երաժշտություն էին վայելում կամ առաջինն էին լսում հեռախոսի զանգի ձայնը:

11 տարեկանից համոզված էր, որ դերասան է դառնալու ու հաղթահարելու է իր ճանապարհին հանդիպած ցանկացած խոչընդոտ՝ նույնիսկ մարդկանց կողմնակալ ու տգետ հայացքները: Եվ հենց այդպես էլ արեց:

«Ավելի փոքր Աստոն երեխաները» ֆիլմը Մարլիի կարիերայում առաջինն էր: Նա անհայտ սկսնակ դերասանուհի էր, որ ոչ մի տիպի ազդեցություն կամ ծանոթ-բարեկամներ չունեւ Հոլիվուդում:

Ռեժիսորն ընտրել էր նրան իր տաղանդի, աշխատանքի ու բնատուր հմայքի շնորհիվ: Մինչդեռ չարախինդ մեկնաբանություններն ու ակնարկները ուղեկցում էին Մարլին իր ճանապարհի ամբողջ ընթացքում:

Կինոքննադատներից մեկը նույնիսկ հանդգնել էր ասել, որ նա Օսկար է ստացել խղճահարությունից, քանի որ «խուլ է ու խուլի դեր է տանում, դրա համար դերասան էլ պետք չէ լինել»: Այս խոսքերն արդեն սովորական էին Մարլիի համար, նա դեռ դպրոցական տարիքից էր ծանոթ ծաղրին ու շրջապատի թերահավատությանը: Բայց դրանք զայրացնող էին, որովհետև սխալ էին. այսպիսի մտքերի պատճառով է, որ դեռ գոյություն ունեն բազում արգելքներ ու փակուղիներ հաշմանդամություն ունեցող անձանց մասին ոչ միայն կինոյում, այլև արվեստի շատ ոլորտներում: «Լսող մարդիկ էլ խաղում են լսողների դերերը, այդ դեպքում ինչո՞ւ են նրանց գովերգում», - բարկանում է Մաթլինը:

Մարլին այն առաջամարտիկներից է, ում համար տեսանելիությունը պարզապես բառ չէ: Նա պարտադրում է կինոստեղծողներին, որպեսզի ֆիլմի մեջ հաշմանդամություն ունեցող հերոսների դերերը բաժին հասնեն հաշմանդամություն ունեցող դերասաններին, որպեսզի սցենարի մեջ հստակ երևան հաշմանդամություն ունեցող անձանց առանձնահատկությունները: Օրինակ՝ Մարլին կադրի մեջ խոսում է ճիշտ այնպես, ինչպես առօրյա կյանքում՝ համադրելով ժեստերի լեզուն և որոշ բառերի կամ հնչյունների արտասանությունը:

Նրա անմիջական ջանքերի շնորհիվ ԱՄՆ-ում ընդունվեց օրենք, որը պարտադրում է հեռուստաալիքներին եթերում ներառել ենթագրեր:

«Հաշմանդամությունը կոստյում չէ, որ հագնես», - կրկնում է Մաթլինը:

Իր հաղթանակից անցել է 37 տարի: Մա սարսափելի երկար ժամանակ է, որպեսզի գոնե որոշակի փոփոխություններ լինեին, առաջընթաց գրանցվեր, ի վերջո կինոստուդիաների ղեկավարների աշխատելառճը տարբերվեր, բայց ոչ: Իսկ չէ՞ որ յուրաքանչյուր ոլորտում աշխատել ու աշխատում են հարյուրավոր չլսող անձինք՝ դերասաններ, օպերատորներ, ձայնի, լույսի, մոնտաժի, դիմահարդարման, հագուստի ձևավորման մասնագետներ:

Այսօր հավասարության համար պայքարն ակտիվորեն շարունակող Մարլիի ու մի շարք այլ աջակիցների շնորհիվ այս բոլոր վարպետները, հուսանք, վերջապես կստանան հնարավորություն վաստակելու իրենց մրցանակները, տիտղոսներն ու ծափահարությունները:



Անա Պելանգ Նարվանգ

ծնվ. 1966 թ.

1979 թվականին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան ընդունեց մի փաստաթուղթ, որի շնորհիվ կանանց չէր սպառնա որևէ տեսակի խտրականություն: Մեր օրերում այն վավերացրել է արդեն իսկ 189 երկիր: Նրանք պարտավորվել են պաշտպանել բոլոր կանանց իրավունքներն ու հիմնարար ազատությունները, տրամադրել հավասար հնարավորություններ քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային ոլորտներում: Փաստաթղթի իրականացումը վերահսկում է Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն, որը բաղկացած է 23 երկրներ ներկայացնող անդամներից:

Հանրահայտ իրավապաշտպան և ակտիվիստ Անա Պելանգ Նարվանգը հաշմանդամություն ունեցող առաջին կինն է, որ 4 տարի առաջ ընտրվեց կոմիտեի անդամ: Դա պատմական որոշում էր, երբ հավասարություն ու ներառականություն ապահովելու կոչված մարմինը իր իսկ օրինակով ցույց է տալիս հաշմանդամություն ունեցող կանանց ձայնի կարևորությունը: Անան ամենևին նորելուկ չէ հավասարության համար պայքարում: 20 տարուց ավելի նա մարտնչում է հասարակության կեղծ կաղապարների ու սահմանափակ մտածելակերպի դեմ թե՛ իր հայրենի Իսպանիայում, թե՛ միջազգային ասպարեզում՝ ընդհուպ ստիպելով տարբեր երկրների կառավարություններին ընդունել նոր օրենքներ ու մշակել անհրա-

ժեշտ նախագծեր: Շատ քիչ կանայք կարող են հպարտանալ, որ վաստակել են այդպիսի հեղինակություն: Անան նրանցից մեկն է:

Անան դեռ երեխա էր, երբ կորցրեց տեսողությունը: Շատ ժամանակ չէր անցել, երբ կյանքից հեռացավ աղջկա մայրը, ու հանկարծ Անան հասկացավ, որ այս աշխարհում լրիվ միայնակ է մնացել, այլևս ոչ ոք նրան չի սատարում: Սակայն հուսահատվելու փոխարեն ուժերի նոր պաշար հայտնաբերեց իր մեջ:


Դրսևորելով պարմանուհուն ոչ հատուկ հասունություն՝ 13 տարեկանում ինքնուրույն որոշում կայացրեց հաշմանդամություն ունեցող երեխաների հատուկ գիշերօթիկ դպրոցից տեղափոխվել սովորական դպրոց, որպեսզի ստանա նույն կրթությունը, ինչ իսպանացի բոլոր երեխաները, լինել ինչպես բոլորը:

Իսկ հետո ուսումը շարունակեց Իսպանիայի սահմաններից դուրս՝ ծանոթանալով ուրիշ երկրների մշակույթներին ու սովորույթներին, կուտակելով գիտելիքի ու փորձի հսկայական պաշարներ, որ հետագայում կօգնեն իրեն գրագետ պայքար վարել հոգուտ մյուսների: Սակայն իր ճանապարհին ամեն քայլափոխի Անան ստիպված էր մարտնչել իրական ներառականության ու հավասարության համար:

Դեռ երիտասարդության օրերից պարզ էր՝ Անան գտել է իր կոչումը: Նրա ակտիվիստական գործունեությունը տարածվել է հայրենիքից դուրս. հաշմանդամություն ունեցող կանանց կյանքը բարեփոխելու նպատակով Անան աշխատել է Եվրոպայում, Ասիայում ու Աֆրիկայում:

Տասնամյակների ընթացքում նա իրականացրել է անթիվ ծրագրեր՝ տեսողական հաշմանդամություն ունեցող աղջիկներին կարդալ սովորեցնելուց մինչև մտավոր հաշմանդամություն ունեցող կանանց աշխատանքով ապահովելը:

Պելլեգրի ընտրությունն այդ պատասխանատու պաշտոնին նոր դարաշրջանի մեկնարկն է, երբ հաշմանդամություն ունեցող կանայք ու աղջիկները հնարավորություն են ստանում դառնալ առավել տեսանելի, խոսել առավել բարձրաձայն, պահանջել հավասարություն, որն ամրագրված է ոչ միայն փաստաթղթերով, այլև իսկապես հասանելի է իրենց կյանքի տարբեր փուլերում: Բազմաթիվ մրցանակներից զատ իր անգնահատելի աշխատանքի համար Անան Իսպանիայի թագավոր Խուան Կարլոս Առաջինի կողմից արժանացել է Իզաբել Առաջին Կաստիլացու անվան շքանշանին, որ իր հայրենիքի բարձրագույն պարգևներից է:



Թեմի Դափուորիթ

Ճնվ. 1968 թ.

Թեմի Դափուորիթը շատ հարցերում է առաջինը: Նա ԱՄՆ-ի առաջին կին սենատորն է, որ պաշտոնավարման տարիներին երեխա է ունեցել, այն էլ 50 տարեկանում, նա ասիական ծագում ունեցող առաջին կին սենատորն է և առաջին կին սենատորն է, ում ոտքերը անդամահատված են:

Եվ թերևս հենց այս վերջին կետն է, որ ստիպում է նրան ավելի ակտիվ զբաղվել քաղաքականությամբ, ավելի շատ աշխատել, քննադատել իշխանություններին ու մի շարք խնդրահարույց հարցեր բարձրաձայնել: Բարձրակարգ տիտանե ոտքերի փոխարեն Թեմին գերադասում է իր անվասայլակը: Նա չի ամաչում, չի թաքցնում այն լուսանկարներում: Հպարտորեն ցուցադրում է սայլակը, ինչպես ցուցադրում է վզից կախված մեդալները, քանի որ Դափուորիթի պատմությունը ոչ թե կորստի, այլ հաղթանակի մասին է:

Նա կորցրել է իր ոտքերը ռազմադաշտում պայթյունի հետևանքով: Դափուորիթը լավ պատրաստված օդաչու էր, միակ կինն իր դասարանում: Նա, անշուշտ, գիտեր բոլոր ռիսկերը. եթե հակառակորդը հարձակվի, վառվող ուղղաթիռից դուրս ցատկել հնարավոր չի լինի:

2004 թվականին դեռ կապիտան Թեմի Դափուորիթը Իրաքի ռազմական գործողությունների ընթացքում հերթական չվերթն էր իրականացնում: Նա չէր կարողացել կանխատեսել հանկարծահաս հարձակումը: Պայթյունից հետո նա ամեն ինչ արեց, որպեսզի փրկի իր ենթակայության տակ գտնվող ուղևորներին՝ զոհաբերե-

լով իր ուղքերը: Սակայն այսօր Թեմին իրեն հերոս չի համարում: Ուղքերը կորցնելուց ընդամենը 12 շաբաթ անց նա գործի անցավ: Թեև դեռ վիրահատության և երկար ապաքինման կարիք ուներ, նա թողեց զինվորական կարիերան ու ընկղմվեց քաղաքականության մեջ՝ սկսելով սենատորի աթոռի համար քարոզարշավը: Նա հստակ գիտակցում էր, որ պաշտոն ստանձնելու դեպքում կարող էր ավելի օգտակար լինել, քան ռազմի դաշտում:

Հաղթանակը միանգամից ու հեշտ չտրվեց, սակայն սենատոր դառնալուն պես հանձն առավ զբաղվել մի շարք խնդիրներով, որոնց մասին մինչ այդ աղոտ պատկերացում ուներ: Զբաղվեց հաշմանդամություն ունեցող այն անձանց խնդիրներով, ովքեր ուզում են ավելի ակտիվ գործունեություն ծավալել, պատերազմից վերադարձած վետերանների խնդիրներով, որոնց մասին մոռացել է սեփական պետությունը, ծննդկան կանանց խնդիրներով, ովքեր հնարավորություն չունեն միաժամանակ խնամելու իրենց երեխաներին և աշխատելու: Հիմա նա ունի միջոցներ և ազդեցություն՝ սատարելու այդ բոլոր մարդկանց, բարելավելու նրանց կյանքը. չէ՞ որ օգնելով կարիքավորներին ու թույլերին, հասնելով հավասարության և արդարության՝ շահում են նաև մյուսները: Այս բոլոր խնդիրները վերածվեցին օրինագծերի, որոնք Դաքոտորթը մշակել և մշակում է՝ փորձելով թեթևացնել խոցելի խմբերի հոգսը:

Այսօր Թեմին խոստովանում է, որ հոգնել է, որովհետև գրեթե բոլոր աշխատող մայրերն ուժասպառ են, բայց մտքով անգամ չի անցնում կանգ առնել:

«Ես ամեն օր ներկայանալու եմ աշխատանքի և պայքարելու եմ: Եթե հարկ լինի, սողալով կգնամ»:



Լոիս Քրթիս

Ճնվ. 1969 թ.

Եթե դեռ, ասենք, 10 տարի առաջ Լոիս Քրթիսի պես կնոջն անվանեինք հերոս, մեզ պարզապես խելագար կհամարեին: Մինչդեռ Լոիսը մերօրյա իսկական հերոս է: Նա այն կանանցից է, ում պայքարը ժամանակներ անց ոչ միայն չի մոռացվելու, այլև լուսավորելու է շատերի ճանապարհը դեպի հավասարություն և ազատություն:

Լոիսի կյանքը ոգեշնչման անսպառ աղբյուր է, նրա մասին դեռ շատ գրքեր են գրվելու և ֆիլմեր են նկարահանվելու, քանի որ այս անկոտորում կինը վերասահմանում է մտավոր հաշմանդամության ընկալումը բոլորիս ուղեղներում: Լոիսի նմանների շնորհիվ մարդկանց մասին խոսելիս մենք վերջապես կիրաժարվենք նվաստացուցիչ պիտակներից:

Մտավոր հաշմանդամությունը բազմաթիվ տեսակներ ու ձևեր է ներառում իր անվան մեջ: Մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք, թերևս, ամենից հաճախ են ենթարկվում խտրականության, այն էլ առանձնահատուկ դաժանությամբ: Նրանք մշտապես կղզիացած են հասարակությունից, նրանց նկատմամբ կիրառվող պատժամիջոցներն ու սահմանափակումները հիմնականում անհամաչափ են:

Բոլոր մշակույթներում գոյություն ունեն վիրավորական բառեր, նվաստացուցիչ պիտակներ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող փորձառություն, որոնք հիմված են մտավոր հաշմանդամությանը վերաբերող թյուր պատկերացումների վրա:

Մանկուց բժիշկներն աղջկա մոտ ախտորոշել էին շիզոֆրենիա և ճանաչողական հաշմանդամություն, արդյունքում նա խնդիրներ ուներ դպրոց հաճախելիս կամ հասակակիցների հետ պարզապես հաղորդակցվելիս: Նրա ընտանիքը չուներ բավարար միջոցներ, որպեսզի համապատասխան խնամք ապահովեր դստեր համար: Նա հաճախ էր գրոսնելիս մոլորվում, հեռանում տնից, և անհանգիստ մայրը ստիպված էր զանգահարել փրկարարներին: Նրանք, գտնելով Լոիսին, տեղափոխում էին կամ բանտ, կամ էլ հոգեբուժարան: Եվ այդպես 11 տարեկանից Լոիս Քրթիսը, անկախ իր կամքից, մշտական բնակություն հաստատեց Ջորջիայի նահանգային հիվանդանոցի հոգեկան առողջության բաժանմունքում: Տարիներ շարունակ բժիշկները նրա օրգանիզմը թունավորում էին զանազան հանգստացուցիչ դեղամիջոցներով, որոնք անփոփոխ դուրս էին գրվում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար: Նրանք զրկում էին Լոիսին լիարժեք և ակտիվ կյանքով ապրելու իրավունքից:

Ութ տարվա չարչարանքներից ու անազատությունից հետո Լոիսը որոշում է ամեն գնով ազատվել այս կապանքներից: Նա զանգահարում է տարբեր կազմակերպությունների, պատմում է իր վիճակի մասին, փաստաբաններ է վարձում: Պարզվում է՝ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ օրենքները գրվել էին առանց հաշվի առնելու վերջիններիս կարիքները: Եթե Լոիսն ուզում էր ապրել ինքնուրույն, ապա նա չէր կարող համարվել հաշմանդամություն ունեցող անձ և հետևաբար չէր կարող կենսանպաստ ստանալ, իսկ եթե նա հաշմանդամություն ունեցող անձ էր, ապա նա չէր կարող ապրել որպես հասարակության լիարժեք անդամ: Ելքը մեկն էր. Լոիս Քրթիսը դատի տվեց Ջորջիայի նահանգին: Քաշքշուկը ձգձգվեց տարիներ՝ ի վերջո հասնելով ԱՄՆ-ի Գերագույն դատարան, որն էլ իր վճիռը կայացրեց հօգուտ Լոիսի: Հաշմանդամություն ունեցող անձանց տարանջատումը մյուսներից հակասում է երկրի Սահմանդրությանը, հետևաբար անօրի-

նական է Քրթիսին հարկադրաբար պահել բժշկական հիմնարկությունում:

Այսօր Լոիսն ապրում է իր կարիքներին համապատասխանող բնակարանում, ունի օգնական, որ աջակցում է նրան տարբեր հարցերում: Նա նկարչուհի է, արդեն մի քանի անհատական ցուցահանդես է ունեցել: Նաև սիրում է երգել, ճամփորդել ու ժամանակ անցկացնել ընկերների հետ, վայելում է կյանքի փոքրիկ ուրախությունները, որոնք տրված են բոլորիս ի ծնե, իսկ Լոիսը ստիպված է եղել պայքարել դրանց համար:



Շաֆաֆ Փավեյ

Ճնվ. 1976 թ.

Շաֆաֆ Փավեյն ամենևին չէր ծրագրել պաշտպանել մարդու իրավունքներն ու ազատությունները, չէր ցանկանում զբաղվել մարդասիրական կամ խաղաղաշինական գործերով, երբեք չէր ուզել դառնալ քաղաքական գործիչ կամ ակտիվիստ: Նա սովորական աղջիկ էր Անկարայից, որ մեկնել էր Ցյուրիխ՝ արվեստ ուսանելու, և ուրիշ ապագա էր մտովի գծագրում: Բայց ինչպես հաճախ պատահում է, ճակատագիրը մեր փոխարեն որոշումներ է կայացնում, ու մեկ ակնթարթում մեզ ծանոթ կյանքն անհետանում է: Մի օր գնացքը, որի ուղևորների մեջ էր Շաֆաֆը, ծանր վթարի է ենթարկվում: Երիտասարդ աղջիկը կորցնում է մի ձեռքն ու մի ոտքը՝ հայտնվելով հաշմանդամություն ունեցող անձանց համար մարտահրավերներով լի աշխարհում:

Իհարկե, կան բացառություններ՝ կանայք, որ պայքարում են իրենց և մյուսների հավասարության համար: Շաֆաֆը սկսեց լիարժեք ու իմաստալից կյանքով ապրելու իր քրտնաջան պայքարը: Հանկարծ նա նկատեց իր հայրենի Թուրքիայում հաշմանդամություն ունեցող անձանց լռակյաց համայնքին, նա որոշեց փոխել շատերի կանխակալ վերաբերմունքը և կարծրատիպային մտածելակերպը: Շաֆաֆը կայացրեց խիզախ որոշում՝ դարձնել իր պայքարը պիտանի հօգուտ մյուսների՝ փոքրասանությունների, երեխաների, բռնության ենթարկված կանանց, հաշմանդամություն ունեցողների, փախստականների և մյուս բոլոր նրանց, ում իրավունքները պարբերաբար ոտնահարվում են բռնապետական պետությունում: Նա սկսեց աշխատել տարբեր կազմակերպություններում, մշակել

համազգային ու միջազգային ծրագրեր: Փավելը դարձավ թուրք-հայկական երկլեզու «Ակոս» թերթում տպագրվող առաջին թուրք լրագրողներից:

Յոթ տարի շարունակ Շաֆաքն աշխատում էր ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակում: Իրավապաշտպան առաքելություններով այցելում է Ալժիր, Եգիպտոս, Իրան, Լիբանան, Սիրիա, Եմեն, Աֆղանստան: 15 տարի հայրենիքից դուրս ապրելուց հետո Շաֆաքը վերադարձավ Թուրքիա ու մասնակցեց խորհրդարանական ընտրություններին: 2011 թվականին նա ընտրվեց պատգամավոր ընդդիմադիր կուսակցությունից՝ դառնալով թուրքական խորհրդարանում հաշմանդամություն ունեցող առաջին կին պատգամավորը:

Շաֆաքին ճանաչողներն ասում են, որ նա անսպառ էներգիայի աղբյուր է, անտրտունջ մարտիկ է, որ այնքան շատ մարդու կյանք է փոխել երկրագնդի տարբեր անկյուններում: ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Հիլարի Բլինթոնը Շաֆաքին Խիզախության համար մրցանակ հանձնելիս ասել է. «Նա իր հաշմանդամությունը փոխակերպել է ուժի»: Փավելի խիզախությունը, համարձակությունը և համառությունը թույլ տվեցին նրան դառնալ հավասարության համար պայքարող առաջամարտիկ: Նա գերազանցում է բոլորի ակնկալիքները, որ հասարակությունը սահմանում է Շաֆաքի և Շաֆաքի նման հաշմանդամություն ունեցող այլ կանանց համար:



ՔԼԵՐ ՔԱՆԻՆՂԻՆԱՄ

Ճնվ. 1977 թ.

«Պատանեկան տարիքում ես աստում էի իմ հենակները, իսկ ավելի հասուն տարիքում ես սկսեցի սիրել հենակներս. գիտեմ, որ տարօրինակ է հնչում, բայց դրանք դարձան իմ աշխատանքներում հենման կետ, ու այսօր դրանք են ինձ տանում աշխարհի ամենատարբեր կետեր»:

Քլերը ծնվել էր օստեոպորոզ հիվանդությամբ, որը քայքայում է մարդու կմախքն ու ոսկորները, բայց նա մարտահրավեր է նետում ինքն իրեն ու հիվանդությանը և դառնում պարուհի՝ հենակներով ելույթ ունեցող: Նաև սկսում է պարեր հորինել այն բոլոր մարդկանց համար, որոնք առողջական խնդիրներ ունեն:

Նա մարտահրավեր է նետում նորմատիվներին և քննում հաշմանդամության հնարավորությունները փորձառական պարի միջոցով: Որպես խորեոգրաֆ ցույց է տալիս ոչ նորմատիվային մարմնի ու հանրայթում հաշմանդամությամբ ապրելու սոցիալական հետևանքները:

Մի օր, ի զարմանս շատերի, Քլերը հայտնվեց Կամբոջայում: «Շատերի պես ես էլ լսել էի ականների մասին, ու որ դրանց պատճառով շատ մարդիկ հաշմանդամություն էին ստանում: Կար երկու պատճառ, որի հետևանքով մարդիկ հենակներով էին քայլում. մեկն ականի գործարկումն էր, մյուսը՝ պոլիոմիելիտը: Ո՛չ մեկը, ո՛չ մյուսը իմ մասին չէին: Ես օստեոպորոզ ունեի, բայց կար մի բայց: Տեղացիների աչքին ես հաշմանդամություն չունեի, որովհետև փող ունեի: Բնիկներն այստեղ հիմնականում զբաղվում էին հողագործությո-

յամբ, իսկ հենակներով անհնար էր աշխատել հողի հետ, ու աղքատությունը ևս մի շերտ էր դառնում՝ ավելացած հաշմանդամության վրա»։ Տեղաբնիկներից նա իմանում է ռեինկարնացիայի մասին՝ վերամարմնավորման։ Պարզվում է՝ բուդդիստական հավատալիքներում տարածված է այն կարծիքը, թե ֆիզիկական հաշմանդությունն ու խլությունն անեծք են ու պատիժ, որ տրվում են քեզ հաջորդ կյանքում՝ քո գործած մեղքերի համար։ Քլերը որոշում է խոսել այդ մասին։

«Տեղեկատու աստվածները»․ այդպես էր կոչվում ԴաԴա փառատոնի այն ներկայացումը, որ ցույց էր տալիս Քլերը ճանփորությունից հետո Սբ. Աստվածածնի ու Սբ. Նիկոլասի եկեղեցում։ Պարի միջոցով, ձայնի, հունորի, կենդանի երաժշտության, գիտականության, ֆիզիկական հաշմանդամություն ու խլություն ունեցող մարդկանց մասնակցությամբ Քլերը փորձում էր հաղթահարել այն ճեղքվածքները, որ առաջացել էին մշակութային գաղափարների ու մարդկային փորձի միջև։ Ներկայացումը ներառում էր նաև հինգ բարձրաստիճան առաջնորդների հարցազրույցներ. «Արդյոք անգլիական հինգ բարձրաստիճան պաշտոնյաներ թույլ կտային իրենց ժամերով զրուցել հաշմանդամություն ունեցող օտարերկրյա արտիստի հետ։ Չեմ կարծում»։

«Տեղեկատու աստվածներն» առաջարկում էր (հունորով, իհարկե) մտածել կյանքում գործած սխալների թվի մասին, ու թե արդյոք դա բավարար է, որ հաջորդ կյանքում հաշմանդամությամբ ծնվեք։

Արձագանքները հիացական էին. «Քանիսզհենը մեծահոգի է, չչարացած։ Նա անչար հեգնում է սնտիապաշտությունն ու կրոնական հնացած հայացքները։ Բարի սամարացու նման, ի պատիվ իրեն, նա հարգանքով է խոսում հավատի մասին և, իհարկե, մարմնի տարբեր տեսակների»։ «Խիզախ ներկայացում է»։ «Եթե այս ներկայացումը տեսնեին կրոնական ու քաղաքական առաջնորդները, մենք մի քիչ ավելի մոտ կգտնվեինք խաղաղությանը»։

«Քաջություն է պետք ունենալ՝ հետաքննելու կրոնական փորձի բազմազանությունն ու հաշմանդամություն ունեցող մարդկանց ունեցած փորձառությունը»:

2015-ին նա մի պար ներկայացրեց, որ կոչվում էր «Ինձ մի պատճառ ասա, որ ապրեմ»: Պարը հիմնված էր 15-րդ դարի հոլանդացի հանրահայտ նկարիչ Բոսխի «Երկրային հաճույքների այգի» նկարի վրա: Կտավում պատկերված էին հաշմանդամություն ունեցող մարդիկ:

15-րդ դարի սկզբում Եվրոպայում աճում էր վախի մթնոլորտը, աստիճանաբար սպոկալիպտիկ մտքերը խորացան, ու սկսվեց վիուկների որսը, հաշմանդամություն ունեցողների, տարբերվողների, կանանց վիկտիմիզացիայի՝ զոհ դառնալու ալիքը: Բոսխի կտավում շատ են ոչ սովորական մարմինները: Այն նշանները, որ այսօր ծանոթ են մեզ, այն ժամանակ բոլորովին այլ իմաստ ունեին: Օրինակ՝ եթե այսօր բուն համարվում է խելքի ու իմաստության նշան, այն ժամանակ բուն նշան էր հիմարության ու չարիքի: Բոսխի նկարում պատկերված կերպարները, որ հաշմանդամություն ունեին, խորհրդանշում էին մեղքն ու ազահությունը: Եթե նախկինում աղքատներն ու հաշմանդամություն ունեցողները համարվում էին մարդիկ, որոնց պետք էր ձեռք մեկնել, ապա 16-րդ դարում հաշմանդամություն ունեցող մարդկանց սկսեցին պատկերվել որպես չարիքի կրողներ: Երբ հասարակությունը սկսում է ապրել վախի մթնոլորտում, առաջին հերթին հարձակվում է հաշմանդամություն ունեցող մարդկանց, կանանց ու փախստականների վրա:

Քլերը կասկածի տակ դրեց մեր այսօրվա հայացքները ուրիշության, տարբեր լինելու մասին: Նրա ներկայացումը բողոք էր՝ ուղղված բրիտանական կառավարության ծրագրի դեմ, (ըստ այդ ծրագրի՝ դադարեցնում էին բարեկեցության ռեֆորմը՝ նվազեցնելով պետական օգնությունից կախյալ անձանց թիվը), որը նա համեմատում էր նացիստական «T-4» ծրագրի հետ: Վերջինիս նպա-

տակն էր ֆիզիկական բնաջնջման ենթարկել հոգեկան ու մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց էվթանագիայի միջոցով: «Ինչպես որ Բոսխի հաշմանդամություն ունեցող կերպարները հույս չունեն, այնպես էլ այսօրվա մարդկանց պատկերացումները հաշմանդամություն ունեցող և չաշխատող դասի վերաբերյալ հետևյալն են. խարդախների դեպքում նրանք վատագույնն են, լավերի դեպքում անվերջ պետք է ճիգ գործադրեն ու ապացուցեն, որ ունակ են»:

«Այն, թե ինչպես ես դու նայում (ինձ) այսօր երեկոյան» դուետներկայացումը բարձրաձայնում էր տարիքի, գրավչության, սեռերի փոխհարաբերության մասին:

Այսօր Քլերն ապրում է Գլազգոյում: Նա համագործակցում է Շոտլանդիայի ազգային թատրոնի հետ, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի ամենահայտնի ու կշիռ ունեցող արվեստագետներից է, արժանացել է մի շարք մրցանակների ու շարունակում է ելույթներ ունենալ աշխարհի ամենատարբեր կետերում՝ ցույց տալով ու ստեղծելով մարմնի մասին նոր պատկերացումներ, ստեղծելով նոր աշխարհներ, քննադատելով մշակութային ու ինստիտուցիոնալ պատնեշներն ու ապացուցելով, որ հաշմանդամություն ունեցող մարմինը կարող է և հարստացնում ու լրացնում է ժամանակակից աշխարհը:



Կարինե Գրիգորյան

Ճնվ. 1976 թ.

Երբ Կարինեն ծնվեց, Գյումրիի ծննդատան բժիշկները կարեկցանքով դիմեցին ծնողներին. «Ձեզ կհասկանանք, եթե ձեր երեխային թողնեք հիվանդանոցում. անառողջ նորածինների դեպքում նման որոշումները սովորական են, և հետո երեխան հաշմանդամությամբ երկար չի կարողանալու ապրել, եթե ապրի էլ, մտավոր խնդիրներ է ունենալու: Եթե տղա լինեք,- ավելացրել էին բժիշկները,- էլի ոչինչ, բայց հաշմանդամություն ունեցող աղջիկն այս կյանքում տեղ չի գտնի»:

Ծնողները ցնցված էին բժիշկների ասածից ոչ այն պատճառով, որ այդպես էին տեղեկանում իրենց նորածին աղջկա հաշմանդամության մասին, այլ որ բժիշկների մտքով նման բան էր անցնում, և դա դիտարկվում էր իբրև շատ սովորական արարք: Կարինեի ծնողները մանկավարժներ էին՝ անգլերենի ուսուցիչներ: Նրանք ոչ միայն պայքարում էին աղջկա ֆիզիկական խնդիրների բարելավման համար, այլև ամեն ինչ անում էին, որ փոքրիկը չնկատեր հասարակության խտրական հայացքները՝ կարեկցող կամ ծաղրական: Դպրոցական տարիներին հեշտ չէր: Աղջնակը նկատում էր դասարանցիների զարմացած հայացքները. նրանք սովոր չէին իրենցից տարբեր մեկին տեսնելու և չգիտեին ինչպես արձագանքել: Սովորաբար ծնողները երեխաներին փորձում են «պաշտպանել»՝ չնկատելու տալով հաշմանդամություն ունեցողներին, հորինովի պատմություններով ուշադրությունը շեղելով և այդպիսով երեխային պաշտպանելով հետագա մտորումներից: Իսկ նման դեպքերում հարկավոր է կենտրոնանալ ոչ թե հաշմանդամության կամ աջակցող սարքերի վրա, ինչպիսիք են, օրինակ, անվասայլակը, ձեռնափայտը, այլ պետք է ուշադրություն դարձնել մարդուն, նրա արժանիքներին և կարողություններին: Պետք չէ խղճալ նրանց,


անհարկի կարեկցել, փոխարենը պետք է մատչելի ու ներառական միջավայր ստեղծել: Պետք չէ հաշմանդամություն ունեցող անձի մասին ասել, թե տառապում է, խեղճ է, բեռ է ընտանիքի համար և այլն, ոչ էլ պետք է անհարկի գովեստներ շոռայել՝ «հերոս է, որ ապրում է», «ոգեշնչում է», «խիզախ է», այն դեպքում, երբ մեր դիմաց ամենասովորական մարդ է՝ հերոսական ոչինչ չարած, սովորական կյանքով ապրող: Ի դեպ, եթե չեք կողմնորոշվում, թե ինչպես դիմել հաշմանդամություն ունեցողներին, հարցրեք նրանց, նրանք ձեզ կհուշեն: Ցավոք, այս ամենի մասին ոչ բոլորը գիտեն, և հաճախ, երբ առաջին անգամ հանդիպում են հաշմանդամություն ունեցող անձի, շփոթվում են, ամոթի զգացում ունենում ոչ այն պատճառով, որ դիմացինն իրենցից տարբեր է, այլ որ կանեն ինչ-որ սխալ քայլ, որի պատճառով հաշմանդամություն ունեցող անձն իրեն անհարմար կզգա: Պետք է ընդամենը սկսել հաղորդակցվել և ճանաչել մարդուն: Մնացած ամեն բան կստացվի ինքնիրեն: Հենց այդպես էլ Կարինեի դասընկերները, երբ սկսեցին նրա հետ ընկերություն անել ու խաղալ, հասկացան, որ նա հրաշալի ընկեր է ու շատ աշխույժ մարդ, իսկ հաշմանդամությունը պարզապես առանձնահատկություն է: Համալսարանական տարիները հեշտ չտրվեցին աղջկան: Նա հաճախ դասերից հետո փակվում էր սենյակում, որպեսզի քույրն ու ծնողները չտեսնեին ծանր ապրումները, ցանկություն էր ունենում տանից դուրս չգալու ու թաքնվելու բոլորից, բայց ամեն անգամ ինչ-որ գորեղ մի ուժ կարծես օգնում էր աղջկան չհանձնվել և գնալ առաջ: Բուհն ավարտում է գերազանցությամբ, տնտեսագետի փայլուն որակավորմամբ, սակայն կյանքը նոր դժվարություններ էր նրա համար պատրաստել. գործատուները հրաժարվում էին նրան աշխատանքի ընդունել: Կարինեն չի հանձնվում: Որոշում է կամավորություն անել: Կազմակերպությունում ասում են՝ տնտեսագետի կարիք չունեն, փոխարենը Կարինեն առաջարկում է անգլերեն թարգմանություններ անել: Համաձայնում են: Առաջին քայլն արված էր, մնաց մնացածը:

2006 թվականին Կարինեն մասնակցում է ԱՄՆ-ում անցկացվող «Կանանց առաջնորդության և հաշմանդամության ինստիտուտ» դասընթացին: Աշխարհի շուրջ 30 երկրից մասնակիցներ կային: Նրանցից յուրաքանչյուրը մեծ փորձ ու գիտելիքներ ուներ

և իր ոլորտի առաջատար մասնագետ կամ ղեկավար էր: Կարինեն հասկանում է, որ ինքը ևս կարող է միանալ նրանց՝ փոխելով ոչ միայն իր կյանքը, այլև հաշմանդամություն ունեցող շատերի: Նա հիմնում է «Ագաթ» կազմակերպությունը, որը պետք է բարձրաձայներ հաշմանդամության և սեռի հիմքով անհավասարության մասին՝ պայքարելով խնդիրների լուծման համար: «Ագաթ»-ում հաշմանդամություն ունեցող կանայք ու աղջիկները սովորում էին օգտվել համակարգչից, տիրապետել լեզուների և մի շարք արհեստների՝ վարսավիրությունից մինչև հրուշակագործություն: Նրանք առաջինն էին, որ բարձրացրին հաշմանդամություն ունեցող կանանց մայրանալու և սեփական երեխաներին դաստիարակելու իրավունքը: Նրանք վերապատրաստում են տարբեր ոլորտների մասնագետներին, թե ինչպես ճիշտ հաղորդակցվել հաշմանդամություն ունեցող անձանց հետ, օրինակ՝ օդանավակայանի աշխատակիցներին՝ ինչպես ընդունել ու ճանապարհել հաշմանդամություն ունեցող ուղևորներին:

Հերթական արտերկրյա համաժողովներից մեկի ժամանակ Կարինեն ծանոթանում է ապագա ամուսնու՝ Ժան Փոլի հետ: 2011 թվականն էր: Շփվում էին նամակագրությամբ, Կարինեն պարբերաբար խոսում էր հաշմանդամության մասին, մինչդեռ Ժան Փոլը երբեք դրա մասին չէր բարձրաձայնում: Ամիս ու կես անց՝ Կարինեն չի դիմանում ու հարցնում է. «Կներեք, իսկ Դուք հաշմանդամություն ունե՞ք», ինչին նա պատասխանում է. «Դե եթե ակնոց կրելը համարում եք հաշմանդամություն...»:

Այսօր Կարինեն ապրում է ամուսնու ու իր փոքրիկ տղայի՝ Ջեյմսի հետ միասին՝ ոգևորության օրինակ ծառայելով շատ կանանց ու աղջիկների համար: «Ագաթ»-ի ու Կարինեի լավատես համատության շնորհիվ հարյուրավոր մարդկանց կյանքեր են փոխվել: Գործունեության շուրջ տասնհինգ տարիների ընթացքում նրանք շարունակաբար հմտություններ ու փորձ են փոխանցում հաշմանդամություն ունեցող անձանց, ինչի շնորհիվ վերջիններս կարողանում են այսօր սովորել բուհերում, գտնել աշխատանք պակաս դժվարությամբ, ընտանիք կազմել պակաս վախերով, և, ամենակարևորը, չեն վախենում սիրել և լինել սիրված:



Զարուհի Բաթոյան

Ճնվ. 1979 թ.

Երբ փոքրիկ Զարուհուն հարցնում էին՝ մեծանաս, ինչ ես դառնալու, նա վստահ ասում էր. «Կամ քաղաքապետ, կամ էլ նախագահ, պարզ չէ»: Այդ տարիներին պատասխանը ժպիտ էր առաջացնում. ոչ ոք դեռ չէր պատկերացնում, որ տարիներ հետո այս աղջիկը գրեթե միշտ զբաղեցնելու է դեկավար պաշտոններ տարբեր ոլորտներում, դառնալու է Հայաստանում հաշմանդամություն ունեցող առաջին կին նախարարը և համարձակորեն բարձրաձայնելու է այն խնդիրների մասին, որ շարունակ մնացել են անտեսված: «Ես չունեմ սուպերկարողություններ,- կասի նա,- բայց քանի դեռ հնարավորություն ունեմ, իմ փորձն ու գիտելիքներն օգտագործելու եմ Հայաստանում հավասար հնարավորությունների ստեղծմանը նպաստելու համար»: Բայց ամեն ինչ հերթով:

Արմատներով Զարուհին էրզրումցի գաղթականների ընտանիքից է: Դեռևս 19-րդ դարում Արևմտյան Հայաստանից էրզրումցիները փախչում են ջարդերից ու բնակություն հաստատում Ջավախքի Կարգախ գյուղում: Գյուղը հայտնի էր իր տաղանդավոր բնակիչներով, իսկ ամենահայտնին աշուղ Զիվանին էր: Պատմում էին, թե նա կով էր արածեցնում ու ճիպոտի վրա նվագում, մինչև որ մի օր տախտակի վրա ձիու պոչից քաշած մագով սազ է սարքում ու սկսում երգ ածել:

Երգ ասողների այս գյուղում էր ապրում նաև Զարուհին: Գյուղի բարձր բլրին էր գտնվում Զարուհու պապիկի տունը: Երեկոներն այստեղ խաղաղ էին ու քաղցր, քամին խշշում էր փափուկ բարդի-

ների մեջ, ու պապիկը փոքրիկ աղջկա համար պատմություններ էր պատմում՝ մեկը մեկից կլանող ու հետաքրքրական:

Մի կարճ շրջան ապրում են Ռուսաստանում, ապա ընտանիքով տեղափոխվում են Երևան: Զարուհին անհամբեր պատրաստվում էր ուսումնական տարվան, բայց... «Ես չիմացա՝ դպրոցական կյանքն ինչ է: Մեկ վեց տարեկանում ինձ ընդունեցին դպրոց, մեկ էլ տարեվերջին լուսանկարվելիս տեսա դասընկերներիս»: Ներանոսական կրթությունը դպրոցներում հասանելի չէր, հաշմանդամություն ունեցող աղջկա համար ամեն բան անմատչելի էր, և Զարուհու համար ընտրվում է տնային ուսուցումը: Դասընկերները հաճախ գալիս էին այցելության, և նա սիրում է ժպիտով ասել, որ թեև չի գնացել դպրոց, բայց ունի մտերիմ դասընկերներ:

Զարուհին տասը տարեկան էր, երբ կյանքից հեռացավ հայրը: Չափազանց ծանր կորուստ էր: Հայրը մշտապես խրախուսում էր աղջկան ու մյուս դուստրերին, հորդորում էր չընկճվել ու չվախենալ:

«Կորուստների հետ պետք է սովորել ապրել. դրանց տեղը չի լրացվում երբեք», - հարցազրույցներից մեկում կիսվում է Զարուհին:

Մոր հորդորով աղջիկը մասնակցում է «Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության դասընթացներին, ու շուտով Զարուհուն են վստահում «Արևածաղիկ» ամսաթերթի խմբագրի պաշտոնը, նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց շահերի պաշտպանության պատասխանատուն է դառնում: Նա ակտիվորեն ներգրավվում է մի շարք ծրագրերում, որոշում է բարձրագույն կրթություն ստանալ ԵՊՀ-ի լրագրության ֆակուլտետում, այնուհետև Երիտասարդ առաջնորդների դպրոցն է ավարտում, իսկ ավելի ուշ՝ 2012-ին, մեկնում է ԱՄՆ-ի Օրեգոն նահանգ՝ մասնակցելու Կանանց առաջնորդության և հաշմանդամության ինստիտուտի կարճատև դասընթացին, որը բեկումնային է դառնում Զարուհու կյանքում: Ընդամենը մեկ ամիս անց ԱՄՆ-

ից վերադառնալուց հետո Զարուհին իր համախոհ այլ կանանց հետ ստեղծում է «Դիսքրիվիթի ինֆո» տեղեկատվական հարթակը, հետո նաև համանուն ՀԿ-ն և նախագահում այն: Զարուհին նախագահում է նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության ազգային դաշինք» իրավաբանական անձանց միությունը: Նա համահիմնադիրն է «Զարտալրինտ» տպարանի, որը նպաստում է հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությանը: Նաև հասցնում է մի շարք մրցանակների արժանանալ ու նույնիսկ գիրք գրել՝ «Անմոռուկ»:

2018 թվականին Զարուհի Բաթոյանը նշանակվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, իսկ մեկ տարի անց՝ նախարար: Մշտապես զբաղեցնելով պատասխանատու և ղեկավար դերեր՝ Բաթոյանը չի մոռանում անընդհատ բարձրաձայնել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերը, խոսել ներառականության խնդիրներից ու կանանց իրավունքներից:

2021 թվականից Բաթոյանն ԱԺ ութերորդ գումարման պատգամավոր է: Բարերախտաբար և ուրախությամբ պիտի փաստենք, որ սխալվում էր Զառա Բաթոյան պոետը, երբ տարիներ առաջ գրում էր իր «Անմոռուկ» բանաստեղծությունը.

Ինձ մոռանալն այնքան հեշտ է.


Ես չեմ քայլում հանդիպակաց փողոցներով,

սրճարանում պատահաբար ինձ չես գտնի:

Նեղ ու փոքրիկ այս քաղաքում

ինձ մոռանալն այնքան հեշտ է:

Զարուհու նման կանայք ոչ միայն չեն մոռացվում, այլև մշտապես հիշեցնում են ազատության մասին, կարծրատիպերից չկաշկանդվելու, սովորելու մասին ու իմացածով կիսվելու: Փխրունություն ու կամք և եռանդուն ոգի. ահա մեր հերոսուհու բաղադրությունը:



Էմի Փրդի

Ճնվ. 1979 թ.

Էմի Փրդիի մասին խոսելիս լրագրողներից մեկը մի անգամ ասաց. «Նա չեմպիոն է, որ ողբերգությունը վերածեց հաղթանակի»:

Էմին երբեմն հիշում է իր կյանքը մինչև հիվանդությունը, դեպքերի բնականոն ու սովորական ընթացքը՝ Լաս Վեգաս քաղաքը, որտեղ ծնվել էր, դպրոցը, ուր հաճախել էր, աշխատավայրը, որտեղ համեստ փող էր վաստակում: Մինչև հիվանդությունը նա երագում էր ճամփորդել աշխարհով մեկ, հիշողություններ հյուսել: Բայց նա նաև հիշում է այն չարաբաստիկ օրը, որն սկսվեց, ինչպես մյուսները: Աշխատանքի պահին ինքնագագոթությունը թուլացավ, մտածեց՝ հարբուխ է. թույլ էր, իսկ արդեն երեկոյան պարզ դարձավ, որ մի բան այն չէ. ոտքերն ու ձեռքերը մանուշակագույն ներկվեցին, տենդից մարմինը ցնցվում էր, սիրտն էլ այնպես էր բաբախում, որ կարծես ուզում էր դուրս պոկվել կրծքից: Շտապ տեղափոխեցին հիվանդանոց: Թեստերը ցույց տվեցին, որ Էմին մենինգիտով է վարակվել՝ բակտերիալ հիվանդությամբ, որն առաջին հերթին ախտահարում է կենսական կարևոր օրգաններն ու նյարդային համակարգը:

Երկու ամիս Էմիի օրգանիզմը պայքարում էր հիվանդության դեմ, բժիշկները փրկվելու ընդամենը 2% հավանականություն էին կանխատեսում: 19 տարեկանում զվարթ ու անհոգ աղջկանից նա փոխակերպվեց մի անձի, որ կախված էր դեղերից ու բժշկական սարքերից, ոչ թե որպեսզի ապրեր, այլ գոնե գոյատևեր: Նա կորց-

րեց փայծաղը, երիկամները, լսողությունը ձախ ականջում ու երկու ոտքերը, բայց դուրս գրվեց հիվանդանոցից: Այնուհետև սկսվեց ապաքինման տանջալից շրջանը: Հիշում է, թե ինչպես առաջին անգամ տեսավ իր պրոթեզները, որ իրար փակցված խողովակներ էին հիշեցնում, ու չհավատաց, որ դրանք իր նոր ոտքերն են:

Կամաց-կամաց Էմին սկսեց ուժեր գտնել, որպեսզի կրկին տեսնի կյանքի վառ գույները: Նա որոշեց վերադառնալ իր սիրելի զբաղմունքներից մեկին՝ սնտուբորդին: Սկզբում իր մարմինն իրեն չէր ենթարկվում: Ծնկները չէին ծավվում, չէր կարող հավասարակշռությունը պահել, մետաղյա ոտքերն էլ օտար էին թվում: Սակայն հետդարձի ճանապարհ չկար: Նախ՝ ոչ մի գույգ պրոթեզ հարմար չէր սահելու համար, և Էմին որոշեց ինքնուրույն սարքել իր վերջույթները: Պտուտակներից, փայտից ու վարդագույն կաշուն ժապավենից պատրաստված ոտքերը Էմիի 21-ամյակի լավագույն նվերն էին: Նա վերջապես կարող էր սահել, ճամփորդել, երագել:

Համառությունն ու աշխատասիրությունը տվեցին իրենց պտուղները ոչ միայն ձյունածածկ սահադաշտում, այլև դրանից դուրս: 2005 թվականին նա հիմնադրեց իր բարեգործական կազմակերպությունը, որ ոգեշնչում է ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխաներին զբաղվել ակտիվ սպորտաձևերով: Այնուհետև մեկնեց Հարավային Աֆրիկա մեկ այլ բարեգործական առաքելությանը, որտեղ հազարավոր չքավոր երեխաների օգնեց ոտաբորիկ չմնալ ու դպրոց հաճախել:

Միննույն ժամանակ Էմին չէր մոռանում սնտուբորդի մասին: Համառ ու անձնուրաց մարզումների արդյունքում նա երկու տարի անընդմեջ հաղթեց աշխարհի առաջնության ոսկե գավաթը: Նրա ջանքերի շնորհիվ սնտուբորդը ներառվեց պարաօլիմպիկ խաղերի ցուցակում, ու մեր հերոսուհին դրանց մասնակից դարձավ: 2014-ին Սոչիի խաղերից նա տուն վերադարձավ բրոնզե մեդալով: Իսկ չորս տարի անց Պեյչենգի խաղերից՝ արծաթով ու բրոնզով: Էմին հա-

մոզված է, որ մեր վախերին դիմակայելով ու մեր երևակայությունը
չկաշկանդելով ենք մենք գրում սեփական հաղթանակի պատմությ-
յունը:



ԱՆԽԵԼԱ ԲԱՇԽԵՐ

ՃՆԱԿ. 1983 թ.

- Ես ուզում եմ լինել արդար պաշտոնյա,- հայտարարեց Անխելա Բաշխերը՝ Իսպանիայի Վալիադոլիդ քաղաքի ավագանու նորընտիր անդամը:

Առաջին հայացքից այս հայտարարության մեջ զարմանալի ոչինչ չկա, սակայն Անխելան տարբերվում է աշխարհի մյուս բոլոր պաշտոնյաներից. նա Դաունի համախտանիշ ունեցող առաջին կինն է, որ պետական պաշտոն է զբաղեցնում:

Դաունի համախտանիշը բավականին տարածված երևույթ է: Մարդու յուրաքանչյուր բջիջ ունի կորիզ, որի մեջ թաքնված են այդ մարդու մասին բոլոր տեղեկությունները՝ մազերի գույնը, աչքերի ձևը, մատների երկարությունը, ձայնի բարձրությունը և այլն: Այս ամենը պահվում է քրոմոսոմների մեջ: Յուրաքանչյուր կորիզի մեջ կա 46 քրոմոսոմ: Դաունի համախտանիշ ունեցող մարդիկ ունեն 47-ը: Նրանք ունեն բնորոշ դիմագծեր, ինչպես նաև որոշակի մտավոր խնդիրներ: Սակայն անհրաժեշտ կրթության և պատրաստվածության դեպքում նման մարդիկ կարող են լիարժեք կյանք վարել: Դաունի համախտանիշ ունեցող յուրաքանչյուր անձ յուրահատուկ է:

Յուրահատուկ կին է և Անխելա Բաշխերը: Նա ինքն իրեն նկարագրում է որպես ընկերասեր, լավատես, համառ և նպատակասլաց անձնավորություն: Անխելան հաջողակ է նաև, քանի որ նրա ծնողները մշտապես սատարել են իրենց դստերը, ստեղծել ամեն պայման, որպեսզի Անխելան չմեծանա կաշկանդված կամ կղզիացած: Նա մեկ տարեկանից արդեն հաճախել է դպրոց, ստացել է

անհատականացված կրթություն: Նախքան բարձր և պատասխանատու պաշտոն զբաղեցնելը Բաշիյերը երկու տարի աշխատել է Վալիադոլիդի քաղաքապետարանում, որտեղ ձեռք է բերել բազում աջակիցներ: Գործընկերները խանդավառությամբ են փաստում, որ ճանաչում են Անխելային՝ որպես պարտաճանաչ, աշխատասեր, նվիրված աշխատակցի: Բաշիյերը հստակ գիտակցում է, որ իր շնորհիվ կարող են ձայն ստանալ բոլոր այն անձինք, որոնց հասարակությունը տարանջատում է կամ վանում:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան շեշտում է, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է հնարավորություն ունենան մասնակցելու քաղաքական և հասարակական կյանքին, ինչպես նաև ունենան ընտրելու իրավունք մյուսների հետ հավասար հիմունքներով: Մինչդեռ մի շարք երկրներում, ներառյալ Իսպանիայում, դատարանները, զրկելով մտավոր հաշմանդամություն ունեցող մարդկանց ֆինանսական կամ կենսական կարևոր որոշումներ կայացնելու հնարավորություններից, զրկում են նաև ընտրություններին մասնակցելու իրավունքից: Սակայն ընտրելու իրավունքն էական նշանակություն ունի, քանի որ այն թույլ է տալիս հաշմանդամություն ունեցող անձանց որոշում կայացնել և զգալ իրենց հասարակության անբաժան մի մասը:

Անխելա Բաշիյերն այն անհրաժեշտ կայծն է, որ կօգնի ավերելու հաշմանդամություն ունեցող մարդկանց շուրջ ձևավորված տգետ ու վիրավորական պատկերացումները: Այս բացառիկ կնոջ օրինակը ցույց է տալիս, որ մեր կողքին ապրող Դաունի համախտանիշ ունեցող մարդիկ նույնպես կարող են ակտիվ կյանք վարել, նրանց իրավունքներն ու ազատությունները պետք է պաշտպանված լինեն:



Տերմոն և Տերողա Բրիեյն

Ճնվ. 1983 թ.

Կարմիր ծովի ափին գտնվում է Արևելյան Աֆրիկայի երկրներից մեկը՝ Էրիթրեայի պետությունը: «Էրիթրոս» հունարենից բառացի թարգմանվում է կարմիր ու հուշում տեղանքը (իսկ հիշում եք, թե ինչ են կոչում արյան կարմիր գնդիկները): Այս երկիրը սահմանակից է Սուդանին, Ջիբութիին ու Եթովպիային: Վերջինիս հետ երկարատև պատերազմելուց հետո՝ 20 տարի անց՝ 1993 թվականին, կարողանում են անկախություն ձեռք բերել:

Էրիթրեայից են երկվորյակ քույրեր Տերմոնն ու Տերողան: Նրանց սիրելի հերոսուհին Հաբեն Գիրման է, որի մասին արդեն կարդացել եք մեր գրքում ու գիտեք, որ նա կուրություն ու խլություն ունեցող առաջին կինն էր, որ դարձավ Հարվարդի համալսարանի շրջանավարտ:

«Նա կենդանի ապացույցն է այն բանի, որ եթե վճռական լինենք ու աշխատասեր, այլ ելք չենք ունենա ու կհասնենք հաջողության: Երբ մենք նվաճվում ենք ու արդարացումներ գտնում, թե ինչու չենք հասնում այս կամ հաջողության, միշտ հիշում ենք Հաբենին ու ոգևորվում»:

Աղջիկները ճամփորդական բլոգ են վարում, իսկ առաջին մեծ ճամփորդությունը Էրիթրեայից Անգլիա տեղափոխությունն էր, երբ

դեռ շատ փոքր էին: Ծնողները որոշում են փախչել պատերազմական երկրից ու երեխաների համար կրթություն ստանալու ավելի լավ երկիր ու նպաստավոր տարածք գտնել: Երկվորյակ աղջիկները ծնվել էին լսող, բայց երբ յոթ տարեկան էին, փողոցում խաղալիս մի բռպեում խլանում են: Պատճառն այդպես էլ չեն հասկանում:

«Մինչև մեր խլանալը հիշում եմ ձայները՝ եկեղեցու զանգերի ձայնը, հավերի կչկչոցը, մեծերի խոսակցությունները, բայց նաև պատերազմի ձայներն եմ հիշում՝ կրակոցներ ու պայթյուններ. դրանք շատ բարձր էին, ասես կողքի սենյակում էին կատարվում: Հիշում եմ, որ թաքնվում էինք լոգարանում և անտանելի վախենում», - պատմում է Հերոդան:

«Հաճախ մենք զգում էինք սահմանափակումները, մենք սևամորթ էինք և խուլ, իսկ դա նշանակում էր կրկնակի պայքար, նշանակում էր տասն անգամ ավելի աշխատանք՝ ապացուցելու, որ չենք պատրաստվում հողս ցնդել: Խնդիրը մեր մաշկի գույնը չէր, կուրություն ու խլություն ունենալը կամ մեր կին լինելը, այլ ընկալման հարցն էր: Դժվար էր մի օրում խլանալը, հավատալը, որ այլևս նախկինի պես չենք լինելու, աստիճանաբար սովորեցինք ժեստերի բրիտանական լեզուն: Մեր առաջ քիչ-քիչ աշխարհը բացվեց»: Չլսող երեխաների գիշերօթիկ դպրոցը երկրորդ տան պես էր, իսկ այ Լոնդոնի նորաձևության քոլեջը սառն ընդունեց աղջիկներին: «Մեզ վերևից էին նայում, թեև մենք թարգմանիչներ ունեինք ու պատրաստված էինք բավականին լավ, մարդիկ չէին հասկանում, թե ինչ է խլությունը, ու դա դիտարկում էին խանգարող հանգամանք»:

2016-ին դերասանուհի Հերմոնն ու մոդել Հերոդան որոշում են բլոգ բացել՝ խոսելով հավասարության մասին ու ոգևորելով մարդկանց՝ բացահայտելու իրենց անհատականությունը: «Նորաձևության տարածքը պետք է բազմազան լինի, բազմազանությունը չպետք է թրեճի լինի,- պնդում են աղջիկները,- բանալին

մատչելիությունն է: Մենք փորձում ենք խուլ մարդկանց ցույց տալ, որ իրենք կարող են ամեն ինչի հասնել, լսող մարդկանց դեպքում փորձում ենք փոխել բացասական կարծրատիպերն ու վերաբերմունքը խլության հանդեպ: Մեր բլոգը թույլ է տալիս հայացքները լայնացնել. ինչքան շատ բան գիտես, այնքան քիչ ես ատում»:

Այսօր քույրերին հետևում են հարյուրհազարավոր մարդիկ, նրանք ոգևորում են ոչ միայն հաշմանդամություն ունեցող մարդկանց, այլև բոլորին ու կոչ են անում ոչ թե փախչել դժվարություններից, այլ չվհատվել, պայքարել ու աշխատել: Աղջիկներն ասում են. «Խուլ լինելը գուցե բարդ բան է, բայց պատնեշ դնում է վախեցած լինելը»: Ուստի պետք է խիզախել ոչ թե մեկ անգամ, այլ անընդհատ:



Ջեսիֆա Կոֆա

Ճնվ. 1983 թ.

«Ես ծնվել եմ առանց ձեռքերի, և հաշվի առնելով, թե ինչեր կարող եմ առանց դրանց, ես ամենայն ազնվությամբ կարող եմ ասել՝ եթե ինձ տային ընտրություն, ես կգերադասեի ապրել առանց ձեռքերի»,- Ջեսիֆա Կոֆա այս տարօրինակ խոսքերը լսելուց հետո նախ ապշում ես, հետո, հետաքրքրասիրությունից դրդված, ուզում ես իմանալ, թե ով է այդ համարձակ աղջիկը:

Ջեսիֆան երբեք չի ունեցել ձեռքեր, նա իր առաջին օրվանից սովորել է ամեն բան ոտքերով անել, և իր պատկերացմամբ դա շատ սովորական երևույթ է. նա կարող է ինքուրույն հագնվել, ուտել, մեքենա վարել, զբաղվել սպորտով ու մարտարվեստներով (նա աշխարհում առանց ձեռքերի առաջին մարզիկն է, որ վաստակել է թեկվանդոյի սև գոտի), ղեկավարել սեփական բիզնեսը, երջանիկ ու համերաշխ կյանք վարել իր ամուսնու հետ: Անել բոլոր առօրյա գործերն ու բլոգ վարել համացանցում իր հիացական երկրպագուների համար:

Նա իր կյանքը երբեք չէր համարում արտառոց մինչև 2008 թվականը, երբ Ջեսիֆա Կոֆա մասին սկսեցին խոսել աշխարհի տարբեր կետերում: Երեք տարի քրտնաջան, անտրտունջ ու համառ դասընթացներից հետո Ջեսիֆան սովորեց ինքնաթիռ վարել: Նա դարձավ առանց ձեռքերի առաջին կինը, ով ստացավ օդանավ վարելու լիցենզիա:

Կոֆաը խոստովանում է, որ օդում ճախրելն իրեն պարզում է գերագույն բերկրանք ու անբացատրելի ազատության զգացում:

Բայց մի օր նա հասկացավ, որ այս անսահման ազատությունը և հնարավորությունները իրենց հետ բերում են նաև պարտականություններ: Իր նորընծա հայտնիությունը կարող է և պետք է դառնա հրաշալի հարթակ, որտեղից նա կխոսի հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների, ներառականության ու հավասարության մասին: Այսպես, Ջեսիքան վերջին 10 տարին պատմում է տարբեր երկրներում ապրող մարդկանց, թե ինչպես ձեռքեր չունեցող կինը սովորեց ինքնաթիռ վարել. մի հաղթանակ, որ գրեթե անհնար էր թվում: Ու որ բոլորը կարող են մեծ բարձունքներ նվաճել, եթե ունենան հավասար հնարավորություններ: Իր ճամփորդությունների ընթացքում նա այցելում է այնպիսի երկրներ, որտեղ հաշմանադամություն ունեցող երեխաներին հեռու են պահում մարդկանցից, հաշմանդամությունը համարվում է ամոթալի գաղտնիք կամ անեծք: Այդ երեխաները նույնիսկ դպրոց գնալու իրավունքից են զրկված: Բայց Ջեսիքայի կերպարն ու նվաճումները ստիպում են մարդկանց նայել մտացածին սահմաններից դուրս:

Նա խոստովանում է, որ թռիչքն իրեն տվել է ավելի մեծ բան, քան թևեր, այն իրեն ձայն է տվել: Ձայն, որպեսզի խոսի բոլոր այն անձանց անունից, ովքեր լռում են կամ չեն ստացել խոսելու հնարավորություն: Այսօր նա մշակել է «Ծրագիր 2025» նախագիծը, որտեղ տարբեր ազգության ինժեներներ միասին կառուցում են RV-10 մոդելի փոքրիկ ինքնաթիռը: Այն լինելու է ամբողջովին ոտքերով կառավարվող աշխարհում առաջին օդանավը, որ հեռավոր երկրների բնակիչներին կպատմի իր բացառիկ օդաչուի մասին: Սա Ջեսիքայի ուղերձն է մոլորակին. հաշմանդամություն ունենալ չի նշանակում լինել անկարող:



Քսենիա Բեզուգլովա

ծնվ. 1983 թ.

Քսենիան սիրում էր կյանքը, և կյանքն էլ Քսենիային էր սիրում ու շոայլ էր նրա հանդեպ: Քսենիան անընդհատ սովորում էր, ճանաչում, փորփրում ու գտնում, նպատակներ էր դնում և հասնում իր ուզածին: Նա ոչ թե աղջիկ էր, այլ հումորի կծիկ, որ բացվում էր թեև առ թեև ու երջանկացնում շրջապատող բոլորին: 2008 թվականն էր, մեծ ընտանիքով գնում էին հանգստի: Քսենիան անհոգ ծիծաղում էր, մեքենան պանում էր առաջ: Նա սպասում էր առաջնեկի ծնվելուն, ու մտքով էլ չէր անցնում, որ բռնությունները հետո կյանքը գլխիվայր փոխվելու է: Ավտովթարներն, ասում են, նման հատկություն ունեն:

«Փորձեցի շարժել ոտքերս, նրանք ինձ բանի տեղ չդրեցին, ու ես չէի հասկանում՝ ինչ է հետս կատարվում...»: Բժիշկը պնդում էր հրաժարվել երեխայից: Քսենիան պնդում էր հակառակը: Նրան շտապ վիրահատություններ էին հարկավոր՝ մեկը մեկից ծանր, մեկը մեկից անմարդկային ցավոտ:

Նա բոլոր վիրահատությունները կտանի առանց ցավազրկողների՝ ցավից ուշագնաց լինելով և, սակայն, իր երեխայի կյանքի ապահովությանը ոչ մի վայրկյան վնաս չտալով: Հետո կծնվի Տաիսիան՝ սքանչելի, հետո՝ Ալեքսան ու Նիկիտան՝ զարմացնելով շատերին:

Սովորաբար նմանատիպ վթարներին հաջորդում են բաժանումները՝ թողնելով մարդկանց վթարի հետ մեն-մենակ: Քսենիայի ամուսինը ոչ մի վայրկյան չհեռացավ կնոջից, իսկ ավելի ուշ Քսենիան ևս կանգնեց հաշմանդամություն ունեցող մարդկանց կողքին:

Դժվարությունները շատ էին, բայց նա որոշել էր ապրել ու ոչ միայն իր համար, այլև օգնելով այն բոլոր մարդկանց, որ անցնում են նմանատիպ դժվարությունների միջով:

Մոսկվայի քաղաքապետարանում նա համակարգում ու ղեկավարում էր հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող բաժինը: Նրա շնորհիվ Մոսկվայի Ձախսափնյա լողափը մատչելի է դառնում հաշմանդամություն ունեցող մարդկանց համար: Պարբերաբար մասնակցում էր ներառական նորաձևության ամենամյա ցուցադրություններին՝ «Առանց սահմանի»:

Մոչխում անցկացվող պարաօլիմպիկ խաղերի ժամանակ նա մեկն էր այն ընտրյալներից, ում տրված էր օլիմպիական ջահը տանելու պատիվը:

2012 թվականին Հռոմում անցկացվում էր հաշմանդամություն ունեցող կանանց գեղեցկության միջազգային մրցույթը, որն իր տեսակով հավասարազոր էր «Միսս աշխարհ» մրցույթին: Քսենիան դեմ էր գեղեցկության մրցույթներին, բացի այդ ինքն իրեն միշտ տեսել էր այլ ոլորտում՝ գիտության, գործարարության, իսկ ահա իրեն զանգել են և տես, թե ուր են հրավիրում: Բժիշկը կարճ ու կոնկրետ ասաց՝ եթե քեզ համար չես ուզում մասնակցել, ապա գնա ու մասնակցիր մյուս բոլոր աղջիկների համար:

Քսենիան այդպես էլ արեց. նա գնաց, մասնակցեց ու հաղթեց:

Թախլանդում նա գծագրել է տալիս հատուկ լողափ՝ նախատեսված հաշմանդամություն ունեցողների համար:

Նա անվասայլակ օգտագործող առաջին մարդն է աշխարհում, որ դարձավ Մերսեդես-Բենսի դեմքը:

Նա մշտապես ուղղում է, թե ինչպես ճիշտ դիմել հաշմանդամություն ունեցող մարդկանց: Երբեմն ոմանք ասում են՝ սահմանափակ հնարավորություններ ունեցող մարդիկ, իսկ, օրինակ, ինքը՝ Քսենիան, ունի անսահմանափակ հնարավորություններ:

Քսենիան պատմում է, թե ինչպես են երբեմն մարդիկ առանց հարցնելու փորձում իր սայլակը հրել օգնելու նպատակով: Այդ մարդիկ իսկապես չեն ուզում վնասել, ուզում են որևէ բանով օգնած լինել, բայց դրա կարիքը չկա: «Եթե շատ եք ուզում հաշմանդամություն ունեցող մարդկանց օգնել, կարելի է պարզապես հարցնել՝ օգնե՞լ, թե՞ ոչ, բացի այդ հաշմանդամություն ունեցողն ինքը, եթե հարկ լինի, օգնություն կլինդրի», - հուշում է Քսենիան:

2021 թվականին Քսենիան պատրաստվում էր մասնակցել ընտրական քարոզարշավին, ցավոք նոյեմբեր ամսին նա ընկավ ու կոտրեց ազդրոսկրը: Արցունքների միջից դիմելով իր ընտրազանգվածին՝ նա ներողություն խնդրեց նախ արցունքների համար ու ավելացրեց. «Ցավն անտանելի է, բայց իմ չմասնակցելը դեռ ոչինչ չի նշանակում: Ես վիրահատվելու եմ՝ ապաքինվեմ ու վերադառնամ»: Բոլորս հավատում ենք նրան:



Վարդինե Գրիգորյան

ծնվ. 1984 թ.

Հասարակությունը կարող է չափազանց դաժան լինել նրանց հանդեպ, ովքեր տարբերվում են մյուսներից: Մարդիկ հաճախ չար աչքով են նայում նրան, ով ուրիշ տեսք ունի, ուրիշ ձևով է մտածում կամ ապրում: Ոչ բոլորին է հաջողվում դիմակայել ծուռ հայացքների, ոչ միայն չկողմանալ, չկոտրվել, այլև ի հեճուկս շրջապատի՝ դառնալ աշխարհի լիարժեք, կարևոր մասնիկը: Այդ մարդկանցից մեկն էլ Վարդինե Գրիգորյանն է, որ գործով ապացուցում է՝ թերահավատներն իր հարցում, անշուշտ, սխալվել են:

Վարդինեն ծնվել է Վանաձորում և առաջին օրվանից պարուրված է եղել մայրական անսահման սիրով: Մայրը նրա առաջին երկրպագուն էր, պաշտպանն ու ապաստանը: Իսկ մանուկ Վարդինեին իսկապես պետք էր պաշտպանել դաժան մարդկանցից. աղջիկը ուներ Մարֆանի համախտանիշ. դա շատ հազվագյուտ գենետիկ խախտում է, որն ազդում է մարդու մարմնի կմախքը ու ներքին օրգանները պահող հյուսվածքների վրա: Այն տարբեր դեպքերում տարբեր դրսևորումներ ունի: Վարդինեի դեպքում որոշ հատկանիշներ տեսանելի արտահայտված են: Արդեն 13 տարեկանում նկատելի էր նրա ողնաշարի ծովածությունը:


Մեր հերոսուհին դեռ երեխա էր, երբ կյանքից հեռացավ մայրը՝ թողնելով դստերը տատի խնամակալությանը: Նա էլ իր հերթին էր փորձում պաշտպանել Վարդինեին աշխարհի չարից, բայց իր ուրույն ձևով, որ երբեմն խիստ էր ու սթափեցնող: Գուցե հենց այդ շրջանում է ծնվում արդարության համար խոսող Վարդինեն, հավասարութ-

յան համար աշխատող Վարդինեն, տեսանելիության համար մտահոգվող Վարդինեն: Գործին չէր խանգարի նաև Վարդինեի սերը դեպի ուսումն ու նոր գիտելիքներ ձեռք բերելու ձգտումը:

Վարդինեն ինքնուրույն սովորում է անգլերեն և ընդունվում է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ: Այնուհետև բացվում են նոր դռներ՝ կրթությունը ԱՄՆ-ում շարունակելու հնարավորություն: Վերադառնալով Հայաստան՝ նա հայտնվում է մարդու իրավունքների և ժողովրդավարության ոլորտում, որտեղ Վարդինեի ներուժը լավագույնս է փայլատակում: Նա իսկական իրավապաշտպան է՝ ճշմարտախոս ու արդար: Լինելով ընտրական իրավունքի ոլորտում երկրի առաջատար մասնագետներից մեկը՝ նա իր ձայնը բարձրացնում է հանուն մասնակցելիության, հավասարության ու տեսանելիության, հոգուտ մերժվածի և մեկուսացվածի իրավունքների, ընդդեմ կեղծ ներառականության և ձևական փոփոխությունների:

Բացի մասնագիտական հաջողություններից նա մեկ այլ հաղթանակ էլ գրանցել է սեփական մարմնի նկատմամբ: Յոթ տարի առաջ՝ մի քանի բարեհաջող վիրահատություններից հետո, Վարդինեն ուղղեց իր ողնաշարը. չէ՞ որ անհարմարության կամ դժվարության հետ համակերպվելը երբեմն հավասարազոր է հանձնվելուն:

Գործընկերները Վարդինեի մասին խոսելիս ամենից հաճախ նշում են երկու հատկանիշ. նախ՝ բարձր պրոֆեսիոնալիզմը, երկրորդը՝ անչափ համեստությունը, մինչդեռ նա հպարտանալու, նույնիսկ գոռոզանալու շատ հիմքեր ունի: Թվում է՝ այն կանայք, որ փոխում են աշխարհը, հեշտացնում են շրջապատի կյանքը, օգնում են թույլին, ապրում են ինչ-որ հեռավոր երկրներում: Սակայն նրանք մեր կողքին են, և նրանցից մեկի անունն է Վարդինե Գրիգորյան:



Քելի Նոֆա

Ճնվ. 1984 թ.

«Նորմալը» ընդամենը բառ է: Չանձրայի բառ:

Քելի Նոքս

Քելին լույս աշխարհ եկավ առանց ձախ բազկի: Փոքր տարիքում նա պրոթեզավորված ձեռք ուներ, բայց յոթ տարեկանից որոշեց այլևս չկրել արհեստական ձեռքը: Նա չէր ուզում թաքցնել ու ձևանալ: «Այն նման չէր իսկական ձեռքի, ու ես չէի զգում, թե դրա շնորհիվ ձեռք ունեմ. առանց արհեստական ձեռքի ես ինձ ավելի կարող էի զգում, մինչդեռ արհեստական ձեռքով ես ինձ զգում էի հաշմանդամ»:

Ավելի ուշ նա հայտնվեց մի աշխարհում, ուր ամեն ինչ չափված ու ձևված էր, բայց հենց Քելիի համարձակության շնորհիվ աշխարհն այլևս նույնը չէ ու լայնացրել է իր մտահորիզոնն ու պատկերացումները նորի մասին և ուրիշության:

Քելին մողել է:

Նա հպարտորեն քայլում է նորաձևության ճեմուղով և գեղեցկության նոր չափանիշներ թելադրում:

Քելին մայր է:

«Երբ հղի էի ու սպասում էի առաջնեկիս, տարբեր գրքեր ու հոդվածներ էի կարդում մայրության մասին: Հոդվածներից մեկում գրված էր. «Հիշեք, որ երբ դուք մայրանաք, սկսելու եք ամեն ինչ մի ձեռքով անել»: Ես, գրողը տանի, ծնվածս օրվանից ամեն ինչ մի

ձեռքով եւ անում: Ու ահաբեկվեցի, իսկ հետո մի քիչ էլ մտածեցի ու հասկացա, որ, չէ՛, ես բոլորից մի քայլ առաջ եմ»:

Քելին համարվում է ամենաազդեցիկ կանանցից մեկը և հաշմանդամություն ունեցող առաջին կինն էր, որ հայտնվեց Լոնդոնի նորաձևության շաբաթում:

Նա պարբերաբար ելույթներ է ունենում և խոսում էլքվիզմի մասին նորաձևության մեջ: Էլքվիզմը խտրականությունն է հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ:

«Պատկերացրեք՝ չկա ինստագրամ, ու չկան հավանումները: Ինչ սքանչելի է աշխարհը, որտեղ Դուք ազատ եք Ձեզնից, որտեղ Դուք ազատ եք գեղեցիկ լինելու պարտավորությունից, ու կարող եք չլինել այն կատարելատիպը, որ պարտադրում են սոցցանցերը Ձեզ: Դուք պարտավոր չեք ունենալ կատարյալ մաշկ ու կատարյալ կյանք: Դուք միայն կարիք ունեք լինելու լսելի, տեսանելի, ներկայացված: Այսօր Ձեզ ոչ թե Դուք եք ներկայացնում, այլ լրատվամիջոցներն ու սոցցանցերը: Մեղիան Ձեր փոխարեն որոշում է կայացնում, թե Դուք ինչ երազանքներ ունեք ու ինչ նպատակներ»:

«Ես ծնվել եմ այսպես: Ինձ համար նորմալը սա է՝ թե չունենալը, հաշմանդամություն ունենալը: Ինչ ենք մենք հասկանում՝ ասելով հաշմանդամ: Այն բացասական բառ է, ջարդված ու չի համապատասխանում իմ անձին ու իմ մարմնի հնարավորություններին: Այն, ինչ կարող են անել իմ ընկերները երկու ձեռքով, ես անում եմ մեկով. ես լողում եմ, ես մագլցում եմ, հեծանիվ եմ վարում, պարում: Ես երբեք ինձ չեմ դիտարկել իբրև տարբեր մարդ, ուրիշ մարդ, հաշմված: Ես ինձ չեմ համեմատել ուրիշների հետ»:

Հաշմանդամություն ունեցող մարդուն տեսնելիս շատերը սովորաբար ամաչում են, անհարմար զգում, ամաչում են հարցեր տալ, ամաչում են նայել, փորձում են խրախուսող բառեր ասել՝ մի օր բժիշկները մի դեղ կհնարեն, ոչինչ, մի օր կլավանաս, մինչդեռ դրա կարիքը չկա: Պետք չէ խղճալ, պետք չէ անտեղի կարեկցել: Հաշ-

մանդամություն ունեցողի հետ պետք է խոսել հավասարը հավասարի հետ: Եվ ամենակարևորը. պետք չէ սևեռվել հաշմանդամության վրա:

Քելին պնդում է. «Հաշմանդամությունը հասարակությունն է ստեղծում, երբ ներառականության համար դնում է պատենշներ՝ փորձելով ֆիզիկական հասանելիություն ստեղծել: Կորցրած ձեռքով ես հաշմանդամ չեմ դառնում: Իմ ձեռքի կորուստը ձեր ընկալումն է: Որովհետև ես ոչինչ չեմ կորցրել, ես լրիվ եմ ու ամբողջական: Ես հաշմանդամ եմ պակաս հնարավորությունների դեպքում, հասարակության վերաբերմունքի պարագայում»:

Քելին նաև հանդես է գալիս «Բազմազանություն, այլ ոչ հաշմանդամություն» արշավում, իսկ 2016 թվականից «Զուգահեռ Լոնդոն» և «Հաշմանդամության վստահորդ» արշավների ղեսպանն է:

«Ես մարմինս փոխելու կարիք չունեմ,- ասում է Քելի Նոքսը,- հասարակությունը կարիք ունի փոխելու իր հայացքները՝ կապված իմ մարմնի հետ: Իմ մարմինն ինձ տրված արտոնություն է, ինչի շնորհիվ ես խոսում եմ ու կարողանում օգնել այլ մարդկանց: Իմ մարմնի շնորհիվ ես փոխում եմ նորաձևության աշխարհը:

Պետք է ընտրել ոչ թե վախը, այլ սերը: Վայելե՛ք ձեր թերություններն ու զորակցե՛ք իրար: Լեռներ շարժե՛ք, խոչընդոտները հաղթահարե՛ք, նայե՛ք Ձեզ ու ասե՛ք ինքներդ Ձեզ՝ ես այն եմ, ինչ եմ: Հպարտացե՛ք Ձեզնով ու սիրե՛ք այն մաշկը, որի տակ գտնվում եք Դուք»:



Ջենիֆեր Բրիֆեր

Ճնվ. 1987 թ.

Ինչպես ԱՄՆ-ում 1990-ականներին ապրող ցանկացած դեռահաս աղջիկ, Ջենիֆերը նույնպես հեռուստացույցով նայում էր մարմնամարզության աստղ Դոմինիկ Մոչեանուի ելույթներն ու հիանում: Նա էլ էր ուզում հնարքներ անել իր կուռքի պես, ախր նրանք այնքան նման էին. գրեթե նույն տարիքին էին, դիմագծերով շատ չէին տարբերվում, երկուսի նախնիներն էլ Ռուսիայից էին: Ապա ինչն էր խանգարում, որ Ջենիֆերն էլ դառնար լավ մարմնամարզիկ:

Մինչդեռ Ջենիֆերը շատ էր տարբերվում իր շրջապատի բոլոր աղջիկներից: Նա ծնվել էր առանց ոտքերի: Ծնողներն անմիջապես հրաժարվել էին երեխայից՝ նորածնին թողնելով մանկատանը: Բայց բախտը ժպտացել էր փոքրիկ Ջենիֆերին: Բրիքերների ընտանիքը չէր կարողացել անտարբեր անցնել կենսուրախ աղջնակի կողքով և որոշել էր որդեգրել նրան: Նոր ընտանիքում, շրջապատված նոր ծնողների ու երեք եղբայրների անսահման սիրով և խնամքով, նա անհոգ մանկություն ուներ: Նրան բոլորը քաջալերում էին, սատարում ու հավատում, որ Ջենիֆերը կարող է սարեր շուռ տալ:

Ընտանիքի խրախուսանքներից ոգևորված՝ Ջենիֆերը որոշեց չհրաժարվել իր երազանքից ու զբաղվել մարմնամարզությամբ: Հենց առաջին քայլերից պարզ դարձավ, որ աղջիկն ունի բնատուր աթլետիզմ և ունակություններ, իսկ երբ դրան էլ գումարվում էին Ջենիֆերի համառությունն ու քրտնաջան աշխատանքը, ապա նա վերածվում էր բացառիկ մարզիկի: Եվ նա սկսեց մեկը մյուսի հետ-

և ից բարձունքներ նվաճել՝ բազում հաղթանակներ, տիտղոսներ, մեղալներ, միջազգային փառք:

Չբավարարվելով արդեն ձեռք բերածով՝ Ջենիֆերը սկսեց մարմնամարզության նոր ուղղություններ ուսումնասիրել ու հղկել իր հմտությունները: Նա հետաքրքրվեց օդային ակրոբատիկայով և բատուտով: Մի քանի հեղինակավոր երաժիշտներ առաջարկեցին միասին հրավառ բեմադրություն ստեղծել, որտեղ ոչ միայն կլիսնեին երաժշտություն ու պար, այլև Ջենիֆերի ակրոբատիկ ներկայացումները: Այդպես ստեղծվեցին մի շարք շոու ծրագրեր, որոնք հանդիսատեսը շատ ջերմ ընդունեց: Ջենիֆերը դարձավ աստղ, ում ամեն ելույթից հետո երկրպագուները հանգիստ չէին տալիս:

Կարծես ամեն ինչ դասավորվել էր ավելի լավ, քան կարելի էր երազել: Բայց մի բան պակասում էր: Ու Ջենիֆերը որոշեց, որ ժամանակն է գտնելու իր կենսաբանական ծնողներին: Պահոցներում երկար փորփրելով՝ նա գտավ իր որդեգրման փաստաթղթերը ու չհավատաց իր աչքերին: Պարզվում է՝ ծննդյան պահին նրա ազգանունը Մոչեսանու է եղել. իր կուռքը, ում նա երկրպագում էր ու փորձում էր կրկնօրինակել, ում ազդեցությամբ նա որոշել էր դառնալ մարմնամարզիկ ու լիովին փոխել իր կյանքը, Ջենիֆերի հարազատ քույրն էր: Նրանք սկզբում նամակագրական կապ հաստատեցին, այնուհետև հանդիպեցին: Ու այսօր քույրերին այլևս ոչինչ չի բաժանի: Երբեմն կյանքը իսկապես նմանվում է կախարդական հեքիաթի:



Հաբեն Գիրմա

Ճնվ. 1988 թ.

Հարյուրամյակներ շարունակ հաշմանդամություն ունեցող անձանց թույլ չեն տվել կրթություն ստանալ՝ հիմնվելով մի շարք տգետ պատճառաբանությունների վրա. նրանք, իբր, չունեն ունակություններ, նրանց սովորել պետք չէ, նրանք չեն ուզում կրթվել և այլն: «Հերիք է կարծեք, որ մենք ոչ կոմպետենտ ենք: Մենք տաղանդավոր ենք, մենք ջանասեր ենք: Մեզ խանգարում է միայն ձեր խտրական վերաբերմունքը»,- ասում է Հաբեն Գիրման ու իր խոսքերն ապացուցում գործով:

Նա կուրություն և խլություն ունեցող առաջին կինն է, որ ավարտել է աշխարհի ամենահեղինակավոր համալսարաններից մեկը՝ Հարվարդի իրավաբանական դպրոցը, և իր փխրուն ուսերին բարձել է շատ մեծ բեռ՝ պայքարել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների համար:

Գիրմայի ծնողներն ԱՄՆ էին եկել աֆրիկյան շատ փոքր երկրից՝ Էրիթրեայից: Բայց հայտնաբերել էին, որ խաղաղությունն ու արդարությունը տեղանքից կախված չեն, դրանք ստեղծում են մարդիկ: Յուրաքանչյուրիս ընտրությունն է՝ ինչպիսին կլինենք ու ինչ գործի կձառայենք: Հաբենը դեռ շատ փոքր աղջնակ էր, երբ սովորեց խուսանավել մեր աշխարհում, որտեղ ամեն ինչ, կարծես, նախատեսված է լսել և տեսնել կարողացող անձանց համար:


Դպրոցական ճաշարանում մի միջադեպ փոխեց նրա կյանքը: Ճաշացանկն անմատչելի էր տեսողության խնդիրներ ունեցող աշակերտների համար, իսկ դպրոցը հրաժարվում էր փոխել այն՝ ասելով, որ ամեն մեկի քմահաճույթին չի հարմարվելու: Հաբենը մի փոքր հետազոտություն արեց ու պարզեց, որ օրենքի համաձայն՝ դպրոցը պարտավոր է հոգալ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները: Դպրոցի տնօրենությունը ներողություն խնդրեց և փոխեց ճաշացանկի ձևը, արդյունքում շահեց ոչ միայն Հաբենը, այլև տեսողության խնդիրներ ունեցող շատ ուրիշ աշակերտներ:

Ծնողների դասերին ականջ դնելով՝ Հաբենը հասկացավ, որ կա երկու տարբերակ՝ լռել կամ պայքարել, որպեսզի իր ընտրությունից օգուտ քաղեն հարյուրավոր մարդիկ: Ու որոշեց դառնալ փաստաբան՝ համառ ու ըմբոստ: Հիմա յուրաքանչյուր հանդիպման ժամանակ Հաբենին ուղեկցում է իր թարգմանիչը: Նա գրուցակցի ցանկացած բառ մուտքագրում է համակարգչի մեջ, ապա տեղեկությունն անմիջապես փոխանցվում է մեկ այլ հատուկ սարքի, որը վերածում է ասվածը Բրայլի այբուբենի՝ թղթի վրա տպելով հատուկ կետեր և բացատներ: Շոշափելով՝ Հաբենը հասկանում է իրեն ուղղված խոսքերը և պատասխանում է: Առաջին հայացքից բարդ թվացող գործընթացն այնքան արագ է տեղի ունենում, որ գրույցն անդադար առաջ է գնում: Տարիների ընթացքում Հաբենը մշակել է իր խոսքը, որպեսզի հնարավորինս հստակ արտաբերի հնչյունները: Նա նաև ճամփորդում է իր տեսողական օգնականի՝ հավատարիմ շան՝ Մայլոյի հետ:

Շատերը մինչ այժմ չգիտեն տեսողական և լսողական հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու կանոնները: Գիրմայի հետ անմիջականորեն խոսելու փոխարեն մարդիկ հաճախ նայում են թարգմանչին, կարծես աղջիկն իրենց կողքին կանգնած չէ: Նա նաև դեմ է կեղծ գովեստներին, որովհետև դրանց տակ թաքնված

են խղճահարություն ու կարեկցանք, իսկ հաշմանդամություն ունեցող մարդիկ դրա կարիքն ամեննին չունեն: Գիրման համոզված է, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հորինում են աշխատելու նոր հնարքներ, և նրանց անհրաժեշտ են գործատուներ, ղեկավարներ, դպրոցներ, որ ըստ արժանվույն կգնահատեն այս նորարարական հնարքները: Շատերը հաշմանդամությունը դիտարկում են որպես բեռ, մինչդեռ Գիրման ընկալում է այն որպես նորը ստեղծելու հնարավորություն:

TIME



ՍՈՒՍԱՆԱ ՌՈՂՐԻԳԵԳ

ՃՆԱԿ. 1988 թ.

Որքան իրեն հիշում է, Սուսանան ուզում էր լինել ուրիշների պես: Ուզում էր նմանվել իր դասընկերներին, ուզում էր չտարբերվել իր հասակակիցներից, փորձում էր ամեն ինչում կրկնօրինակել ավագ քրոջը. նույնիսկ նրա պես սկսեց զբաղվել սպորտով: Խաղահրապարակում, մարզադաշտում, թե դպրոցում Սուսանան չէր համակերպվում պարտության հետ: Ամեն ձախողումից հետո կրկին ոտքի էր կանգնում, փորձում էր այնքան, մինչև առանց որևէ մեկի օգնության հաջողության հասնել:

Բայց նա իսկապես տարբերվում էր մյուսներից: Սուսանան ավրինոս էր: Ալբինիզմը ցանկացած գունավորման բացակայությունն է բույսերի, կենդանիների կամ մարդկանց արտաքին կառուցվածքի մեջ, որի հետևանքով մազածածկույթը, մաշկը, աչքերը և այլ հատվածներ գրեթե սպիտակ են: Քանի որ այս հատվածներում բացակայում է գունային երանգ հաղորդող մելանին պիգմենտը, ավրինիզմ ունեցող մարդկանց մաշկն ու աչքերը չափազանց զգայուն կարող են լինել արևի ճառագայթների և լույսի հանդեպ: Երբեմն այն կարող է հանգեցնել աչքի կառուցվածքի փոփոխության՝ դառնալով մարդու տեսողության խնդիրների, նույնիսկ կուրության պատճառ:

Սուսանան նաև տեսողական հաշմանդամություն ունի: Մանուկ տարիներից պահպանված նպատակասլացությունն ամեննին չի կորել:

«Հաշմանդամությունը իմ հատկանիշներից մեկն է: Այն իմ էության կարևոր մասն է, բայց այն ինձ չի բնութագրում: Երբ ոմանք չեն հավատում իմ ունակություններին, ես կրկնապատկում եմ իմ ուժերը»:

Նա ձեռք է բերել բժշկի մասնագիտություն, իսկ այս ոլորտում տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար այնքան շատ խոչընդոտներ կան, որ կարելի է առանձին գիրք գրել: Սակայն հայրենի Իսպանիայում նա հայտնի է ուրիշ բնագավառում գրանցած հաջողությունների համար: Սուսանան աշխարհի առաջատար եռամարտիկներից է: Եռամարտը բավականին բարդ սպորտաձև է. այն իր մեջ ներառում է լող, հեծանվավազք և վազք: Հաղթող է ճանաչվում երեք մարզաձևերում լավագույն ցուցանիշ գրանցած մարզիկը: Ռոդրիգեզը պատահական մի օր համացանցում լսեց եռամարտի սպորտային հավաքի մասին: Նա նույնիսկ չգիտեր, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց «թույլ են տալիս» զբաղվել այդ մարզաձևով: Նա ընկերներից մեկին խնդրեց լինել իր ուղեկիցը, մյուսից էլ խնդրեց երկտեղ հեծանիվը, ու մրցելույթի վերջնագիծը հատելուն պես Սուսանան հասկացավ, որ ուզում է նվիրվել եռամարտին: Եվ սկսվեց հոգնատանջ մարզումների, հետո դրանց հաջորդող պատասխանատու մրցույթների շարանը, բազմաթիվ ռեկորդներ ու հաղթանակներ:

Երբ 2020 թվականին երկրագունդն անսպասելի բախվեց COVID-19 համավարակին, պարզ դարձավ, որ համաշխարհային քառսը հաղթահարելի կլինի առաջին հերթին իրենց գործին նվիրյալ անձանց շնորհիվ: Առաջին ամիսներին բոլորին պարուրած վախն ու տագնապը մի կողմ թողնելով՝ Սուսանան գործի դրեց իր մասնագիտական ունակությունները: Նա սկսեց աշխատել հիվանդանոցի թեժ գծի կենտրոնում: Ամեն օր նա պատասխանում էր իսպանացիների զանգերին, խորհրդատվություններ անում նրանց ինքնագագաղության, վիրուսից պաշտպանվելու, ապաքինվելու, թեստավորման վերաբերյալ: Իսկ երեկոյան մարզվում էր, որպես-

զի վերականգնել մարմինն ու միտքը և ի վիճակի լինել հաջորդ օրը կրկին գերլարված աշխատելու: Ամենօրյա մի քանի ժամանոց ինտենսիվ պարապմունքները նաև ուրիշ պատճառ ունենին. Սուսանան Իսպանիայի ազգային հավաքականի անդամ էր և պետք է ելույթ ունենար Տոկիո-2020-ի Պարալիմպիկ խաղերին:

Անցավ 2020 արտասովոր ու դաժան տարին, միջազգային մրցաշարերը դարձան հնարավոր: Սուսանան մեկնեց՝ իր հայրենիքը ներկայացնելու եռամսրտի և 1500 մետր վազքի ուղղություններում: Ուղեկցորդի օգնությամբ նա ցույց տվեց իր լավ մարզավիճակն ու մարտական ոգին: Տարիների ընթացքում նվաճած բազմաթիվ մեդալների փնջին նա ավելացրեց մարզիկի համար, թերևս, ամենապատվավորը՝ պարալիմպիկ խաղերի ոսկին:



Արունհիմա Սինհա

Ճնվ. 1989 թ.

Երբ ասում ենք Հնդկաստան, մտքներովս չի անցնում, որ աշխարհում Սիբիրից հետո երկրորդ ամենացուրտ կետը գտնվում է հենց այնտեղ՝ Հնդկաստանի հյուսիսում, բայց դա ձմռանը, երբ ջերմաստիճանը միջինում -45 աստիճան է, մուսոնային ամպերն էլ՝ մռայլ, կուտակված, իսկ այ ամռանը դառնում է +50 աստիճան, դե եկ ու դիմացիր: Ծայրահեղությունների այս երկրում բնակչությունը ոչնչով չի զիջում եղանակային տրամադրություններին. երկրի հիսուն տոկոսը գրաճանաչ է, հիսուն տոկոսն էլ գրել-կարդալ չգիտի: Արունհիմայի բախտը բերում է, ու նա ծնվում է կիրթ ընտանիքում: Հայրը զինվորական էր, մայրն էլ առողջապահական համակարգում բարձր պաշտոն ուներ: Աղջիկը սիրում էր ֆուտբոլ խաղալ, նաև վոլեյբոլի սիրահար էր, խաղում էր ազգային հավաքականում՝ դառնալով վոլեյբոլի յոթակի չեմպիոն: Նրա ապագան պարզ էր, բայց... Զինվորական հոր մահից հետո որոշում է ինքն էլ զինվորական դառնալ: Նամակ է գրում զինված ուժերին ու պատասխան նամակ ստանում, որ պետք է քննություն հանձնի:

2011 թվականի ապրիլի 12-ին քսաներկուամյա Արունհիման խորը շունչ է քաշում ու բարձրանում գնացք: Անհանգստանում էր շատ, մտքում ընդունելության քննության հարցերն էին, երբ վագոն ներխուժած ավազակները փորձում են աղջկա պայուսակն ու ոսկե շղթան գողանալ: Սինհան ընդդիմանում է ու թույլ չի տալիս: Ավազակները խմբով էին, նրանք աղջկան գնացքից հրում են ու գցում դուրս: «Ես ընկել էի ռելսերին ու չէի կարողանում շարժվել, պատմում է Արունհիման,- իսկ հետո նկատեցի դիմացից եկող մյուս

գնացքը: Փորձեցի կանգնել, չկարողացա: Գնացքն անցավ ոտքիս վրայով: Ցավից գիտակցությունս կորցրի ու էլ բան չեմ հիշում»: Տեղացիներն աղջկան հասցնում են հիվանդանոց:

Բժիշկները փորձում են նրա կյանքը փրկել. ծնկից ներքև ոտքը փշրված էր, վնասված էին նաև նստատեղի ոսկորները: Նա արնահոսում էր, ու միակ ելքը ոտքն արագ ամպուտացնելն էր: Նրա կյանքը փշրված էր: Հնդկաստանի սպորտի ու երիտասարդության նախարարությունը որոշ աջակցություն է ցուցաբերում, իսկ հնդկական երկաթուղիները՝ աշխատանք առաջարկում: Նրան անվճար պրոթեզ են տրամադրում, անվճար բուժում լավագույն առողջարաններից մեկում: Բայց Արունիման չգիտեր այլևս ինչպես ապրել, ինչ անել: Առողջարանում լսում է, որ մականախաղի վարպետ Յուվրաջը պայքարում է քաղցկեղի դեմ. փաստորեն կան մարդիկ, մտածում է աղջիկը, որ չեն հանձնվում, ու որոշում է, որ ինքն էլ պետք է առաջ գնա ու բարձրանա: Բառացիորեն՝ բարձրանա վեր: Համալսարանից բազային գիտելիքներ ունեղ ալպինիզմի մասին: Մայրն ու մեծ եղբայրը խրախուսում են աղջկան ու ցույց տալիս Էվերեստը: Բայց մինչ վեր բարձրանալը գետնի վրա լուծելիք հարցեր կային:

Ոստիկանությունը հետաքննություն էր սկսել, ու նրանց առաջին եզրահանգումն աղջկա վարկածը կասկածի տակ դնելն էր: Ըստ նրանց՝ Արունիման ինքնասպանություն է փորձել գործել կամ էլ գնացքի տակ անզգուշորեն է ընկել: Արունիման հայտարարում է, որ ոստիկանությունը ստում է, ու որ նրանք պարզապես համագործակցում են հնդկական երկաթուղիների հետ: Վերաքննիչ դատարանը պարտավորեցնում է վերջինիս որպես փոխհատուցում տույժ վճարել Արունիմա Մինհային 500 հազար րուփի (որ կազմում է մոտ 6600 դոլար):

2013 թվականին Արունիման պրոթեզով կտրում-անցնում է Էվերեստը: 17 ժամ անց առաջին լեռը հաղթահարված էր, մնացին մյուսները: Արունիման հաշմանդամություն ունեցող առաջին կին լեռնագնացն էր աշխարհում, որ բարձրացել էր լեռը: Նա կտորի

վրա գրում է իր սիրած երկու իմաստասերների անուններն ու ամրացնում ձյան վրա: Իր անձնական հաղթանակը նվիրում էր նրանց:

Երբ հանդիպում է լեռնագնաց առաջին կնոջը՝ Բաչենդրի Պալին, որ Էվերեստ բարձրացած առաջին հնդիկ կինն էր, ու պատմում է գլխով անցածը, հուզված Բաչենդրին ասում է. «Աղջիկս, եթե դու այս ոտքով Էվերեստ ես բարձրացել, ժամանակն է, որ աշխարհը ճանաչի քեզ»:

Մինհան որոշում է բարձրանալ բոլոր մայրցամաքների ամենաբարձր կետերը: Նա հաղթահարում է Եվրոպայում Էլբրուսը, Աֆրիկայում՝ Կիլիմանջարոն, Ավստրալիայում՝ Կոստյուսկոն, Ասիայում՝ Էվերեստը, Հարավային Ամերիկայում՝ Դենալին, հյուսիսային Ամերիկայում՝ Ակոնկագուան: 2019 թվականին նա բարձրանում է Անտարկտիդայի՝ թվով յոթերորդ ամենաբարձր կետն ու դառնում աշխարհում առաջին կինը, որ պրոթեզով բարձրացել է Վինսոն լեռը:

2014 թվականին նա գրում է ինքնակենսագրական գիրք՝ «Լեռներում վերածնվածը. ինչպես ես կորցրի ամեն ինչ ու նորից վերագտա», իսկ 2018 թվականի նոյեմբերին Գլազգոյի համալսարանում դոկտորի կոչման արժանանում: Այո՛, նա դեռ շարունակում է սովորել ու սովորել, բայց սրանով նա չի սահմանափակվում: Արունիման հիմնել է անվճար սպորտային ակադեմիա աղքատ ու առողջական խնդիրներ ունեցող մարդկանց համար: Նա պարբերաբար արժանանում է մրցանակների ու պարգևների, իսկ դրանցից ստացած գումարը փոխանցում է կարիքավորներին:

Արունիման այսօր էլ շարունակում է գրավել նորանոր բարձունքներ, նրա խիզախությունը ոգևորում է ոչ միայն Հնդկաստանի երիտասարդությանը, այլև ամբողջ աշխարհին: Նրա մասին գրում ու խոսում են ամենուր, իսկ ամեն ինչ սկսվեց տարիներ առաջ առողջարանային իր փակ սենյակում որոշում կայացնելուց, նախ՝ ապրել, և հետո՝ ունենալ նպատակներ ու հասնել դրանց՝ անկախ դրանց անիրականանալի թվալուց:



Մանասի Ջոշի

Ծնվ. 1989 թ.

Մանասին փետրագնդակի թեթև սուրացող փափկությանը սիրահարվեց հենց առաջին հայացքից: Փոքրիկ աղջիկ էր, երբ մեծերը խաղում էին առողջ լինելու համար, դե նաև նիհարելու: Ոչ ոք չէր մտածում, որ կարելի է փետրագնդակին լուրջ մոտենալ, իսկ Մանասին զբաղվեց լրջորեն ու դարձավ... ծրագրավորող:

2011 թվականին ավտովթարի հետևանքով Մանասին կորցնում է ոտքը: Ընտանիքը նրա կողքին էր և ամեն կերպ փորձում էր աջակցել աղջկան: Երբ դրվեց ոտքի պրոթեզը, առաջին բանը, որ արեց Մանասին, հաճույքի համար, հենց այնպես ձեռքը բաղմիստոն վերցնելն էր: Ու նա որոշեց պարապել: Քրտնաջան պարապել:

Մուսբայի վերականգնողական կենտրոնում նա կանոնավոր մարզվում էր, իսկ արդեն 2015-ին որոշեց մասնակցել մրցումների, և բոլորը հանկարծ բացահայտեցին, որ Մանասի Ջոշին կարծես թե շատ լավ է խաղում: Մանասին ընդունվում է փետրագնդակի ակադեմիա: Ի զարմանս ընտանիքի և Մանասիի՝ նրան դիմավորում են գրկաբաց: 2018-ին նա մասնակցում է Թաիլանդում անցկացվող կանանց անհատական պարամրցույթին և բրոնզե մեդալ նվաճում: Ոգևորությանը չափ չկար: Մանասին ջանք չի խնայում ավելի քրտնաջան մարզվելու համար: Եվ դրական արդյունքները չեն ուշանում: Շվեյցարիայում անցկացվող աշխարհի մրցաշարում նա զբաղեցնում է առաջին տեղն ու նվաճում աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Ամենամեծ մարտահրավերը Մանասին համարում է հասարակության կողմից ընդունված լինելը և տխրությանը նկատում է, որ պարասօլիմպիական խաղերի արդյունքները հաճախ անտեսվում ու աննկատ են մնում, լրատվամիջոցները շրջանցում են կամ չեն գնահատում ըստ արժանվույն. «Բայց մի՞թե հենց պարասօլիմպիկ մարզիկները չեն արժանի հիացմունքի, կամ մի՞թե նրանք էլ չեն չարչարվում, չեն մարզվում արդյունքներ գրանցելու համար»:



Ջազմին Աֆարլետ

Ճնվ. 1991 թ.

Ջազմինը երկու տարեկան էր, երբ բժիշկներն ախտորոշեցին արթրիտ: Սոսկալի ցավեր. ահա թե ինչ էր անդադար զգում երեխան:

Հաճախ ցավերն այնքան էին ահագնանում, որ կարիք էր լինում հիվանդանոց տեղափոխվելու: Հիվանդանոցային կյանքը երբեմն ամիսներ էր ձգվում: Ջազմինը ստիպված էր դպրոցից բացակայել: Հետաքրքրությունը դասերի ու դպրոցի հանդեպ նվազում էր՝ բացառությամբ երկու առարկաների: «Ես քամված էի, հիասթափված ու հոգնած, բայց աշխարհագրությունն ու բնական գիտություններն իմ մեծագույն սերերն էին, ու ոչ մի վայրկյան չէի դադարում սիրել: Ընտանիքս և ուսուցիչներս նկատում էին դա և իրենց հերթին խրախուսում»:

Ամենշաբաթյա ներարկումներն ու օրը երկու անգամ ֆիզիոթերապիան իրենց դրական արդյունքը չուշացրին: Ավարտական քննության ժամանակ Ջազմինը կարողացավ ամենաբարձր գնահատականը ստանալ աշխարհագրությունից: Նա շատ էր ուզում կրթությունը շարունակել, բայց տագնապը մեծ էր: Աշխարհագրությունը ենթադրում էր դաշտային աշխատանքներ՝ հետազոտություններ. արդյո՞ք կկարողանար: «Ես երագում էի գնալ, նստել, օրինակ, քիմիայի դասերին ու սովորել: Եթե արթրիտ չունենայի, ես հազար ու մի բան կսովորեի:

Ինչ-որ բան անելու համար ես մշտապես օգնության կարիք ունեի, ասենք սնունդ ընդունելիս կամ բնական կարիքները հոգալիս

վերջոյթներս փքված էին ու կարմրած, ասես եռում էին ներսից, իսկ վատագոյն օրերին ես չէի կարողանում անկողնուց վեր կենալ: Մշտական հոգնածություն, մշտական ցավեր: Սա է արթրիտը, ու ես սովորեցի ցավի հետ ապրել»:

Ջազմինը դարձավ հրաբխագետ: Դեռ փոքր ժամանակվանից նրա պապիկը սիրում էր պատմել իր ծննդավայրի՝ Կարիբյան ծովի կղզային պետություններից մեկի՝ Սենթ Վինսենթի ու Գրենադինների պատմություններից: Մարդիկ այդտեղ ապրում են հրաբուխների կողքին: Մինչև հիմա էլ նրա հարազատներից շատերն ապրում են այնտեղ ու հարևանություն անում հրաբխե լեռներին:

Այսօր դոկտոր Ջազմինն ինքն է դասավանդում համալսարանում, նա պատմական և սոցիալական հրաբխագետ է, համատեղում է մարդաբանությունը, պատմական աշխարհագրությունը, սոցիալական հոգեբանությունը, բնական աղետների կառավարելիությունը՝ հասկանալու համար, թե ինչպես են մարդիկ ապրում հրաբխային միջավայրում: Ջազմինը նաև ուսումնասիրում է համակարգչային խաղերում հանդիպող հրաբուխների առկայությունը:

Նա հաշմանդամություն ունեցող առաջին կին հրաբխաբանն է՝ ուսումնասիրող հրաբուխները տարբեր գիտությունների համատեքստում:

Ջազմինն առաջին սևամորթ կինն էր, որը 2021 թվականին արժանացավ Լոնդոնի Երկրաբանական հանրության բարձրագույն՝ Նախագահի մրցանակին:



Քաղինա Կոֆա

Ճնվ. 1991 թ.

Քաղինան արմատներով Ջամայկայից է: Ամուսնանալուց հետո նրա ծնողները որոշում են տեղափոխվել Անգլիա, ու հարավային Յորքշիրում ծնվում է կենսուրախ ու վազվզան մի աղջնակ: Ընտանիքը մեծ էր, հայրն ու մայրը երկրորդ անգամ էին ամուսնանում ու առաջին ամուսնությունից ունեին երեխաներ: Քաղինային բոլորը սիրում էին ու երես տալիս, իսկ նա պաշտում էր իր շնիկին՝ Մինիին, ու հայտարարում, որ չի կարող ապրել առանց նրա:

Մայրը պատմում է. «Մեկ տարեկան չկար, բայց իր պատլիկ հեծանիվով այնպես էր վարգում աջուձախ, որ շփոթվում էինք: Ու անընդհատ ընկնում էր, ծնկները հա քերծված էին ու վերքոտ: Ամեն անգամ մտածում էինք՝ ըհը, էլ չի ուզենա հեծանիվ քշել, բայց չէ, նա թափ էր տալիս շորերն ու նորից բարձրանում, ընկճվել չուներ»: Փոքր տարիքից նա հանդես էր գալիս թիմային մարզաձևում, խաղում էր հոկեյ, նաև պարում էր ժամանակակից պար, ջազային ու բալետ: Պարապում էր թեթև ատլետիկա, մի խոսքով՝ սպորտը նրա տարերքն էր, նա սիրում էր մրցել ու իր ամենասիրած արտահայտությունն էր՝ կգան հետս մրցես:

Տասնհինգ տարեկանում նրա հոկեյի մարզիչը խորհուրդ է տալիս փորձել ուժերը մեծ սպորտում: Երեք տարի անընդմեջ Քաղինան մրցում էր շատ հաջող ու պարբերաբար ոսկե մեդալների արժանանում:

2007 թվականից նա սկսում է մրցել 60 մ և 200 մ վազքուղում՝ անընդմեջ գրանցելով անձնական ռեկորդներ: 2014 թվականին

21-ամյա Քաղինային արագորեն հասցնում են հիվանդանոց: Նա կաթված էր ստացել. մարմնի մի կողմը պարալիզացված էր: Կյանքը նրան մարտահրավեր էր նետել, ու ծնողները կանգնեցին աղջկա կողքին. ընտանիքն ամեն կերպ փորձում էր սաստարել մարզիկին: Երկու անչափ երկար ամիս է տևում նրա վերականգնվելը, մինչ լիարժեք բուժվում է ու վերադառնում սպորտ՝ ակնկալիքով, որ պիտի նոր արագություններ հաղթահարի, բայց... Աջ ձեռքը չի ենթարկվում, իսկ հետո նաև աջ ոտքն է սկսում քարանալ ու անզգայանալ: Կասկածում են կաթված, պարզվում է՝ ցրված սկլերոզ է: Քաղինասն չի ընկճվում ու որոշում է անկախ ամեն ինչից շարունակել լինել սպորտում և մնալ սպորտում:

Որպես թեթևատլետ՝ նա շարունակում է հանդես գալ նաև հեծանվասպորտում՝ սահմանելով աշխարհի ռեկորդ, պաշտպանելով այն Տոկիոյում ու նվաճելով նոր մեդալներ: Բայց Քաղինասն դրանով չի սահմանափակվում: Նա երկու բարձրագույն կրթություն է ստանում. Լիդսի համալսարանում գիտական կոչում է ստանում սպորտի բնագավառում, իսկ Մանչեստրի համալսարանում՝ ֆիզիոթերապևտի որակավորում: Ի հպարտություն իր ընտանիքի ու բոլորի՝ նա շարունակում է իր երազանքները իրականացնել՝ մնալով այն նույն կենսուրախ աղջիկը, որ չէր վախենում հեծանվից ընկնելուց ու վերքոտվելուց: Քաղինայի վստահությունը վարակիչ է և օրինակելի, ու ինչպես ինքն է սիրում կրկնել. «Ես չեի ուզում տրվել իրավիճակին: Իմ կյանքը կտրուկ փոխվեց, բայց ես չեի ուզում, որ դրա պատճառով իմ երազանքներն ու նպատակները փոխվեին:

Այն ամենը, ինչ քեզ պետք է հաջողության հասնելու համար, սիրտն է, կրքոտ ցանկությունը, վճռականությունն ու ինքդ քեզ վստահելը»:



#DisabledAndCute

Քիա Բրաուն

Ճնվ. 1991 թ.

Քիան ու Լիան ծնվեցին մեկ րոպեի տարբերությամբ, ժամանակից չորս ամիս շուտ: Քույրիկներն անչափ պատլիկ էին ու թեթևաքաշ: Բժիշկները ծնողներին զգուշացնում են, որ շատ հնարավոր է՝ աղջնակները երբեք չքայլեն, չխոսեն, չտեսնեն ու դպրոց չկարողանան գնալ: Բարեբախտաբար բժիշկները սխալվում են: Քիան, Լիան ու նրանց մեծ եղբայր Էրիկն ամենաանուշ մանկությունն են ապրում: Զարմիկների հետ միասին անվերջ խաղում էին այգիներում ու տատիկի բակում, վազվզում էին ցողաթաթախ խոտերի միջով, երեկոյան վերադառնում էին տուն՝ ծիծաղը շուրթերին, խոտի բույրը հագուստներին կաած: Քիան մեծանում էր՝ վստահ, որ մտքին ինչ դնի, կստացվի: Ծնողները տարբերություն չէին դնում երեխաների միջև, մինչև որ աղջիկները գնացին դպրոց: Լիան սպորտային էր, ձիգ ու սիրուն, առողջ մարմնով: Ի տարբերություն երկվորյակ քրոջ՝ Քիան ծնվել էր ուղեղային կաթվածով: «Ես նկատեցի աչքերը, որ հետևում էին ինձ, մինչ ես կաղալով անցնում էի դասարանով: Ես գնացի գուգարան ու նայեցի հայելու մեջ: Մինչ այդ ես չգիտեի, որ տարբեր եմ, հաշմանդամություն ունեմ, կաղալով եմ քայլում: Ինձ թվում էր՝ ես սովորական աղջիկ եմ, ու ես լաց եղա: Դպրոցական տարիները լի էին հարցականներով ու անզգուշությամբ, անհարմարությամբ, որ զգում են դեռահասները՝ փորձելով հասկանալ, թե ով եմ իրենք: Ու մինչ դասընկերներս փորձում էին գտնել իրենց ես-ը, իմ հերթին ես էլ տազնապում էի, թե ով եմ ես: Ես ո՛չ սիրուն էի, ո՛չ հայտնի, ո՛չ սպորտային: Ես նման չէի իմ երկվորյակ քրոջը:

Ամեն գիշեր աղոթում էի, որ դառնամ Լիայի պես «երկարատ» ու բոյով, առողջ ձեռուտով, ու ամեն առավոտ զարթոնում էի իմ հին մարմնի մեջ ու նեղանում բոլոր հնարավոր աստվածներից: Եվ մինչ իմ դասընկերները սիրահարվում էին ու պատրաստվում ավարտական հանդեսի երեկոյթին, ես շարունակում էի նոր մարմին երագել: Ես սիրահարվում էի, ինձ չէին սիրահարվում: Փոխարենը տղաները մոտենում էին ինձ ու ասում. «Քույրդ շատ լավիկն ա, լսիր, ամուսնացած չէ, չէ՞»: Ես նախանձում էի ու ատում քրոջս ու վերածվում կանաչաչ հրեշի»: Դպրոցից հետո քոլեջն էր: «Ես կարծում էի՝ անճոռնի ճուտիկից կվերածվեմ կարապի, կհանդիպեմ մի տղայի, որ կկարծի, թե ես քրոջս պես սիրուն եմ, հմայիչ ու հումորով: Իհարկե, ես նման տղայի չհանդիպեցի»: Փոխարենը Քիան սկսում է ուսումնասիրել աշխատասեր, քաջ ու անկոտրում կամքի տեր կանանց պատմությունները. «Հանկարծ ես գլխի ընկա, որ կանայք ավելին են, քան իրենց մարմինը, արտաքին տեսքը, ինչպես որ ես, ու ամաչեցի քրոջիցս անտեղի ատելությանս համար, կռիվների...: Բիյոսեն շատ լավ է ասել «Ուրվականում»՝ «Կատարելությունն այնքան... մմմ...»: Եվ նա նկատի ունի, որ կատարելությունն այնքան ձանձրալի բան է, գերագնահատված ու ժամկետանց»:

Քոլեջն ավարտելուց հետո Քիան չկարողացավ աշխատանք գտնել. մերժումներին թիվ չկար, բայց նա չվհատվեց: «Ես երկուհազարականների սերնդից էի ու որոշեցի օնլայն հարթակում բարձրաձայնել ինձ պատահած խնդիրների մասին»:


Նա առաջինն էր, որ թվիթերում տարածեց #DisabledAndCute (հաշմուսիքունիկ) հեշթեգը, իսկ նրա գիրքը՝ «Միբունիկը. կյանքի մասին, փոփ արվեստի, հաշմանդամության և այլ պատճառների մասին սիրահարվելու համար ինձ», դարձավ ամենավաճառվածը: Քիան կասկածի տակ դրեց զվարճանքի ինդուստրիայի վերաթողարկումները՝ հայտարարելով. «Իսկ պարբերաբար շոուներն ու սերիալները վերաթողարկելու փոխարեն ինչո՞ւ չփորձել թույլ տալ

սներին ու մուգ մաշկ ունեցողներին կարծիք հայտնել այն նոր շոու-ների մասին, որտեղ մենք կանք»:

Քիան չվախեցավ խոսել մարմնի խնդիրներից, գեղեցկության, սիրո, ֆիզիկական ցավի մասին, սևամորթ և ուղեղային կաթված ունեցող կնոջ մասին: Քիան այունակներ ու բլոգներ է վարել և վարում մի շարք հեղինակավոր ամսագրերի համար, նաև ֆիլմերի ու սերիալների սցենարիստ է, համագործակցում է Ներֆիլիքսի հետ, պարբերաբար հայտնվում է անվանի թերթերի ու ամսագրերի տարվա ցուցակներում՝ ամեն անգամ նորից ու նորից ապացուցելով, որ «իմ սև մարմինը՝ առողջական խնդիրներ ունեցող, բնավ այն չէ, ինչ դու տեսնում ես քո էկրանին», նա կարող է և անում է ավելին:

Նա ասում է՝ լավագույն հարցը ոչ թե «Ինչպե՞ս պետք է բուժել հաշմանդամությունը»-ն է, այլ «Ինչո՞ւ մենք չենք կարողանում ընդունել մարդկանց այնպիսին, ինչպիսին նրանք են»:

Այսօր Քիա Բրաունը պայքարում է իր իրավունքների համար, զբաղվում սիրած գործով, գրում է գրքեր, սցենարներ, նկարահանվում է ու ոգևորում դժվարություններ ունեցող մյուս բոլոր մարդկանց՝ դառնալով խիզախության ու ոգևորության ֆանտաստիկ օրինակ:



Ալեքսանդրա Կուտաս

Ճնվ. 1993 թ.

Աշխարհում առաջին կին մոդելը, որ ճեմահարթակ բարձրացավ անվասայլակով, ուկրաինացի Ալեքսանդրա Կուտասն է:

Ալեքսանդրան ծնվեց Դնեպրում: Ծննդաբերության ժամանակ բժիշկների սխալի հետևանքով ողնաշարի անվերականգնելի վնասվածք ստացավ: Նա անվասայլակով է տեղաշարժվում: Բայց անհիվները, ինչպես մարդիկ հաճախ ընկալում են, ոչ միայն չխանգարեցին աշխույժ ու կայտառ աղջկան, այլև օգնեցին սլանալ իր սիրած գործերի ու մտքերի հետևից: Նա պաշտում էր լրագրությունը և դեռ դպրոցական տարիքից զբաղվեց լրագրությամբ. տարբեր ստեղծագործ մարդկանցից հարցազրույցներ էր վերցնում, ծրագրեր էր կազմակերպում, մասնակցում փառատոների, իսկ մի օր էլ ՅՈՒՆԻՍԵՖ-ը հենց Ալեքսանդրային ընտրեց որպես լավագույն լրագրող, և Կուտասը սլացավ Նյու Յորք բաղձալի մրցանակի հետևից: Այստեղ նրան գրավեց մի ուրիշ ոլորտ՝ հոգեբանությունը: Պատանեկան հետաքրքրասիրությունը վերաճեց մասնագիտական սիրո, և թեև համալսարանը հարմարեցված չէր ներառական կրթության համար, Ալեքսանդրան միայն ու միայն իր համառության ու շատ ջանքերի շնորհիվ հասավ իր ուզածին: Համալսարանն ավարտեց կարմիր դիպլոմով: Հենց այդ ժամանակ էլ երկրի արևելյան հատվածում զինված գործողություններ էին սկսվել, ու Դնեպր էին բերում վիրավոր զինվորների: Շուրջ երեք ամիս Ալեքսանդրան

զինվորական հոսպիտալում կամավոր աշխատեց: Դժվար ու բարդ շրջան էր, որի մասին Ալեքսանդրյան նախընտրում է քիչ խոսել. հիշողությունները ցավոտ են:


Կուտասը սկսում է հասարակական ակտիվ գործունեություն վարել, դառնում է Դնեպրի քաղաքապետի խորհրդականը, բայց շուտով աղջկա հետաքրքրությունները հասցնում են նրան սքանչելի նոր աշխարհ՝ նորաձևություն: Նրան ոգևորել էին Ալեքսանդր Մկրտիչի աշխատանքները: Հարցազրույցներից մեկում կիսվում է. «Ցուցադրություններից մեկի ժամանակ մոդելները պրոթեզով էին: Ես պարզապես ցնցված էի: Նայում էի ու հասկանում, որ աշխարհը փոխվել է, ու նաև իմ ժամանակն է եկել:

Մինչ այդ ամենասարսափելի բանն ինձ համար նորաձևության աշխարհում անպատեհ ու անտեղի լինելն էր: Իմ գործունեությամբ ես ուզում եմ ապացուցել, որ ես պրոֆեսիոնալ եմ և ոչ թե սոցիալական պրոյեկտ»:

Ալեքսանդրյան դարձավ հաշմանդամություն ունեցող առաջին ֆոտոմոդելը Ուկրաինայում: Նա մասնակցում է տասնյակ ցուցադրությունների, հայտնվում ամսագրի շապիկներին, ինչպես օրինակ՝ ուկրաինական Վոզի, նկարահանվում է ֆիլմերում ու գովազդներում, համագործակցում է արտասահմանյան մի շարք խոշոր կազմակերպությունների հետ: 2021 թվականին նա ներկայացավ իր ստեղծած հագուստի հավաքածուով՝ նախատեսված հաշմանդամություն ունեցող մարդկանց համար:

«Այլևս կարիք չկա տնային պայմաններում ձևափոխել խանութից գնված նոր իրերը: Մենք ուզում ենք ցույց տալ, որ հաշմանդամություն ունեցող անձինք նույնպես կարող են հագնվել հարմարավետ ու նորաձև, ու հագուստը կարող է ստեղծված լինել՝ հարմար սայլակ օգտագործող, տեսողական հաշմանդամություն ունեցող մարդկանց և այլոց համար»:

Այժմ Ալեքսանդրյան ապրում է Լոնդոնում ամուսնու և դստեր հետ և պնդում է, որ սիրած գործով չգրադվելն ամենամեծ դավաճանությունն է, և այն, ինչ պետք է դու անես, քեզնից բացի ոչ ոք չի անելու:



Մեդլին Ստյուարթ


Ճնվ. 1996 թ.

Մի օր՝ ութ տարի առաջ, Ռոզան Ստյուարթը որոշեց իր դստեր՝ Մեդլինի հետ այցելել իրենց փոքրիկ ավստրալիական քաղաքում կազմակերպված նորաձևության ցուցադրությանը: Առաջին անգամ տեսնելով բեմահարթակ բարձրացող մոդելներին՝ Մեդլինը խանդավառվեց նոր երազանքով: Մինչ այդ աղջիկը փափագում էր ֆուտբոլ խաղալ ու չէր հասկանում, թե ինչու իրեն թույլ չեն տալիս խաղադաշտ դուրս գալ մյուս աղջիկների հետ: Բանն այն է, որ Մեդլինը ունի Դաունի համախտանիշ, և մյուս երեխաները հաճախ պարզապես չէին ուզում խաղալ նրա հետ: Բայց այս անգամ իրավիճակն այլ էր. մոդել դառնալու համար անհրաժեշտ չէին թիմակիցներ: Մեդլինն անվերջ կրկնում էր. «Ման, ես մոդել»: Այո, Մեդլինն իր հասակակիցների նման չէ, նա միշտ գիտի՝ ինչ է ուզում և հաստատուն քայլերով գնում է դեպի իր նպատակը: Նա վստահ է իր ուժերին և ոչ մեկից, ոչ մի բանից երբեք չի վախենում:

Դստեր ցանկությանը հագուրդ տալու համար Ռոզանը կազմակերպում է իսկական նկարահանումներ. հրավիրում է լուսանկարչի, դիմահարդարի ու վարսահարդարի: Դաունի համախտանիշ ունեցող անձանց համայնքի օգնությամբ Մեդլինի անունից սոցիալաթակներում անձնական էջ է բացում: Մի քանի օրում լուսանկարները դիտում է մոտ յոթ միլիոն մարդ, դրանք տարածվելով հասնում են երկրագնդի մյուս ծայրը՝ վերատպվելով տասնյակ երկրներում՝ Ավստրալիայից մինչև Իսլանդիա, Անգլիայից մինչև Մեքսիկա:

Մեկ ամսվա ընթացքում Մեդլինին հրավիրեցին մասնակցելու Նյու Յորքի նորաձևության շաբաթին՝ դարձնելով այս համառավաստրալուհուն աշխարհում Դաունի համախտանիշ ունեցող առաջին պրոֆեսիոնալ մոդելը: Հետո հետևեցին բազմաթիվ այլ նկարահանումներ ու ցուցադրություններ՝ Փարիզ, Լոնդոն, Դուբայ, Շանհայ: Միակ մարդը, ով չէր ապշում այս հանկարծահաս հաջողությունից, հենց Մեդլինն էր, որովհետև նա ամեն օր արթնանում էր՝ համոզված լինելով, որ անթերի է ու բացառիկ:

Անխոս, Մեդլինը շատ հաջողակ է, քանի որ ունի այսպիսի մայր: Շատ տարիներ առաջ, երբ դուստրը ծնվեց Դաունի համախտանիշով, բժիշկները խորհուրդ տվեցին նրան հրաժարվել երեխայից: Ռոզանը լաց եղավ երեք օր, հետո բռնեց դստեր ձեռքն ու առաջ քայլեց: Դաունի համախտանիշն աշխարհին հայտնի ամենահին գենետիկ խախտումներից է: Այսօր մեր կողքին ապրում է Դաունի համախտանիշով գրեթե 7 միլիոն մարդ, որ կազմում են մեր բնակչության անբաժանելի մի մասը, բայց շարունակում են մնալ անտեսված ու մեկուսացած: Մեդլինը կոտրում է մեկուսացնող այդ արգելքները, դռներ է բացում ու, կարևորը, իրազեկում է անտեղյակներին: Նա փոխում է գեղեցկության ընդունված պատկերացումները, ցույց է տալիս՝ ցանկացած կին կարող է լինել մոդել՝ անկախ իր մարմնի ձևից, չափսից: «Մեդլինը գույներ է հաղորդում աշխարհին», - ասում է նրա մայրն ու, անշուշտ, չի սխալվում:



Զակյա Խուդադադի

Ճնվ. 1998 թ.

Ահաբեկչությունն այս դարի ամենամեծ արհավիրքներից մեկն է: Սարսափելի է պատկերացնել, բայց մեր ժամանակներում դեռ կան գինված խմբեր, որոնք զենքի ուժով ստիպում են մյուսներին ենթարկվել, գրկում են իրավունքներից ու ազատություններից: Արգելում են կանանց կրթություն ստանալ, տնից դուրս գալ առանց տղամարդու ուղեկցության, աշխատել, սպորտով զբաղվել, երգել կամ գիրք կարդալ:

Թալիբների ծայրահեղական խմբավորումը երկար տարիներ ահ ու սարսափի մեջ էր պահում Կենտրոնական Ասիայի մի շարք երկրներ:

Թեև գերիզոր պետություններն արդեն երկար ժամանակ փորձում էին պայքարել ծայրահեղական խմբերի դեմ, օգնության ձեռք մեկնել տեղի բնակչությանը, ու հաղթանակը մոտ էր, բայց 2021 թվականի ամռանը թալիբներն իրենց ձեռքն են վերցնում Աֆղանստանի պետության դեկր: Եվ երկիրը խորասուզվում է խավարի մեջ: Խուճապի մատնված աֆղանները օգնության աղերսներով շտապում են օդանավակայան, որպեսզի առանց վայրկյան կորցնելու փախչեն երկրից:

Սկսվում է աննկարագրելի գաղթ:

Իսկ այդ ընթացքում աշխարհի մյուս երկրները պատրաստվում էին Տոկիոյում անցկացվելիք պարաօլիմպիական խաղերին:

23-ամյա Զակյա Խուդադադին մասնակցելու էր այդ հեղինակավոր մրցաշարին: Ֆիզիկական հաշմանդամությունն ու միջավայրային ծանր պայմանները երբեք չէին կանգնեցրել աղջկան զբաղվել սպորտով և կատարելագործել իր հմտությունները: Նա Աֆղանստանում թեկվանդո մարտարվեստով զբաղվող առաջին կին և հաշմանդամություն ունեցող առաջին մարզիկն է:

Զնայած արդեն ձեռք բերած նվաճումներին ու մի շարք հաղթանակներին՝ Զակյան, ինչպես յուրաքանչյուր մարզիկ, երագում էր պարասօլիմպիական խաղերում հանդես գալ իր հայրենիքի դրոշի ներքո: Բայց նոր կառավարությունը շտապել էր արգելել աֆղան մարզիկներին մասնակցել միջազգային մրցաշարերին:

Շատուշատ քաղաքական գործիչների, իրավապաշտպանների, ուսուցիչների, դերասանների պես Զակյան նույնպես ստիպված էր ապաստան գտնել: Իր թաքստոցից նա թախսանձագին տեսաուղերձ ձայնագրեց՝ դիմելով «բոլոր երկրների ղեկավարներին ու կանանց իրավունքները պաշտպանող բոլոր կազմակերպություններին, աշխարհի բոլոր կանանց՝ թույլ չտան զրկել աֆղան մարզուհուն իր իրավունքներից»:

«Ես շատ եմ տառապել և չեմ ուզում, որ իմ պայքարն ապարդյուն լինի: Օգնե՛ք ինձ»:

Զակյայի ձայնը հասավ շատերի ականջներին: Մի խումբ մարզիկներ ու իրավապաշտպաններ Կանադայից, Իտալիայից, Իսպանիայից, Ավստրալիայից միավորվեցին և մշակված գաղտնի ծրագրի միջոցով դուրս բերեցին Զակյային Աֆղանստանից: Մարդկային բարության շնորհիվ Զակյա Խուդադադին մասնակցեց 16-րդ պարասօլիմպիական խաղերին:

Այսօր Զակյան ապաստանել է Ավստրալիայում՝ հուսալով մի օր վերադառնալ հայրենիք՝ իր հարազատների մոտ, որտեղ կկա-

րողանա ազատորեն զբաղվել սպորտով, և ոչինչ չի սպառնա նրա կյանքին:

Ոմանք Ջակյային համարում են վախկոտ, որ փախավ իր երկրից, ոմանք էլ անվանում են ստախոս, որ պարզապես լավ կյանք էր փնտրում: Բայց այս բոլոր մարդիկ դատում են՝ իրենց տաքուկ ու ապահով տներում նստած: Նրանք չեն պատկերացնում՝ ինչ է նշանակում լինել մարզիկ ավանդապաշտ մուսուլմանական երկրում, այն էլ միակ կին մարզիկը իր սպորտաձևում, ինչ է նշանակում տարիներով ինքնուրույն ճանապարհի հարթել դեպի քո երազանքը, հետո մեկ ակնթարթում կորցնել ամեն ինչ, վտանգել սեփական կյանքը, քանի որ դեռ պատրաստ չես հրաժարվել նպատակներիցդ:

Հարցրե՛ք Ջակյային, նա կպատմի ձեզ այս ամենի մասին:



ՆուշիՆ Մուստաֆա

Ճնվ. 1999 թ.

Էլիսոն դե Ֆորժին շատերը իրավամբ համարում են մեր ժամանակների ամենանվիրյալ իրավապաշտպաններից մեկը: Նա արդար էր, անվախ, գիտեր ինչպես ապրումակցել և օգնության ձեռք մեկնել թույլերին, անօթևաններին, մոռացվածներին: Համեստ հետազոտողի գործը Էլիսոնին տեղափոխեց իր հայրենիքից շատ հեռու՝ Աֆրիկա, որտեղ նա իր աչքով տեսավ տեղաբնիկների ծանր կյանքն ու նրանց հանդեպ կատարվող դաժանությունները: Դե Ֆորժի ջանքերի շնորհիվ հզոր պետություններն ու կազմակերպությունները, որ աչք էին փակում Աֆրիկայում անվերջանալի բռնությունների վրա, վերջապես սթափվեցին: Արդյունքում պատերազմի արհավիրքներից փրկվեցին բազում աֆրիկյան ընտանիքներ, իսկ ոճրագործները կանգնեցին դատարանի առաջ: Բայց այս պատմությունը Էլիսոն դե Ֆորժի մասին չէ. այն մեկ այլ խիզախ աղջկա մասին է:

2009 թվականից ի վեր Էլիսոն դե Ֆորժի անվան մրցանակը տրվում է այն անձանց, որոնք վտանգել են իրենց կյանքը հանուն մյուսների արժանապատվության ու իրավունքների: Այս անվախ ակտիվիստները ջանում են ստեղծել մի աշխարհ, որը զերծ է հալածանքներից, բռնությունից ու խտրականությունից: Տասը տարի անց այս մրցանակին է արժանացել Նուշին Մուստաֆան:

Տարիներ առաջ Սիրիայի Հանրապետությունում սկսված ռազմական գործողությունները բերեցին ոչ միայն ավերածությունների ու բազում կորուստների, այլև աննկարագրելի չափերի հասնող

գաղթի, որը, ցավոք, առ այսօր ոչ մի բույն կանգ չի առել: Հուսալքված մարդիկ փախչում էին հանկարծահաս պատերազմից՝ գնալով դեպի անհայտը, ենթարկվելով անմարդկային չարչարանքների ու փորձությունների՝ հուսալով, որ հեռվում իրենց սպասում է խաղաղություն, հավասարություն ու արդարություն: 2014 թվականի հունվարին ճանապարհ ընկավ նաև 16-ամյա Նուջինը: Նա 5600 կիլոմետր տարածությունը՝ Սիրիայից մինչև Գերմանիա, անցավ իր երկաթե անվասայլակը քշելով: Այդ պահից ի վեր նա դարձավ փախստականների ու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ակտիվ պաշտպան, ով պատմում է իր պատմությունը, որպեսզի փոխի մարդկանց մտքերն ու շարժի նրանց սրտերը:

Նուջինը ծնվել էր մանկական ուղեղային կաթվածով, և տեղաշարժվելու համար նրան միշտ հարկավոր է եղել ինչ-որ մեկի օգնությունը: Մինչև պատերազմն էլ աղջկա կյանքը քաղցր չէր: Ընտանիքն ապրում էր առանց վերելակի բարձրահարկ շենքում, և աղջիկն անմատչելիության պատճառով իր անվասայլակով շատ հազվադեպ էր դուրս գալիս բնակարանից: Չուներ ընկերներ, մյուս երեխաների պես չէր խաղում բակում: Իր հայրենի Հալեպում նա երբեք չէր հաճախել դպրոց, փորձել էր ինքնուրույն կրթություն ստանալ, անգլերեն էլ ամերիկյան սերիալներ նայելով էր սովորել:

Երբ հեռվում լավող կրակոցները վերածվեցին մեծ պատերազմի, Մուստաֆաների ընտանիքը հազարավոր հայրենակիցների պես փախավ Թուրքիա: Այնտեղից էլ արդեն Նուջինն ու իր քույրը սկսեցին 16 ամիս շարունակվող ճամփորդությունը՝ մեկ նավով, մեկ ավտոբուսով, մեկ ոտքով, իսկ Նուջինի դեպքում՝ իր անվասայլակը քշելով: Նրանք, կտրելով Միջերկրական ծովը, հասան Հունաստան, այնուհետև, դժվարություններ հաղթահարելով, անցան Մակեդոնիան, Սերբիան, Հունգարիան և վերջապես ժամանեցին Գերմանիա: Անտեսելով չարքաշ ճանապարհը ու անմարդկային նվաստացումը, որին աղջիկները բախվում էին ամեն օր, Նուջինը միշտ պատրաստական պատասխանում էր լրագրողների հարցերին,

բողոքում էր գերիզոր տերությունների անգործությունից, փախստականների իրավունքների ոտնահարումից: Ապաստան գտնելով Գերմանիայում՝ Նուջինը հասկացավ, որ չի կարող լռել ու չշարունակել իր բողոքը: Եթե նույնիսկ հիմա նա գտել է խաղաղություն, կրթության ու բարեկեցիկ կյանքի հնարավորություն, միևնույնն է, աշխարհում դեռ կան շատերը, ովքեր ճանապարհին են, անտուն են և հուսահատ: Նա սկսեց խոսել էլ ավելի բարձր՝ ելույթներ ունենալ, պատմել փախստականների փորձությունների մասին, կոչ անել աշխարհի գերիզորներին արձագանքել թույլերի օգնության աղերսներին: Նուջինի ճանապարհորդությունը պարզապես Սիրիայից Գերմանիա չէր, նա ավելի երկար ճամփա է անցել՝ բարձրահարկ շենքում բանտարկված լինելուց մինչև կարևոր բանակցություններ ու թեժ քննարկումներ հեղինակավոր կազմակերպությունների հետ: Նուջին Մուստաֆան դարձավ հաշմանդամություն ունեցող առաջին անձը, ով մասնակցեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ճեպագրույցին: Այսօր նա այն երիտասարդ կանանցից է, ով կերտում է մեր ապագան, փորձում է ուղղել այն սխալները, որ նախորդ սերունդները երկար տարիներ անտեսել են:



ՆԵՄՃԱ ՖԱԿԻԱ

ՃՆԱԿ. 2000 թ.

Հազարամյակներ առաջ, երբ նախնադարի մարդը գլխի ընկավ, որ հագուստը կարող է պաշտպանել ցուրտ քամուց կամ կիզից արևից, վտանգավոր բնությունից կամ գիշատիչ կենդանիների հարձակումից, նա սկսեց ստեղծել տարբեր ձևերի ու տարբեր նյութերից պատրաստված շորեր: Դրան զուգահեռ մարդը սկսեց մտածել հագուստի գեղագիտական հատկանիշների մասին: Այդ ժամանակներից ի վեր հանդերձանքը եղել է մարդու արտաքին կերպարի անբաժան մասը:

Յուրաքանչյուր դարաշրջան ստեղծում է մարդու արտաքին տեսքի իր իդեալը, գեղեցկության նորմերը, որոնք արտահայտվում են նաև հագուստի կառուցվածքի, չափաբաժինների, մանրուքների՝ կտորի, գույնի և այլնի համադրությամբ: Բայց նորաձևությունը, ցավոք, նաև խտրականություն թելադրող տարածք է: Եվ հարյուրամյակներ շարունակ հասարակությունից առանձնացվող խմբերը, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող մարդիկ, իրենց մաշկի վրա են զգացել անարդարության այդ բեռը:

147 սանտիմետրից պակաս հասակ ունեցող հասուն մարդիկ համարվում են գաճաճ: Դրա պատճառները տարբեր են՝ ժառանգականից մինչև բժշկական խնդիրներ: Այս մարդկանց ոսկրային աճը միջինում հասնում է 122 սանտիմետրի: Ուրիշ ոչ մի հատկանիշով նրանք չեն տարբերվում մյուսներից: Սակայն նրանք մշտապես եղել են ծաղրի, վիրավորանքի ու նվաստացնող վարքի թիրախ, քանի որ մեր աշխարհը ներառական չէ: Այն կառուցված է հաշման-

դամություն չունեցող մարդկանց համար: Ըստ այդմ՝ այն փոխելու և վերակառուցելու անհրաժեշտությունն այլևս անհնար է անտեսել:

«Իմ ճանապարհը չավարտվեց, երբ կանգ առավ իմ աճը», - ասում է Նեսմա Յահիան:

Նա գաճաճ է և իր հասուն կյանքի ողջ ընթացքում բախվել է շատերիս համար անհասկանալի խնդիրների: Օրինակ՝ նա չի կարողանում հարմար հագուստ գնել: Այդպիսի հագուստ պարզապես գոյություն չունի: Նորաձևության հարյուրավոր տներ ու ապրանքանիշներ ոչ մի անգամ չեն մտածել հանդերձներ կարել գաճաճ կանանց համար: Անհնար է զգեստներ գնել նաև մանկական բաժնում, քանի որ այս կանայք ունեն ավելի փարթամ մարմին, քան երեխան: Բայց հագնվել պետք է: Ու Նեսման, որ Եգիպտոսի առաջին գաճաճ մոդելն է, հիմնադրեց իր նման կանանց համար առաջին նորաձևության տունը: Առաջին հավաքածուն, որ անվանել է «Զեփյուտ», կարող են կրել բոլոր տարիքի գաճաճ կանայք: Այն իր մեջ ներառում է բազմերանգ զգեստներ, մուսուլմանական ավանդական գլխաշորեր՝ հիջաբներ, նախշազարդ բլուզներ, ժանյակապատ կիսաշրջազգեստներ և այլ դիզայներական հանդերձներ: Այստեղ տարբեր ճաշակի տեր կանայք կարող են գտնել իրենց սրտով զգեստավորումներ:

Ամբողջովին ինքնուրույն, առանց որևէ մեկի աջակցության ստեղծված հավաքածուն շատ արագ մեծ հաջողության հասավ: Այսօր գործը եռում է, հավաքածուները վաճառվում են, իսկ Նեսման չի էլ մտածում կանգ առնելու մասին: Նա ծրագրում է դուրս գալ միջազգային շուկա, վաճառել իր զգեստները Եգիպտոսից դուրս, քանի որ այնպիսի պարզ և անհրաժեշտ բանը, ինչպիսին հագուստն է, 21-րդ դարում չի կարող լինել անմատչելի:

Բովանդակություն

<i>Մքանչելի նոր աշխարհը</i>	4
Հարիեր թարմն.....	11
Սառա Բեռնար	17
Թիլի Ասթոն	23
Ռոզա Մեյ Բիլինգհըրսթ	27
Հելեն Քելեր.....	31
Արքայադուստր Էլիս Բաթենբերգ.....	37
Անետ Քելերման.....	41
Նելլի Զարել Վիլհայթ.....	45
Դորոթեա Լենգ.....	49
Ֆրիդա Կալո	53
Դորոթի Հոջքին.....	59
Նուր Ինայաթ Խան	63
Մերի Փաթիսերիլ Վերգիզ	69
Մարիա դա Պենյա	73
Վիլմա Մանկիլեր	77
Քիթի Օ՛Նիլ	83
Թեմիլ Գրանդին	87
Զոուի Կոպլովից.....	91
Շերիլ Մերի Վեյդ.....	95
Մերիլին Հեմիլթոն.....	99
Էվելին Գլենի	103
Էիկո Կիմուրա.....	107
Մարլի Մաթլին.....	111
Անա Պելանգ Նարվանգ.....	115
Թեմի Դաքուորթ	119

Լոիս Քրթիս.....	123
Շաֆար Փավել.....	127
Քլեր Քանինգհեմ.....	131
Կարինե Գրիգորյան.....	137
Զարուհի Բաթոյան.....	141
Էմի Փրդի.....	145
Անխելա Բաչիյեր.....	149
Հերմոն և Հերոդա Բրեյն.....	153
Ջեսիքա Կոքս.....	157
Քսենիա Բեգուզլովա.....	161
Վարդինե Գրիգորյան.....	165
Քելի Նոքս.....	169
Ջենիֆեր Բրիքեր.....	173
Հարեն Գիրմա.....	177
Սուսանա Ռոդրիգեզ.....	181
Արունիմա Սինհա.....	185
Մանասի Ջոշի.....	189
Ջազմին Սքարլետ.....	191
Քադինա Կոքս.....	195
Քիա Բրաուն.....	199
Ալեքսանդրա Կուտաս.....	203
Մեդլին Ստյուարթ.....	207
Զակյա Խուդադադի.....	211
Նուշին Մուստաֆա.....	215
Նեանա Յահիա.....	219

Հասմիկ Սիմոնյան
Արմինե Դանիելյան

Հաշմանդամություն ունեցող
50 կանայք,
որ փոխեցին աշխարհը

Խմբագիր՝ Գոհար Գասոյան
Սրբագրիչ՝ Մարիամ Վարդանյան
Համակարգչային էջադրումը՝ Նառա Վարդանյանի
Շապիկը՝ Լուսինե Ալավերդյանի

Նկարագարողներ՝
Աննա Գրիգորյան
Էդիտա Մուրադյան
Մարիամ Բաղրամյան
Մարիամ Դավիթավյան
Մարիաննա Հովհաննիսյան